









ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՕՐԵՆՎ

ԵՒ ԸՆԴՀԱՅՆՈՒՄ ԿԵՆՈՒՅՔ

ՈՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՈՒԽՏԻՆ

ԳԱՂԴԻՈՅ

ԹԱՐԴՄԱՆԵԱՀ

Ի ԳԱՂԴԻՈԿԱՆ ԲՆԱԳՐԵՆ



Կ. ՊՈԼԻՍ

—1875—

THE HISTORY OF THE
TUDOR MONARCHS

BY JAMES GIBBON HOBSON

IN FIVE VOLUMES

PRICE, EACH VOLUME, ONE POUND.

THE FIRST VOLUME IS PUBLISHED.

THE OTHER VOLUMES WILL BE PUBLISHED
AS THEY ARE COMPLETED.

THE PUBLISHERS,
J. M. DODSLEY,
LONDON,
1830.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՕՐԵՆՔ

ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԸՆՈՒԹՅ

ՈՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՈՒԽՏԻՆ

ԳԱՂՂԱՑ



ՓԱՐԻԶ

Ի ԴԻՌԱՆԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒԳԱՐՈՒԹԵԱՆ

ՄԵՇԻ ԱՐԵԼԵԼԻՑ ԳԱՂՂԱՑ

ԳԱՏԵ ԳՈՐԾՈՑ 18

— 1874 —



ALLEGORIE DER HISTORISCHE

WISSENSCHAFTEN

VERSUCHSCHREIBUNG

ÜBER DIE VERSCHIEDENHEITEN

IN DEN

WISSENS-

CHAFTEN

AN DER UNIVERSITÄT

DER STADT HAMBURG

AN DER UNIVERSITÄT

HAMBURG

ՄԵԾ ԱՐԵՒԵԼՔ ԳԱՂՂԻՈՅ

ԳԵՐԱԳՈՅՆ ԱՏԵԱՆ

ԱԾՈԽ ԳԾՈՂԻՈՅ ԵՒ ԳԾՈՂԻԾԿԵՆ

ՍԵՓԱԿԱՆ ՈՒԹԵԱՆՑ



ՄԵԾՄԵՆԸՆԴՐՈՒԹԻՒՆ

ՕՐԷՆՔ

ԵՒ Բ'ՄԴՀԵՆՈՒՄ ԿԵՆՈՒՔ

ՈՐՄՆԱԴՐԱԿԱՆ ՈՒԽՑԻՆ

ԳԱՂՂԻՈՅ

— 1874 —

卷之三

卷之三十一

3. 有時會遇到「沒有資料」的問題，這時應該怎麼辦？

卷之三

583

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

卷之三

ԱՐԵՎԱՏՅԱՆ

Ուխտին մեծ խորհուրդը

Ցեսնելով Գաղղիս Մեծ Արևելից Ընդհանուր ժողովը 1871 ի նստին մէջ ըրած որոշումն , որով Սահմանադրութեան դ. և ե. Պրակներուն մէջ փոփոխութիւններ ընդունեց .

Ցեսնելով յիշեալ ժողովոյն այն որոշումն , որ Սահմանադրութեան յօդուածները քուէարկեալ արամադրութեանց համեմատ կարգադրելու գործն Ուխտին խորհրդացն կը յիշէ .


ԿՈՐՈՅԴ

Յուր 1.—Սահմանագրութեան նոր տրամադրութիւն՝ ներն, որոց բնագիրն 1871 ի Ընդհանուր ժողովը ատենագրութեան մէջ արձանագրեալ է, այս օրէն սկսեալ դորձադրելի կը հրատարակուին .

Յարգագիւղութեալ և կարգադրեալ Սահմանադրութիւնն , որոյ բնագիրն ամբողջապէս ներկայ որոշման կցեալ է , ամեն թղթակից Գործարանաց պիտի դրկուի .

Արարեալ և որոշեալ յատենի խորհրդոյն 'ի 23 սեպտեմբերի 1874 ։

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԽԱՐՄԱՆ ԱՆԴԻՆ ՓՈՒՏ ԱՆԴԻՆ ԱՆԴԻՆ ԱՆԴԻՆ
ՏԻՎԻ ՀԱՄԱԿԱՐԱՎՈՐ ԱՆԴԻՆ ԱՆԴԻՆ ԱՆԴԻՆ ԱՆԴԻՆ



ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՈՐՄՆԱԴՐԱԿԱՆ ՈՒԽՏԻՆ ԳԱՂՂԻՈՅ

ՀԱՍՏԱՏԵԱԸ

Ի ԱՇԽԱՄԵՐԵՐ ՀՆԴԱԾՎՈՒՄ ԺՈՂՈՎՀ:

ՄԵԽԻ ԱՐԵՒԵԼԻՑ ԳԱՂՂԻՈՅ

Ի ԳՈՒՄԱՐՄԱՆ 1865 ԱՄԻ , ԵՒ ՓՈՓՈԽԵԱԼ Ի ԳՈՒՄԱՐ-
ՄՈՒՆՍՆ 1871 , 1873 ԵՒ 1874 ԱՄՊՑ

ՊՐԵԲ ՇԱԾԿԵՐԻՆ

ԱԶԱՏ ՈՐՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՒՐ ԱԿՁԲՈՒՆՔԸ

ՅՈՒՈՒԱԾ +

Եղատ—Որմնադրութիւնը մարդասիրական վիլիսովիա-
յական և յառաջադիմական ընկերութիւն մ'է , և նպա-
տակ ունի իրեն ճշմարտութեան հետազօտութիւնը , տի-
եղերական բարոյականի , դիտութեանց և արուեստից ու-
սումն և բարեգործութիւն :

Իւր սկզբունքն են՝ Ըստուծոյ գոյութիւնը , հոգւոյ
անմահութիւնն և մարդկային համերաշխութիւնը . Խղճի
ազատութիւնն իւրաքանչիւր մարդու սեփական իրաւունք
կը համարի , և մէկը չմերժեր իւր հաւատքին համար »

— 2 —

Իւր նշանաբանն է՝ Ազատութիւն։ Հաւասարութիւն,
Նղբայրութիւն։

ՅՈՒԹԻԱԾ 2

Ազատ-Որմնադրութիւնն իւր բռնած բարձր դրեց շըր-
ջանակին մէջ՝ իւր ամեն մէկ անդամոց կրօնական հա-
ւատքն ու քաղաքական կարծիքները կը յարգէ ։ բայց
բացարձակապէս կարգելու իւր ժողովոց մէջ այն ամեն կը-
րօնական կամ քաղաքական հակածառութիւններն՝ որք
նպատակ կունենան այլ և այլ կրօնից վրայ վիճարանել,
կամ քաղաքական իշխանութեան գործեր և կառավարա-
կան այլ և այլ ձեւեր քննադատել։

Աըյիշեցնէ իւր բոլոր անդամակցաց, թէ իրենց առա-
ջին պարտականութիւններէն մին է՝ իրրե որմնադիր և
իրրե քաղաքացի՝ իրենց բնակած երկրին օրէնքներն յար-
գել։

ՅՈՒԹԻԱԾ 3

Ազատ-Որմնադրութիւնն՝ աշխատութեան պարտա-
կանութիւնը մարդկութեան անհրաժեշտ օրէնքներէն մին
կը համարի ։ ուստի և ամենուն վրայ պարտք կը դնէ ըստ
կարողութեան աշխատիլ ։ հետևաբար կամաւոր անդոր-
ծութիւնը կը դատապարտէ ։

ՅՈՒԹԻԱԾ 4

Ազատ-որմնադրութիւնը բաղձալով որ աշխարհիս ա-
մեն կողմը դանուած Ազատ-Որմնադիրներն իրարու հետ
միացնող Նղբայրական կապերն ընդհանուր մարդկութեան
մէջ տարածին, կը պատուիրէ ամեն որմնադրաց որ թէ՛
քանիւ թէ՛ գրավ և թէ՛ բարի օրինակաւ Որմնադրութիւ-
նը ծառալին։

ՅՈՒՂԻԱԾ 5

Դւրաքանչիւր որմնադիր պարտականէ ամեն պարագա-
յի մէջ օգնել լուսաւորել եւ պաշտպանել իր եղբայրը՝
մինչեւ անդամիր կեանքը վտանգի մէջ դնելով, եւ անի-
րաւութեան դէմ պաշտպան կանգնիլ անոր :

ՊՐԵԿ ԵՐԿՐՈՐԴ

ՈՐՄՆԱԴԻՐՔ, ՈՐՄՆԱԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ
ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ՆԷՍՔ

ԳԼՈՒԽ Ա.

ՈՐՄՆԱԴԻՐՔ ԵՒ ՈՐՄՆԱԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ

ՅՈՒՂԻԱԾ 6

Ըզատ—որմնադրութիւնը նշաններ եւ խորհրդանիշեր
ունի : Ծայն նշաններն ու խորհրդանիշերը՝ իրենց խորհրդական
նշանակութենէն զատ՝ որ ընծայման ժամանակ կը բացառ-
րուի անդամակցելոց, նպատակ ունին նաեւ աշխարհատա-
րած ընկերակցութեան մ'օգուտներուն զանոնք բաժանորդ-
ընել, թոյլ տալով որ ամեն ազատ—որմնադիրք իրար ճան-
չեն :

ՅՈՒՌԻԱԾ 7

Աղասի — որմնադրաց թիւն անսահման է : **Ճաղովսեր** կը կազմեն, որք ընդհանուր անուամբ օթեակք կամ գործարանք կը կոչուին: **Այս** ժողովները ներկայ Ասհմանադրութենէն ծագումն առաջ գրէնքներով եւ ընդհանուր ու մասնաւոր կանոնադրութիւններով կը կառավարուին :

ՅՈՒՌԻԱԾ 8

Դաղղիոյ Մեծ Նրեւելքէն կախումն ունեցող որմնադրական գործարանները մէկմէկու հետ կապուած են կեղրոնական իշխանութեան մը միջոցաւ, որուն կազմութիւնն ու ստորոգելիքը ներկայ Ասհմանադրութեան **Պ.** մասին մէջ որոշուած են :

ՅՈՒՌԻԱԾ 9

Որմնադրական ժողովոց գումարումը խորհրդաւոր ձեւոց համեմոտ կը կատարուի, որոց իմաստը մի միայն ընծայմամբ կրնայ յայտնուիլ ու բացատրուիլ: **Այս** ընծայումը բազմաթիւ աստիճաններ ունի :

Ոչ «ք կրնայ ազատ մնալ որմնադրական ծիսարանին ու քինադրած աստիճանական փորձերէն :

ՅՈՒՌԻԱԾ 10

Ոչ «ք կրնայ որմնադրական աշխատութեանց մասնակցութեան ընդունուիլ, մինչեւ որ որմնադիր ըլլալը չարդարացնէ :

ՅՈՒՈՒԱԾ 11

Ոչ ոք կրնայ Ազատ—Որմնադիր ըլլալ եւ այս տիտղոսին յարակից իրաւունքները վայելել .

1°. Եթէ շարին լրացուցած չէ .

2°. Եթէ անստդիւտ համբաւ եւ վարք չունի .

3°. Եթէ ազատ եւ պատուաւոր արհեստի մը տէր չէ , եւ ապրուսի բաւական միջոցներ ունենալը չկրնար արդարացնել .

4°. Եթէ որմնադրական ճշմարտութիւններն հասկրնալու համար անհրաժեշտ եղած նախնական կրթութիւնը գոնէ չունի .

5°. Եթէ առ նուազն վեց ամսէ 'ի վեր բնակած կամ նստած չէ որմնադրական (Օթեակին գտնուած գաւառին կամ մինչեւ 100քիլօմէթր տարածութեամբ շրջանակին) մէջ :

Սակայն բացառութիւններ կրնան ըլլալ այն անձանց համար՝ որոց բնակած գաւառին կամ նահանգին մէջ (Օթեակ չգտնուիր :

Տարիքի պայմաններէն ազատ են որմնադրաց որդիքը , որք կրնան տասնեւութ տարեկան հասակնուն մէջ ընծայուիլ՝ իրենց հօրը մօրը կամ խնամակալին հաւամնութեամբ . բայց քսանեւմէկ տարին չլրացուցած՝ ոչ սատար կրնան ըլլալ եւ ոչ վարպետ :

Բնակութեան պայմաններէն ազատ են զինուորականները , նաւաստիները , եւ այն անձինք՝ որք իրենց արհեստին պատճառառ բնակատեղինին փոխելու հարկադրեալ են :

ՅՈՒՈՒԱԾ 12

Որմնադրական գումարմանց մէջ ամեն որմնադիրք կառ տարելապէս հաւասար են : Խաց 'ի որմնադրական պաշտառ

մանց նուիրապետական կարգէն՝ ուղիւ տարբերութիւն կամ զանազանութիւն չկայ անոնց մէջ :

ՅՈՒՂԻԱԾ 43

Որմնադրական ամեն պաշտօններն ընտրութեամբ եւ ժամանակաւոր են :

Դործարաններն ամեն տարի՝ օրինաց սահմանած ժամանակներն՝ իրենց աստիճանաւոր պաշտօնակալները կընտրեն :

“Սախագահները գործարանին այն անդամոց մէջէն միայն կընան ընտրուիլ, որք երեսուն տարին լրացուցած են, եւ գոնէ տարիէ մ'ի վեր գործարանին ընկեր են՝ իրբեւ գործունեայ անդամ :

Ընտրութեան եղանակը, պաշտօնակալաց թիւը եւ իրաքանչիւրին պաշտօնն ու ստորոգելիքն ընդհանուր օրինօք սահմանուած են :

ՅՈՒՂԻԱԾ 44

Դործունեայ անդամք միայն ընտրելի են իրենց գործարանին պաշտօններուն, եւ անոնք միայն իրաւունք ունին աստիճանաւոր Պաշտօնակալաց ընտրութեանը մասնակցելու :

Ընծայման առիթներու մէջ ամեն ներկայ որմնադիրք քուէ տալու իրաւունք ունին, բաւական է որ կանոնաւոր ըլլան :

Որմնադրական գործունէութեան ու կանոնաւորութեան պայմաններն ընդհանուր օրինաց մէջ սահմանուած են :

ՅՈՒՂԻԱԾ 45

Եղատ-Որմնադիր մ'իր տիտղոսն եւ անոր յարակից իրաւունքներն ու առանձնաշնորհութիւնները կը կորսնցընէ .

1. Երբոր վատահամբաւ գործ մ'ընէ :

Դիւան

Արակ Ալպոյանեան
Դամիրէ — Մարտիք

2° Եղբոր ընկերական կարգի մէջ յայտնապէս անպատիւ ճանչուած արհեստի մը ժառայէ :

3° Եղբոր ընծայման ժամանակ տուած խոստումներուն և հաւատարմութեան երդումներուն դրժէ :

Ոչ ոք կրնայ իւր Որմնադրական տիտղոսէն ու իրաւունքներէն զրկուիլ, մինչև որ Սահմանադրութեան և Շնդհանուր օրինաց մէջ նշանակուած ձեւերուն համեմատ դատուելով վճիռ չընդունի :

ՅՕԴՈՒԱԾ 16

Դորժարանները չեն կրնար հաւաքապէս խորհուրդը ընել մինչև որ ԱՌԵ Շրեւելքէն հրաման չընդունին :

Դորժարաններն իրենց աշխատութեանց ներկայ դրանուող ամեն Որմնադրաց և ամեն անդամոց բացարձակ հրահանգ տալու իրաւունք ունին :

‘Լախագահող պաշտօնակալը՝ ժողովին բարեկարգութեան տեսուն է :

ՅՕԴՈՒԱԾ 17

Ամեն Որմնադիր իրաւունք ունի Որմնադրական խընդրոց վրայ իւր կարծիքն հրատարակելու :

ԳԼՈՒԽ Բ.

ԶԱՆԱՑԱՆ ՄԷՍՔ

ՅՕԴՈՒԱԾ 18

Եզատ—Որմնադրութիւնն՝ իւր ծէսերուն զանազանութեան հակառակ՝ նպատակաւն և սկզբամբք մի ըլլալով, դորժարանք կրնան իրենց աշխատութեանց մէջ անխտրաբար հետևիլ այն ծէսին որ իրենց բաղձանաց կը յարմարի. բառականնէ որ այն ծէսը կանոնաւորապէս ճանչուած ըլլայ:

—————♦♦♦—————

ՊՐԵՍԻ Գ.

ԱՐՄԵՆԱԴՐԱԿԱՆ ԽԵՂԱՆՈՒԹԻՒՆՔ

ԳԼՈՒԽ Ա.

ՄԵՇ ԱՐԵՒԵԼՔ ՀԱՂԴԻՈՅ

ՅՕԴՈՒԱԾ 19

Արմագրական վեհապետութիւնն ամեն երկրի որմագիրներուն ընդհանրականութեան մէջ կը կայանայ :

ՅՕԴՈՒԱԾ 20

Արմագրութեան կեդրոնական իշխանութիւնը՝ “ԱՌԵԺ ԸՐԱԿԵԼՔ ԴԱՂՂԻՄ, կը կոչուի” :

Դաղղիմ ԱՌԵԺ ԸՐԱԿԵԼՔը կը բաղկանայ թղթակից
Օթեակաց բոլոր նախագահներէն և Ուխտին խորհրդէն.
Դաղղիմ ԱՌԵԺ ԸՐԱԿԵԼՔից աթոռանիստը Փարիզ է :

ՅՕԴՈՒԱԾ 21

Ուխտին վարչական ծախքերը թղթակից գործարաններն ու որմագիրք կը վճարեն հանդանակութեամբ. և մասնաւոր տուրքավ :

Այս հանդանակութեանց և տրոց քանորդը կը սահմանուի ընդհանուր օրինօք և կանոնագրութեամբք, կամ ԱՌԵԺ ԸՐԱԿԵԼՔից ընդհանուր ժողովոյն յատուկ որոշմամբ :

ԳԼՈՒԽԻ Բ.

ՈՒԽԹԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵ

ՅՈՒՌՈՒԱՄ 22

Ուխտին խորհուրդն երեսուներեք անդամէ կը բաղկանայ , զարս Մեծ Արևելից ընդհանուր ժողովը կընտրէ իւր անդամոց մէջէն :

Խորհրդին անդամներն երեք տարուան համար կընտրուին քուէից բացարձակ առաւելութեամբ , բայց տարւէ տարի երրորդ մասը կը նորոգի : Առաջին և երկրորդ տարիները վիճակաւ կորոշուին փոփոխելիները :

Ելնող անդամները վերընտրելի են :

ՅՈՒՌՈՒԱՄ 23

Ուխտին խորհուրդն իւր նախագահին միջոցաւ Որմնադրութիւնը կը ներկայացնէ օտար Արևելից և բաղաքային իշխանութեանց առջև :

Դապղիոյ Մեծ Արևելից հրովարտակներն ու որոշումները կը հրատարակէ , և օտար որմնադրուկան իշխանութեանց առջև ներկայացուցիչները կանուանէ :

ՅՈՒՌՈՒԱՄ 24

Ուխտին խորհուրդը կը կառավարէ Ուխտին գործերը . և ամեն տարի իւր գործողութեանց հաշիւը կուտայ ընդհանուր ժողովին :

Ելումտից հաշուեցոյցին ծրագիրը կառաջարկէ ժողո-

վին գումարումէն ամիս մ'առաջ, և ժողովին կը ներկայացնէ :

Եմեն տարի, Մեծ Աքելից ընդհանուր ժողովէն ետե, Ուխտին բարոյական և գանձային վիճակին և ժողովոյն աշխատութեանց տեղեկագիրն ստորագասեալ գործարանաց իւրաքանչիւրին կը զրկուի Խորհրդոյն խնամօք :

ՅՈՒՌԻԱԾ 25

Ուխտին խորհրդութը կորոշէ Սահմանադրական ամեն խնդիրները . Գործարանաց ննջումն և նոցա զարթման յայտարարութիւնները , ընտրութեանց վաւերականութիւնը , մասնաւոր կանոնադրութիւններն և այլն , և այլն : Նմանապէս Թղթակից Գործարաններէ և Որմնադիրներէ . առաջարկուած որմնադրական խնդիրները կորոշէ :

ՅՈՒՌԻԱԾ 26

Դատաստանի և կոչման Ատեանն , որոյ կազմութիւնն ու պաշտօնը վարչական և դատաստանական իշխանութեանց բաժանման սկզբան համեմատ ընդհանուր կանոնադրութեանց մէջ սահմանուած են , վերջնական կերպիւ կորոշէ ու կը վճռէ այն ամեն գործերը՝ զորս Ուխտին խորհրդուն իրեն կը յանձնէ :

ՅՈՒՌԻԱԾ 27

Ուխտին խորհրդուն իրաւունք ունի առժամանակեայ կերպիւ դադբեցնելու այն ամեն Գործարաններն ու Որմնադիրներն , որք երկրին օրինաց պարտուալատշաճ յարդանքէն խոստորին , կամ Ուխտին պահպանողական սկզբանց և օրինաց հակառակ վարուին :

ՅՈՒՌԻԱԾ 28

Ուխտին խորհրդայն որոշմամբ դադարեալ Որմնագիրն իւր Գործարանէն պէտք է դատուի .

Դադարման հրովարտակն մինչև երեք օր պէտք է հաղորդուի դատող Գործարանին , և այս հաղորդումէն մինչև երեսուներեք օր դատաստանը պէտք է տեսնուի .

Ըստնախօսն՝ իբրև պահապան օրինաց՝ Գաղղիոյ Մեծ Արևելքը կը ներկայացնէ դատաստանին մէջ , և կրնայ՝ ամբաստանելոյն պէս՝ վերաքննիչ ատեանին բողոքել Գործարանին տուած վճռոյն դէմ .

ՅՈՒՌԻԱԾ 29

Գործարան մը չկրնար դադարիլ Խորհրդայն կողմէ՝ առանց կանոնաւորապէս հրաւիրուելու որ ինքզինք պաշտպանէ .

Դադարումը բնաւ երբեք չկրնար մէկ տարիէն աւելի ըլլալ՝ առանց Գաղղիոյ Մեծ Արևելից ընդհանուր ժողովայն հաւանութեան .

Ուխտին խորհուրդն Որմնագրաց և Գործարանաց ամեն պատիժները ներելու իրաւունք ունի .

ՅՈՒՌԻԱԾ 30

Ուխտին խորհուրդն ընդհանուր ժողովով և իւր անդամոց գո՞նէ երկու երրորդ մասին ներկայութեամբ կը ընայ արտաքոյ կարգի պարագայից մէջ Գաղղիոյ Մեծ Արևելքն յարտաքոյ կարգի ընդհանուր ժողով գումարել .

Դյա գումարումը պէտք է ընէ ամեն անդամ որ այլ և այլ Արևելքէ քսանևմէկ Օթեակ առաջարկեն մի և նոյն որոշ խնդրոյ մը համար .

Ընդհանուր կանոնաց 473 յօդուածին տրամադրութիւնները գործադրելի են արտաքոյ կարգի գումարմանց համար։

ՅՈՒՌԻԱԾ 31

Ուխտին խորհրդոյն ամեն հրովարտակներն ու որոշումները գործադրելի ըլլալու համար պէտք է չոք որոշման յիշատակութիւնը կրեն՝ Նախագահէն ու Քարտուղարաց մէկէն վաւերացեալ։

ՅՈՒՌԻԱԾ 32

Ամեն աւարի, ընդհանուր ժողովն ետև, Խորհուրդն ինքնին կանուանէ իւր Նախագահը, երկու Փոխ—Նախագահ և երկու Քարտուղար՝ իւր կանոնադրութիւնը կը շինէ։ Հինգ բարձրաստիճան Որմնադիր փոխանորդ կը կարգէ, որպէս զի Ժողովովոյ և Փիլիսոփայական Խորհրդոց կազմութեան ու հաստատութեան վաւերագրերն ինչպէս նաև կոնդակներն ու արտօնադրերն ստորագրեն։ Ինքնին կորոյէ իւր սովորական և արտաքոյ կարգի նիստերուն օրերն, որոց մին գոնէ վեց ամիսն անդամ մը պարտաւորական է իւր ամեն անդամոց համար։

Ուխտին Խորհրդոյն անդամոց գրամական փոխարինութիւն մը պիտի սահմանուի իրենց ընակարանին հեռաւորութեան վրայ հաշուելով։ և ով որ պարտաւորական նստին ներկայ չգտնուի, 100 ֆրանք տուգանք պիտի վճարէ։ Եթէ չկընայ արդարացուցիչ պատճառ մը ցոյց տալով խորհուրդը գոհացնել։

Գաղղիոյ Մեծ Արևելից կնքապահի պաշտօնը կատարող անձը Նախագահը կընտրէ Խորհրդին անդամոց մէջէն։

ՅՈՒՌԻԱՆ 33

Խորհրդին արտաքոյ կարգի պարտաւորական նիստերըն հրապարակային պիտի ըլլան , և Մեծ Արևելից իշխանութեան ներքե գտնուող Որմնադիր Վարպետը կրնան ներկայ գտնուիլ .

Խորհուրդը կրնայ միշտ ընտանեկան նիստ գումարել .

ԳԼՈՒԽ Գ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՔ ՄԵԾ ԱՐԵՒԵԼԻՑ ԶԱՂՎԱՆՑ

ՅՈՒՌԻԱՆ 34

Դազգիկայ Մեծ Արևելից ընդհանուր ժողովը կը բաղկանայ .

1. Շողոր թղթակից խորհրդաւոր Օթեակաց նախագահներէն կամ անոնց երեսփոխաններէն .

2. Ուխտին խորհրդէն :

Ժողովը կանուանէ իւր Նախագահն իւր անդամոց մէջէն .

Ժողովին ուրիշ Սպաներն Ուխտին խորհուրդը կանւանէ .

ՅՈՒՌԻԱՆ 35

Խւրաքանչիւր Օթեակ՝ եթէ իւր Նախագահը չկրնայ ներկայ գտնուիլ . յատկապէս գումարեալ նստի մը մէջ ընտրած երեսփոխանով մ'ինքզինք կը ներկայացնէ . ընդհանուր ժողովին մէջ .

(Ա և է Որմնադիր չկրնար մէկէն աւելի համաստիճան գործարան ներկայացնել ընդհանուր ժողովոյ մէջ .

ՅՈՒՂԻԱԾ 36

Երեսփոխաններն Օթեակին գործօն անդամոց մէջէն պէտք է միշտ ընտրուին , որք նոյն Գործարանին տուած ամենաբարձր աստիճանը կրող , երեսուն տարին լրացուցած և գոնէ տարիէ մ' ի վեր Օթեակին անդամ եղած պիտի ըլլան :

Վլժէրիի Գաղղիական գաղթականութեանց և օտար երկիրներու Օթեակները միայն կրնան իրենց գործօն անգամներէն գուրս երեսփոխաններ ընտրել . բայց պէտք է որ ընտրուած անձն երսուն տարեկանէ վեր ըլլայ , Վարպետի աստիճան ունենայ , և գոնէ տարիէ մ' ի վեր կանոնաւոր Գործարանի մ' անդամ եղած ըլլայ :

ՅՈՒՂԻԱԾ 37

ՄԵծ Արևելից ընդհանուր ժողովն ամեն տարի սեպտեմբեր ամսոյն երկրորդ երկուշաբթի օրը կը գումարի :

ՅՈՒՂԻԱԾ 38

ՄԵծ Արևելքն՝ ընդհանուր ժողով գումարած ժամանակ՝ Ռւխտին խորհրդոյն ներկայացուցած վարչական տեղեկագիրը կը նդունի :

Տարւոյն հաշիւն՝ ըլլայ՝ մակար կը քննէ , մակար և ծախտոց հաշւեցոյցը կորոշէ , եթէ պէտք ըլլայ՝ օրէնքներն ու ընդհանուր կանոնադրութիւնները կը փոփոխէ , և Որմնադրութեան վերաբերեալ ամեն խորհրդները գերիշխանաբար կորոշէ :

ՅՈՒՂԻԱԾ 39

Ընդհանուր ժողովոյ նիստը բացուած ժամանակ բոլոր անդամներն հետեւեալ երդումը կուտան Նախագահին .

Ալեքսանդր Հայութիս ու Թագավորական Սուհամառնութեան, և
Ուկան ընտհանութ օքինացն ու կանոնադրութեանց :

ՅՈՒՌՈՒԱԾ 40

Ուխտին ընդհանուր օրինացն ու կանոնադրութեանց
մէջ պարունակեալ ամեն տրամադրութիւնք՝ որք նա-
խընթաց յօդուածներուն հակառակ են՝ խափանեալ են:

ՊՐԵԿ Դ.

ԱՐՏԱԳԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ

ՅՈՒՌՈՒԱԾ 41

Գաղղիոյ Մեծ Արևելքը գործարաններ չհաստատեր
այն օտար երկիրներուն մէջ՝ ուր Որմնադրական կանոնա-
ւոր իշխանութիւն մը կը գտնուի :

Նմանապէս օտար Որմնադրական իշխանութեան մը
կողմէ գաղղիոյ կամ Գաղղիական սեփականութեանց մէջ
հաստատեալ Գործարան չճանչեր :

ՊՐԵԿ Ե.

ԼՐԱՑՈՒԹԻՉ ՅՈՒՌՈՒԱԾ

Սահմանադրութեան մէջ փոփոխութիւն ընելու որ և
է առաջարկութիւն, Գաղղիոյ Մեծ Արևելից ընդհանուր
ժողովին նկատողութեան առնուելէ ետև, հետևեալ տար-
ւոյն ժողովին մէջ վիճաբանութեան կենթարկի՝ Գործա-
րանաց կարծիքը նախապէս հարցուելով :

Սահմանադրութիւնն ամեն Որմնադրաց պահպանու-
թեան ներքեւ դրուած է, և մէն մի Որմնադիր իրաւունք
ունի գործադրութիւնը պահանջելու :

Դրամի
Աշոյանինսի
Տաճրէ — Մարտին

Օ Ր Ե Ն Վ Ք
Ա
Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Թ Ի Ա Խ Ո Զ Ք

Դիմում
Արքական Ակադեմիայի
Գովիճիկ — Մարտիկ





ՀՐՈՌ ԵՐՏԾԱ

ՄԵՔ, ՄԵՃ ՎԱՐԱՊԵԿ ՈՐԹԻԱԴՐԱԿԱՆ ՈՒԽՍԹԻՆ ԳԱՂՂԻՄՅ.

ՏԵԱՆԵԼՈՎ 1867 յունիս 14ի որոշումը՝ որով Գաղղիմյ

ՄԵՃ ԱՐԵԵԼՔԸ՝ յլնդհանուր ժողով գումարեալ՝ ընդունեց Ուխտին օրինաց եւ ընդհանուր կանոնաց բովանդակութիւնը, զորս իր 1866ի եւ 1867ի նիստերուն մէջ քուէարկութեամբ հաստատած էր:

ՏԵԱՆԵԼՈՎ նոյն օրուան որոշումը, որով ՄԵՃ ԱՐԵԵԼՔԸ լնդհանուր ժողովը վճռեց թէ իրաւասութեան խնդիրը խոր. հըրդածութեան ներքեւ մնայ որպէս զի յառաջիկայ գումարման մէջ քննուի, եւ թէ նախկին օրինաց եւ ընդհանուր կանոնաց այն տրամադրութիւնները՝ որք եղծմանց եւ դատմանց կը վերաբերին, հաստատ պիտի մնան մինչեւ որ իրաւադատական նոր կազմութիւն մ'ընդունուի.

ՏԵԱՆԵԼՈՎ Սահմանադրութեան ԶԱԿՆՈՐԴ յօդուածը.

Հրամայեցինք եւ կը հրամայենք.

ՅՈՒՌԻԱՆ ԱՌԱՋԻՆ

Ուխտին օրէնքներն եւ ընդհանուր կանոնները՝ որոց օրինակը ներկայ հրավարտակիս հետ կցուած է, պիտի հրատարակուին ու դործադրելի ըլլան, յառաջիկայ նոյեմբեր 15ն, սկսեալ, Գաղղիմյ, Եւրոպայի եւ Ալմէրիի դործարաններուն, համար, եւ 1868 փետրվար 15ն սկսեալ՝ Գաղղիմյ ՄԵՃ ԱՐԵԵԼՔԸ կախում ունեցող ուրիշ ամեն հեռաւոր դործարաններուն համար:

ՅՈՒՌԻԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Նախկին օրինաց եւ ընդհանուր կանոնաց այն տրամադրութիւնները՝ որք 269 եւ 288երորդ յօդուածոց հետ կ միաց

պին հրամայուած են, եւ հանդանակութեանց չվճարման
պատճառաւ դատմանց եւ եղծմանց կը վերաբերին, հաս-
տատ կը մնան:

ՅՈՒՌԻԱՆՑ ԵՐԲՈՐԴ

Ուխտին նախկին օրինաց եւ ընդհանուր կանոնաց ու-
ժիշտ ամեն տրամադրութիւնները խափանեալ են եւ խափան-
եալ կը մնան:

Արարեալ յաթուանիստն ՄԵԺԻ Արեւելից Գաղղիոյ 'ի 10
հոկտեմբերի 1867

ՄԵԺԻ Վարպետ Ուխտին.

ՄԵԼԻՆԵ

'ի գիմաց,

ՄԵԺԻ Վարպետին՝

Օժանդակ ՄԵԺԻ Վարպետ

Ա.ՖՐԵՏ ՊԼԱՆԸ



ՕՐԵՆՔ

七

ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐ

ՀԱՍՏԱՏԵԱ.Ք 'Ի ՄԵԾԵՆ ԱՐԵՒԵԼԻՑ ԳԱՂՂԻՈՑ

ԳՈՒՄԱՐԵԱԼ ՅԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ Ի 14 ՅՈՒՆԻՒՄ 1867



ՊՐԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ԹՐՄՆԱԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ · — ԳՈՐԾԱՐԱՆՔ · —

ԿԱԶՄՈՒԹԻՒՆՔ ՆՈՑԱ. — ՎԱՐՉՈՒԹԻՒՆ.

ԳԼՈՒԽ Ա.

ՄԻԱԿ ՀԱՏՈՒԱԾ

ԱՐԵՎԱԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ

ՅՈՒՆԻՎ 4

Որմնադրական աշխատութեանց նպատակը միշտ նոյն
է՝ որչափ եւ տարրեր ըլլան գործարանաց հետեւած ծէ-
սերը:

ՅՈՒՆԻՎ 2

Որմաղը ու թիւնը զանազան աստիճանի գործարաններ
ունի, Օնեակա, Ժուլիուս, Խոբեմուն:

1 լօժ. 2 Շաբաթու. 3 Գօնսելի

վերջին աստիճանները տալու:

Այս գործարանին կազմութիւնն ու հանդամանքը՝ սոյն ընդհանուր օրինաց 184 եւ 200երորդ յօդուածներով սահմանուած են:

ՅՈՒԹՈՒԱԾ 3

Եէս մը՝ որչափ եւ շատ ըլլայ իր աստիճանաց թիւը՝ չկրնար ինքզինք ուրիշ ծէսէ մը վերադոյն համարիլ:

Գործարան մը՝ որչափ շատ եւ բարձր աստիճաններ ալ տալու կարող ըլլայ, չկրնար ուրիշ գործարանի մը վրայ գերիշխանութիւն բանեցընել:

ՅՈՒԹՈՒԱԾ 4

Օթեակը հիմնական գործարան է. նաէ որ ընծայեալը սրմագրական կենաց կընտելացընէ. անկէ կընձիւղեն ժողովարաններն ու Խորհրդարանները:

Ժողովարան մը չկրնար գոյութիւն ունենալ առանց Օթեակի մը վրայ հիմնուելու. նոյնպէս Խորհրդարան մը չկրնար գոյութիւն ունենալ մինչեւ որ ժողովարան մ'իրեն նեցուկ չունենայ:

Այս գործարաններն իրենց հիմն եղող Օթեակին անունէն զատ ուրիշ անուն չեն կրնար կըել:

Այն Արեւելքներուն մէջ՝ ուր միացմանը միակ Ժողովարան մը կազմուի, այն ժահ ժողովարանը կընայ նոյն Արեւելքին մէջ գտնուած Օթեակիներուն անուններէն տարրեր անուն մը կրել Մեծ Արեւելից հրամանաւ, բայց միշտ պէտք է որ ամենէն հին, կամ եթէ այն չգումարի, հնութեան կարգաւ անկէ ամիջապէս ետքն եկող Օթեակի մը վրայ հիմնը բած ըլլայ:

ՅՈՒԹՈՒԱԾ 5

Խրագանչիւր գործարանի կազմութիւնը իրաւունքն ու

պարտականութիւնները եւ բարձրագոյն դործարանաց մէջ
ընդունուելու պայմանները ներկայ Ընդհանուր օրէնքէն սահ-
մանուած են:

ՅՈՒՌԱԾ 6

Երբոր մայր Օթեակ մ'իր աշխատութիւնները դադրե-
ցընէ 142երորդ յօդուածին որոշած պայմանաժամին լրանալէն
ետեւ, ուրիշ ամեն անկէ ծնած դործարաններուն աշխատու-
թիւններն ալ կը դադրին. Նմանապէս երբոր Ժողովարան մը
իւր աշխատութիւնները դադրեցընէ, անկէ ծնած Խորհու-
րաններն ալ իրենց աշխատութիւնները կը դադրեցընէ,
բայց Ժողովարան մը կամ Խորհրդարան մ'իր աշխատութիւնները
դադրեցըննելով կամ Ընդհատելով չկրնար Օթեակին աշխա-
տութիւններն ալ արդելուլ:

ՅՈՒՌԱԾ 7

Բարձրագոյն աստիճաններն այն որմնադրաց միայն կը
տրուին, որք իրենց փութաջանութեամբն ու յաջողակու-
թեամբ նշանաւոր եղած եւ ուխտին ծառայութիւններ ը-
րած են:



ԳԼՈՒԽ Բ.

ԿՐԾՄՈՒԹԻՒՆ ԴԱՐԴԱՐԱՑՄԱԾ

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ԻԻՐԱԶԱՆՁԻՒՐ ԱՐԵՒԵԼԻՑ ՄԷՋ ԳՈՐԾԱՐԱՆԱՑ ԲՈՒՈՅԵ ՈՐՈՇՈՒՄԸ

ՅՈՒՌԱԾ 8

Ամեն մէկ Արեւելքի մէջ դժոնուելիք դործարանաց թիւ-

ԱՐԵՃ ԱՐԵՆԵԼՔԸ ԿՈՐՈՀԵ : ՆՄԱՆԱՎՔԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՆ ՊՈՐԾԱ-
ՐԱՆՆԵՐՔՆ ԵԼՆԵԼԻՔ ՊՈՐԾԱՐԱՆՆԵՐՆ ԱԼ ՆԱ ԿՈՐՈՀԵ :

ԲԱՐՁՐԱԳՈՒՆ ՊՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ ԿՐՆԱՆ ԻՐԵՆԸ յԱՄՈՒԿ Ա-
ՆՈՒԱՆ ՀԵՏ ՆԱԽԵ ԱՅԼ Եւ ԱՅԼ ՊՈՐԾԱՐԱՆԱԳ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԸՆԴ-
ՊԵԼ :

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ԿԱԶՄՈՒԹԻՒԽՆ ԾԹԵՆԿԱՑ

ՅՈՒՌՈՒԱԾ 9

ՄԵՃ ԱՐԵՆԵԼՔԸ ՎԼԿԱՅԱԿԱՆ ԿԱՄ ԱՆԼԻՇ ԿԱՆՈՆԱՎՈՐՆԵԱԼ
ՈՐՄԱՎՐԱԿԱՆ ՄԻՄՈՐԱՎՈՐ ՈՒՆԵցող Եօթն ՎԱՐԱՎԵՍ ՄԻ Եւ ՆՈՅՆ
ԱՐԵՆԵԼՔԻ ՄԵջ ՊՈՎԱՄԱՐՈՒԵԼՈՎ՝ ԿՐՆԱՆ ՕԹԵՎԱԼ ՄԵ՛ ՀԻՄՆԵԼ ՀԵ-
ՄԵՆԵՎԱԼ ՄՐԱՄԱՎՐՈՒԵԹԵԱՆԸ ՀԱՄԵՄԱՍ :

ՅՈՒՌՈՒԱԾ 10

ՆԱԽԾԵՆԹԱԳ յօդուածին մէջ նշանակեալ որմավիրք՝
առժամանակեայ ՕԹԵՎԱԼ մը կը կազմեն իրենցմէ մէկուն նա-
խագահութեամբ, որ ՄԵՃԱՐՈՂ տիտղոսը կառնու իւր վրայ.
միւս պաշտօնակալ կամ աստիճանաւորներն են՝ մէկ ա-
ռաջին եւ մէկ մ'ալ երկրորդ . Դէտ, մէկ Ատենախօս. մէկ
Քարտուղար, մէկ Գանձապետ, մէկ Աղքատախնամ, եւ եթէ
առելի թուաւոր են մէկ Մարզիչ, մէկ Ճարտարապետ, մէկ
Դանապան ե. ։ ։ եւ մէկ Արարողապետ:

ՅՈՒՌՈՒԱԾ 11

Առժամանակեայ ՕԹԵՎԱԼ քաղաքական գաղափարնե-
րէ հեռու անուն մը կրնարէ իրեն. Այն անունը ՄԵՃ ԱՐԵ-
ՆԵԼՔԸ վաւերանալով՝ վերջնական եւ յատուկ անուն կըլլաց-
այն ՕԹԵՎԱԼին :

Առժամանակեայ Օթեակին առաջին աշխատութեանց նիւթն է՝ հաստատութեան խնդրագիր մ'ուղղել Մեծ Արեւելից, հինգ առաջին Լոյսերէն սառըագրեալ, ինչպէս որ օրինակը դրուած է ներկայ Օրինաց հետո:

Յիշեալ գործարանը իւր խնդրագրին հետ նաեւ իր ամեն անդամոց ցանկը կը դրկէ, երկու զատ զատ օրինակ, ներկայ Օրինաց հետ գրուած գաղափարին համեմատ, որ կը պարունակէ իւրաքանչեր անդամոց անունն ու մականունը, ծննդեան տեղն ու թուականը, տարիքը, բնակարանը, քաղաքային ու որմնադրական հագամանքը, եւ ո՛ր Օթեակի մէջ ընդունուած ըլլալը: Այս ցանկն ամեն եղբայրներէն պիտի ստորագրուի եւ հինգ առաջին Լոյսերուն վըկայութեամբ վաւերացուի:

Ամեն առժամանակեայ գործարան իր հաստատութեան խնդրագրին կը կցէ նաեւ իւր ամեն մէկ անդամոց որմնադրական տիտղոսները (վկայական կոնդակ կամ արտօնագիր), ինչպէս նաեւ անոնց կանոնաւորութիւնը հաստատող գրութիւնները:

Այս կանոնական պայմանները կատարուելէ ետեւ գործարանն աչքէ անցունելու կամ քննելու գործին կը ձեռնարկուի:

Ամեն առժամանակեայ գործարան՝ իր խնդրագրին հետ

նաեւ իւ հասցէն եւ ժողովատեղին կը հազորդէ, միանդա-
մայն Սահմանադրութեանց, Աստիճանաց տետրակներուն
եւ ներկայ կանոնադրութեանց երեք օրինակներուն գի-
նը, վերջապէս ամեն պահանջելի տուրքերն ու հանգանա-
կութիւնները Մեծ Արեւելից սնտուկին կաւանդէ:

Եթէ Սահմանադրութիւնները չշնորհուին, աւանդեալ
մետաղներն, ինչպէս նաեւ խնդրագրեին կցուած վկայա-
դիրները ետ կը տրուին որու որ անկէ, ստացագիր եւ ան-
դորրագիր աւնուելով: Իսկ միւս գիրերը Մեծ Արեւելից
դիւանատունը կը պահուին:

ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

ՀԱՍՏԱՑՈՒԹԻՒՆ ՍԹԵԱԿԱՑ

ՅՈՒՌՈՒԱԾ 46

Գործարանաց հաստատութիւնը Մեծ Վարպետէն կարդ-
եալ քանի մը տեսուչներու ձեռամբ կը կատարուի:

Մեծ Արեւելը՝ Օթեակին հետ խորհրդակցութեամբ
հաստատութեան օրը կ'օրոշէ: Երբոր տեսուչները ժողովա-
տեղին հասնին, Օթեակն աշխատութիւնները բանալով իւր
անդամներէն երեք պատգամաւոր կը դրկէ, որպէս զի
անոնց իշխանութիւնը հասկընան:

Պատգամաւորաց բերած աեեղկութեան վրայ, գործա-
րանին անդամներէն ինը, եւ եթէ թիւերնին չը ներէ,
եօթն, հինգ կամ երեք անդամք սուրերով զինեալ եւ ձեռ-
քերնին աստղեր բռնած Տաճարէն դուրս կելնեն, եւ հաս-
տատիչ տեսուչը կամ տեսուչները կը դիմաւորեն:

Մեծ արոյն եւ Դէաերը Տաճարին դուռը կեցած՝ հաս-
տատիչ տեսուչներուն կ'օպասեն, եւ երեք կոփիչներն ա-
նոնց յանձնելով՝ պողովատիկ կամարին ներքեւէն մինչեւ:

Արեւելք կը տանին զամոնք, Այն ժամանակ դործարանին աշխատութիւնները կը դադրին:

ՅՈՒՂԻԱԾ 17

Հաստատութեան գահերէցն աթոռը կը բաղմի եւ Մեծարոյն իր աջ կողմը կը նստեցնէ: Եթէ Մեծ վարպետէն կարգեալ ուրիշ տեսուչներ չգտնուին, գահերէց տեսուչներկու եւ: Կորոշէ, որք Ա. եւ Բ. Դէտերուն պաշտօնը պէտք է կատարեն:

Աշխատութիւնները բանալէ առաջ՝ գահերէցն հըրաման կընէ երկու Դէտերուն, որ սիւները պարտելով՝ ներկայ դատնուող որմնադրաց կանոնաւորութիւնն ստուգեն:

Որ եւ է այցելու՝ որ իւր որմնադիր ըլլալը չկրնայ հաստատել՝ չկրնար ժողովին ներկայ դատնուիլ:

ՅՈՒՂԻԱԾ 18

Գահերէցը Մեծ Արեւելից աշխատութիւնները կը բանայ Օթեակին ունեցած ծիսին առաջին աստիճանաւ: Նոյն վայրկենէն որ եւ է որմնադիր մը չկրնար ներս բերուիլ մինչեւ որ հաստատութեան արարողութիւնն աւարտի:

Գահերէցը քարտուղարին կարգալ կուտայ իշխանութիւններն ու Սահմանադրութիւնները, եւ յետոյ Մեծարոյին յանձնելով՝ կը հրամայէ որ Օթեակին ճարտարապետութեան դրքին մէջ արձանագրուին եւ գիւանը պահուին: Նմանապէս Մեծարոյին կը յանձնէ Աստիճանաց Ցետրակները եւ ուխտին Սահմանադրութեան Օրինաց եւ ընդհանուր կանոնաց երեք օրինակները:

ՅՈՒՂԻԱԾ 19

Մեծարոյին իւր եւ երկու Դէտերուն կողմէն, յետոյ

Ե. Ատենախօսը՝ Օթեակին պաշտօնակալներէն ու անդամներէն շրջապատեալ՝ իւր եւ անոնց կողմէն հետեւեալ երդումը կուտան գահերեցին։

• Կերդնում հնազանդիլ որմնադրական սահմանադրումիւն, Օրինաց եւ ընդհանուր կանոնաց ուխտին։

ՅՈՒՌԻԱՆ 20

Թեսոյ Քարտադարն Օթեակին ցուցակին վրայ արձանադրեալ անդամներն յանուանէ կը կոչէ, որոց իւրաքանչիւրը՝ հաստատութեան նախադահող տեսչին ներկայացուցած երդման ձեւն երկու զատ օրինակ կ'սատրագրեն։

Հաստատիլ տեսուչներն այն երկօրինակ երդմնադրոց վրայ գրուած ստորագրութիւններն իրենց վկայութեամբը կը վաւերացնեն։ Եւ մէկ օրինակն Օթեակին դիւանը կը պահուի, միւսն ալ հաստատութեան նախադահող Ե. ձեռքը կը մնայ.

ՅՈՒՌԻԱՆ 21

Գահերէցը ճանօւցանել կուտայ Սիւներուն մէջ թէ Օթեակին հաստատութեան դործը պիտի կատարուի, ամեն Ե. ոտքի վրայ կը կանգնին կարգաւ, սուր 'ի ձեռին, եւ գահերէցն Օթեակին հաստատութեան վճիռը կուտայ հետեւեալ կերպիւ։

• Ի Փառս Մեծի Ճարտարապետին Տիեզերաց, յանուն եւ ընդհանաւորութեամբ Մեծին Արեւելից Գաղղիոյ, եւ զարութեամբ իշխանութեանն որ տուեալ է մեզ վասն հաստատութեան յԱր. ոյ Օթեակի միոյ 'ի ծէս . . . եւ յասուկ անուամբ, յայտ առնեմք զի . . . Օթեակին հաստատեալ է ոյ

Գահերէցը միութեան շղթայ կազմել կուտայ Օթեակին անդամներէն միայն, վեցամսեայ խօսքը կը հազորդէ անոնց եւ Մեծ Արեւելից աշխատութիւնները կը փակէ.

Այս աշխատութեանց գոյուելէն անմիջապէս ետքը գործարանին երեք առաջին լոյսերը թողիչները կընդունին տեսչաց ձեռքէն, որք հաստատութեան ատենադրութիւնը փակելէ ու ստորագրելէ ետեւ Արեւելիքը կը նստին, Դահերէցը Մեծարոյին աջ կողմը.

Օթեակին իր աշխատութիւնները կ'սկսի: Այս հանդիմին մէջ խօսուած ճարտարապետական հաստուածները տեսչներուն կը տրուին, որպէս զի հաստատութեան երդմագրին եւ ատենադրութեան երկու օրինակներուն մէկուն հետ Մեծ Արեւելից դրկեն:

Սահմանադրութիւնները, Աստիճանաց Տետրակները, Ներկայ կանոնադրութեանց երեք օրինակները, Եշխանութիւնները, Հրահանգները, Երդմագրին երկու օրինակները, նոր գործ արանին անդամոց ցուցակը եւ շարադրութիք ատենադրութեան օրինակը Մեծ Արեւելիքէն կը դրկուին հաստատիչ տեսուչներուն, որք հաստատութեան գործը կատարուելէն մինչեւ տասնեւհինդ օր՝ իրենց պաշտօնին կատարուած ըլլալը ցուցնող բոլոր գորութիւնները Մեծ Արեւելից ձեռքը պէտք է հասցնեն:

Օթեակ մը կընայ ինքզինք հաստատելու հրաման խընդրել՝ երբոր պարագաները պահանջեն: Այս առթիս մէջ՝

Հաստատիչ տեսուչներն են միշտ Մեծարոյն եւ երկու Դէտերը՝ տեղերնին առժամանակեայ փոխանորդներ կարդ եւ լով հաստատութեան արարողութեան համար։

Այս տեսուչները, Օթեակին անդամոց երդումն առնել առաջ՝ իրենք երդում կուտան հետեւեալ կերպով առժամանակեայ Մեծարոյին՝ որ զայն պաշտօնապէս կընդունի եւ առենագրութեան մէջ կարձանագրէ։

• Մեք, Մեծարոյ եւ Դէտք սոյն Գործարանիս, հանգիստարար կերպնունք՝ 'ի ներկայութեան Ե.' ըս մերոց, • կատարելապէս հնազանդիլ Որմնագրական Սահմանադրութեան, Օրինաց եւ ընդհանուր կանոնաց Ուխտիա։

Մեծարոյն եւ Դէտերը կստորագրեն երդմնագրին երկու օրինակը, եւ իրենց հաստատչի պաշտօնը կը կատարեն։

ՅՈՒՌՈՒԱԾ 25

Օթեակիները չեն կրնար Մեծ Արեւելից հետ թղթակցելու իրաւունք ստանալ մինչեւ որ իրենց հաստատութեան տեղեկագրին եւ երդմնագրին երկու օրինակներէն մէկը Մեծ Արեւելից դիւնատան մէջ չը զետեղուի։

ՅՈՒՌՈՒԱԾ 26

Այսպէս հաստատեալ Օթեակ մ'իրաւունք ունի երեք առաջին խորհրդաւոր աստիճաններով որմնագրիներ արտադրելու։

ՀԱՏՈՒԱԾ ԶՈՐՈՐՈՒ

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎԱՐԱԿԱՑ

Ճողովարան մը Մեծ Արեւելքէն հաստատուած կամ

ճանչուած Օթեակի մը մէջ միայն կրնայ կաղմուիլ եւ
պէտք է որ այն Օթեակին հաճութիւնն ստանայ եւ նոյն
ծէսը դաւանի:

Առժամանակեայ Ժողովարան մը կաղմելու համար՝
հարկ է որ եօթն Ռող—Բուօա Ասպ.։ գտնուին կանոնաւոր
կոնդակ ունեցող:

Երբոր Օթեակին հաւանութիւն շնորհէ, Ժողովարանն իր
Ս զաները կանուանէ եւ Մեծ Արեւելքէն՝ Ժողովարանի
հաստատութեան արտօնագիր խնդրելու համար պէտք
եղած խնդրագիրը պատրաստելու կ'զբաղի:

ՅՈՒՊԻԱԾ 28

Ժողովարանն այս խնդրագրին կը կցէ.

1. Օթեակին որոշումը՝ հինգ առաջին լոյսերէն ստուրագրեալ եւ կնքառահին կնքովս ու դրոշմովը փաւերացեալ
2. Իր անդամոց կրկին ցուցակը՝ Օթեակին կնքովը վաւերացեալ եւ հիմնադրաց որմնադրական վկայագիրներն ու կոնդակները:

3. Խերաքանչիւր Ասպ.։ի երդմնագիրը, (Օրինաց 19բգ. յօդուածին մէջ) նշանակուած ձեւով:

4. Ժողովարանի հաստատութեան արտօնագրերուն, Աստիճանաց Տետրակիներուն եւ Ռւխտին ներկայ Օրինաց եւ ընդհանուր կանոնաց օրինակներուն դիմերը:

5. Վերջապէս այլ եւ այլ պահանջելի տուրքերը, եւ ղանոնք ամեն տարի կանոնաւորապէս վճարելու խոստումը:

ՅՈՒՊԻԱԾ 29

Ժողովարան մը չկրնար իրեն հիմն եղող Օթեակին առունէն զատ ուրիշ անուն ընդունիլ ՚ի բայ առեալ 4 եւ 142 հիմրդ. յօդուածոց մէջ նախատեսեալ պարագայն:

— 32 —
ՅՈՒՌՈՒԱԾ 30

Առժամանակեայ Ժողովարանի մը բոլոր դրսւթիւններն
Օթեակին դրոշմն կը կըեն. Խակ երբոր հաստատուի, յա-
սուկ դրոշմ մը պէտք է ունենայ:

ՅՈՒՌՈՒԱԾ 31

Ժողովարաններն՝ իրենց տիտղոսներն ու վկայագրերը
խնդրելու եւ ստանալու համար՝ նոյն կանոնական պայմա-
նաց կը հետեւին՝ որք Օթեակներուն կը պահանջուին սոյն
առթիս մէջ (Յօդ. 9 եւ հետեւեալք):

ՅՈՒՌՈՒԱԾ 32

Ժողովարանի մը հաստատութեան կանոնական պայ-
մանները նոյն են՝ ինչ որ Օթեակներուն համար որոշուած
են (Յօդ. 16 եւ հետեւեալք):

ՅՈՒՌՈՒԱԾ 33

Կանոնաւորապէս հաստատեալ Ժողովարանները միայն
իրաւունք ունին վարդետի աստիճաննէն բարձրագոյն աս-
տիճաններ տալու մինչեւ Ո.օդ—Քռօյի Ասպ. թեան աս-
տիճանը՝ ի միամին առեալ:

ՀԱՏՈՒԱԾ ՀԻՆԴԵՐՈՐԴ

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԽՈՐՃՐՈՎԱՐԱՆԱՑ

ՅՈՒՌՈՒԱԾ 34

Խորճրարան մը չկրնար հաստատուիլ մինչեւ որ (Մէծ

Արեւելքէն հաստատուած կամ ճանչուած) Սկովտական Օթեակի մ'եւ Ժողովարանի մը հաւանութիւնը չունենայ, եւ մինչեւ որ գոնէ եօթն Յօրդ աստիճան եւ կանոնաւոր վը կայագիր ունեցող Քատ.՝ Ասպ.՝ ըէ բաղկացեալ չըլայ:

Ժողովարանը չկրնար հաւանութիւն տալ Խորհրդարանի մը կազմութեան՝ եթէ ինք ալ իր հիմն եղող Օթեակէն հաւանութիւն ստացած չըլլայ:

Օթեակին եւ Ժողովարանին հաւանութիւնն ստացուելէ ետեւ, առժամանակեայ Խորհրդարանն իր սպաննը կանուանէ եւ Մեծ Արեւելքէն Սահմանադրական արտօնագիր մ՝ ստանալու համար պէտք եղած խնդրագրին պատրաստութեանը կ'զբաղի:

ՅՈՒՂՈՒԱԾ 35

Խորհրդարանն իր այս խնդրագրին կը կցէ.

1. Այս խնդրոյս վրայ Օթեակին եւ Ժողովարանին ըրած որոշումները:

2. Իւր անդամոց կանոնաւոր ցուցակին երկու օրինակը՝ Ժողովարանին դրսումովը վաւերացեալ

3. Իւր անդամոց ամեն մէկուն կանոնաւոր վկայագիրը:

4. Պահանջելի գիրերն ու մետաղները:

ՅՈՒՂՈՒԱԾ 36

Խորհրդարան մը՝ զի՞նքը ծնող Ժողովարանին անունը միայն կրնայ կրել առանց փոփոխութեան:

ՅՈՒՂՈՒԱԾ 37

Առժամանակեայ Խորհրդարանի մը բոլոր գրութիւնները Ժողովարանին դըմշը կը կրեն: Իսկ երբո՛լ Սահմա-

Նադրի ու հաստատուի, իւր յատուկ դըոշմը կունենայ-

ՅՈՒՌԻԱԾ 38

Խորհրդարանաց հաստատութեան եղանակը նոյն է, ինչ
որ է օթեակներուն ու ժողովարաններունը (Յօդ. 16 եւ
հետեւեալք):

ՅՈՒՌԻԱԾ 39

Կանոնաւորապէս հաստատեալ Խորհրդարանի մը յա-
տուկ իրաւունքն է Ուզ—Քռօսի Ասպ.՝ թենէն բարձրա-
գոյն աստիճաններ տալ մինչեւ! Յօդ. աստիճանի Քատ.՝
Ասպ.՝ թեան աստիճանը, 'ի միասին առեալ:

Այս աստիճանաբաշխութիւնը չկրնար ըլլալ՝ ոչ ջանա-
րէն դուրս, ոչ Խորհրդարանին հաստատուած ձորէն դուրս,
եւ ոչ փոխանորդութեան ձեռքոք:

—

ՀԱՏՈՒԱԾ ՎԵՑԵՐՈՐԴ

ԸՆԴԱՆՈՒՐ ՑՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ ԱՅ. ԱՅ Ա. Ա.

ԱՍԹԻԱՆԻ ՊՈՐՉԱՐԱՆԱՑ ՀԱՄԱՐ

ՅՈՒՌԻԱԾ 40

Խորհրդաւոր գործարանաց ներքին բարեկարգութեան
եւ կանոնաւորութեան վերաբերեալ տրամադրութիւններն
ամեն բարձրագոյն գործարանաց համար ալ գործադրելի
են (Յես. Յօդ. 101 եւ հետեւեալները):

—

ԳԼՈՒԽԻ Գ.

ԳՈՐԾԱՐԱՆԱՑ ՄԵԶ ՍՊԱՆԵՐՆ ԵՒ ԱՆՈՂՆՑ ՊԱՀՏՈՆԵ

ՀԱՑՈՒԱԾ ԱՐԱՅԻՆ

ՄՊԱՑՔ ՕԹԵԱԿԱՑ

ՅՈՒՌՈՒԱԾ 41

Խւրաքանչիւր Օթեակ Սպաներէ կը կառավարուի, զր-
ըլս իր անդամոց մէջէն կընտրէ, եւ ամենն ալ վերընտրե-
լի են (ըստ 13 եւ 14 յօդուածոց Սահմանագրութեան):

Այս Սպաներն են Գաղղիական ծիսին մէջ.

Մեծարոյ մը.

Մէկ Ա եւ մէկ Բ Դէտ.

Ատենախօս մը.

Քարտուղար մը.

Աւագ Մարզիչ մը.

Գանձապահ մը.

Հիւրընկալ կամ Աղքատախնամ մը.

Երկու Արարողապետ.

Դրոշակիր մը.

Դիւանապետ եւ կնքապահ մը.

Ճարտարապետ մը.

Երկու Մարզիչ.

Էռջնապետ մը.

Փահապան Եղբայր մը.

Էնդ ամենը տասն եւ եւ եօթն սպահք, որոց առաջին
հինգը լոյս կը կոչուին:

ՅՈՒՌՈՒԱԾ 42

Այս սպայներուն թիւն ու անունները կը գանտղանին

ուրիշ ծէսերու մէջ բայց այս զանազանութիւնները՝ օթեակներուն հաստատուած ժամանակ ՄՆԴ Վ-Շ-Դ-Դ-Ի-Ն ստացած հրահանդաց տետրակներուն մէջ որոշապէս նշանակւած են:

ՅՈՒՂՈՒԱՆ 43

Օթեակ մը կրնայ օգնականներ անուանել Ատենախօսի, Քարտուղարի, Արարողապետի եւ կոչնապետի պաշտօններուն:

ՄԵՇԱՐՈՑ

ՅՈՒՂՈՒԱՆ 44

Մեծարոյն միայն կը դումարէ Օթեակը, եւ անոր ամեն նիստերուն կը նախագահէ: Ամեն՝ յանձնաժողովոց՝ կամ պատգամաւորութեանց ալ բնական նախադահն է: Որոշման մը մէջ ձայնից կամ քուէից հաւասար բաժնուած ժամանակ՝ իր ձայնը ծանրակշռութիւն ունի: Իրեն նկատմամբ՝ դիտողութիւն ընել միայն ներեկի է:

ՅՈՒՂՈՒԱՆ 45

Մեծարոյն միայն իրաւունք ունի ՄԵծ Արեւելքէն եւ կած նամակները բանալ եւ Ատենախօսին տալու որ կարդայի: Նոյնպէս Մեծարոյին յատուկ իրաւունքն է:

1. Աշխատութիւնները բանալ ու փակել:
2. Առաջարկութիւնները թուղիչին ներքեւ դնել:
3. Օտարները Որթեադրական խորհրդոց՝ ընծայել:
4. Մինչեւ Վարապետի աստիճանները տալ:
5. Որոշմանց արդիւնքը յայտնել:

6° Նիստերուն ծրագիրներն եւ պաշտօնական տախուտակներն ստորադրել եւ թղթակցութիւնները կանոնաւորել:

7° Հաշուոյ վերաբերեալ ամեն թուղթերն ու տումարները քննել ստուգել եւ 0թեակին որոշած ամեն ճախքերը հրամանագրել:

8° 0թեակին մասնաւոր շահուց վերաբերեալ խնդրոց վրայ խորհրդակցելու կամ ընդհանրապէս Ուխտին շահաւոր բաղձանքներ կամ խնդրուածներ յայտնելու համար ժողով հրաւիրել:

Այս բաղձանքները կամ խնդրուածները Մեծ Արեւելից պէտք է ուղղուին:

ՅՈՒՌԱՆ 46

Մեծարոյն իրաւունք ունի կարգէ խստորոշ և մէ մը խօսքը ետ առնելու (ըսեցնելու), Մինչեւ անդամ կրնայ ցանարը փակել տալ անոր առջեւ (դուրս հանել կամ արտաքսել):

Նմանաստէս, եթէ բարեկարգութիւնը շփոթի եւ իր իշխանութիւնը չյարգուի, նիստը դադրեցնել կամ բոլորովին փակել առանց այն կանոնական արարողութեանց՝ ուրովք սովորաբար կը դոցուին Որմնադրական ամեն աշխատութիւնը:

Այս կերպով փակուած բաշխատութիւնք չեն կրնար նոյն նստին մէջ նորէն բացուիլ դործարանին ուրիշ որ եւ է մէկ անդամոյն վերատեսչութեամբ:

Մեծարոյն կարծիքները կամիխոփէ եւ Առենախօսին եղրակացութիւնը կը հրաւիրէ:

Վերջադէս Մեծ Արեւելից ընական անդամն է, եւ ամեն արարողութեանց եւ արտաքին յարտբերութեանց մէջ 0թեակին ներկայացուցիչն է:

Մեծարոյին բացակայութեան ժամանակ, 'ի բաց առեալ Սահմանադրութեան 37 եւ 38 յօդուածոց նշանակած պարագաները, նուիրապետական կարգաւ Դէտերն ու Աւագ Մարզիչը կանցնին անոր տեղ:

Երբ այս պաշտօնատարներն ալ բացակայ գտնուին, նախկին Մեծարոյն, կամ եթէ չգտնուի՝ գործարանին ներկայ անդամներէն ամենէն հնագոյնը կընայ նախագահէւլ:

ԴԵՏՔ

Դէտերն իրենց սիւներուն կառավարութիւնը կընեն. եւ ամեն ե.՝ խօսք ուղելու համար անոնց պէտք է դիմէ:

Դէտերը թոպիչի հարուածով մը խօսք կը խնդրեն Մեծարոյէն, եւ ուրիշ որ եւ է անդամներէ առաջ 'իրենք կ'ստանան:

Մեծարոյին ծանօցումներն իրենց սիւներուն կը հազորդեն, բարեկարգութիւն ու լուռները պահել կուտան, եւ կրնան լւեցնել այն ե.՝ ները՝ որք առանց խօսք ստանալու խօսելու ելնեն:

Օթեակին մէջ Մեծարոյէն միայն կրնան յանդիմանութիւն լսել.

Ամեն պաշտօնական տախտակները կ'ստորագրեն:

Ա.Ց.Ն.Ա.Խ.Օ.Ս

Առենախօսը՝ ու լստին Սահմանադրութեան եւ լնդ-

հանուր կանոնաց՝ պահապանն ըլլալով, անոնց հակառակ եղող ամեն խորհրդոց եւ որոշմանց պէտք է գէմկենայ, իր ընդդիմութիւնն արձանագրել տայ եւ Մեծ Արեւելից հաշորդէ:

Նմանապէս Օթեակին յատուկ կանոնաց գործադրութեանը կը հսկէ եւ անոնց լուծմանը գէմ կը կենայ, Այս պարագայիս մէջ՝ Օթեակը հետեւեալ նոտին մէջ միայն կընայ Ատենախօսին ընդդիմութեան արժէքին վրայ խորհուրդ եւ որոշում ընել:

Ատենախօսն Արեւելք կը նստի, Խօսքը Մեծարոյն կուտայ անոր՝ վիճաբանութեան ենթարկուած նիւթոց վրայ. բայց օրինաց օգտին համար խօսք ուզած ատեն՝ անմիջապէս պէտք է ստանայ:

Երբոր վիճաբանութիւնը գոցուի, Ատեն. իր եղրակացութիւնը կուտայ՝ առանց պատճառարանելու:

Ատենախօսին յատուկ պաշտօնն է.

1. Աստիճանաց խորհուրդները բացատրել նուիրելոց.

2. Ուխտին ամեն մէկ կոչունքին ժամանակ՝ գործարանին վեցամսեայ աշխատութեանց եւ անոնց արդիւնքին բացատրական (Անալիթիք) տեղեկագիրը ներկայացնել.

3. Կոչունքներն ու դամբանական հանդէսները ճարտարապետական հատուածներով տօնել.

4. Մեծ Արեւելից եւ թղթակցութեանց գրութիւններըն Օթեակին հաղորդել Նմանապէս ամեն պաշտօնական ծրագիրներն ստորագրել:

ՅՈՒՌԻԱԾ 50

Ատենախօսի օգնականը կամ առժամանակեայ տեղապահը բուն պաշտօնատէրին բացակայութեան ժամանակ սկսուած գործը պէտք է աւարտէ եւ իր եղրակացութիւնը տայ, մինչեւ անդամ եթէ պաշտօնատէրը վիճաբա-

Պիտի
Առաջի Ալպյանն
Համբէրէ ։ Մարտ

Նութեան կամ խորհրդակցութեան միջոցին վրայ հասնի:

ՔԱՐՏՈՒԹՅՈՒՆ

ՅԵՒՈՒԱԾ ՑԱ

Դարտուղարն Արեւելք կը նստի Աւենախօսին դիմացը:
 Անոր պէս խօսք կը խնդրէ Մեծարոյէն:
 Աշխատութեանց ուրուազիծը էկչինէ, եւ ուրուազձին
 վրայ ձարտարապետութեան տախտակը կը պատրաստէ, որ
 հետեւեալ նստին մէջ Օթեակին հաւանութեանը կը ներ-
 կայանայ:

Թղթակցութիւններն եւ գումարմանց հրաւելները կը
 դրէ Մեծարոյին տնօրէնութեան ներքեւ:

Իր յատուկ պաշտօնն է Մեծ Արեւելից զբկուելիք
 պատկերները շինել եւ անոնց յարմար ժամանակ յուղար-
 կուելուն մասնաւորապէս պատախանատու է:

Գործարանէն ելած ամեն տախտակները կ'ստորագրէ,
 ինչպէս նաեւ ձարտարապետութեան դրքին մէջ արձա-
 նագրեալները:

Ատենախօսին պէս ներկայ կը գտնուի ներկայ քուե-
 համարաց. իւրաքանչիւր նստի տաենադրութեան մէջ բա-
 րեգործութեան գանձանակին արդիւնքը պէտք է արձա-
 նագրէ, եւ Մեծ Արեւելիքէն ելած այլ եւ այլ գրութեանց
 լնթերցութեան ալ նիստ առ նիստ յիշատակէ:

Պաշտօնական տախտակները քարտուղարն ալ կ'ստո-
 րագրէ:

ՄԱՐԶԻՔ

ՅԵՒՈՒԱԾ ՑԱ

Աւագ Մարդին Ա եւ Բ Դէսերտուն եւ մինչեւ անդամ

Մեծարոյին բացակայութեան ժամանակ տեղակալութիւն)
կընէ :

Իր յատուկ պաշտօնն է .

1. Ամենամեծ ուշադրութեամբ սուսուգել ամեն 'մէկ
այցելուաց որմնադրական տիտղոսները աղիւսել (անցա-
խօսքն ու խորհրդական նշաններն առնուլ) եւ իլ պաշտա-
ման արդիւնքը Մեծարոյին իմացնել .

2. Փորձերը պատրաստել եւ ուղղել .

3. Նուիրեալները ներածել եւ անոնց ուղեւորութեան-
ցըն ընկերակցիլ .

4. Քուէից գնտակները կամ տոմսակները հաւաքել եւ
քուէհամարին ներկայ գտնուիլ .

Աւագ Մարդիչին բացակայութեան ժամանակ միւս
Մարդիչները կը տեղակալեն՝ 'ի բաց առեալ գործարանին
նախագահութիւնը .

Մարդիչներուն յատուկ պաշտօնն է Տաճարին ներսն ու
դուրսը բարեկարգութիւն ու լուսութիւն պահել եւ Մեծա-
րոյին տուած ամեն պատուէրները գործադրել .

ԱՐԱՐՈՂԱՊԵՏԱ

ՅՈՒԴՈՒԱԾ 53

Արարողապետներուն պաշտօնն է՝ արարողութիւններն
ու դղել Մեծարոյին հրամանաւ այցելուները ներածել ,
Ե՞՛ներն իրենց աստիճաններուն եւ պաշտամանց կարգա-
ւը նստուցանել առաջարկութեանց պարկը շրջագայեցնել
եւ իրենց բախմունքն այցելու Ե՞՛րց Պաշտօնակալաց եւ
նորընծայից բախումներուն հետ միացնել .

Քուէից գնտակները կամ տոմսակները կը բաշխեն ու
կը հաւաքեն , Սիւներուն մէջ տրուած կարգախօսքը կամ

Վեցամսախառքը կ'ստուգեն ու Մեծարոյին կը տանին,
եւ այլն։

ՀԱՐՑԱՐԱՊԵՏ

ՅՈՒՂԻԱԾ 54

Օթեակին կահ կարասին յատկապէս ծարտարապս-
ինամոց եւ պաշտպանութեան յանձնուած է։

Ցումոր մը կը բռնէ, օրոյ մէջ բոլոր կահ կարասին
իրենց անուններովն ու ձեւերովը պէտք է արձանադրին։

Տեղական նորոգութիւններն ու կարասեաց պակասնե-
րուն լրումը կամ հինցած ու անպիտանացածներուն փոխուի-
լը կամ նորոգութիլը կառաջարկէ. շինութեանց, նորոգու-
թեանց եւ զարդարանաց ծրագիրներն եւ անոնց համար
պէտք եղած ծախուց հաշուեցոյցը կը ներկայացնէ. անոնց
գործադրութեանը կը հոկէ, շինողներուն հաշիւները կառ-
նու, եւ ստուգել կամ կանոնաւորել կուտայ՝ չեթէ ինք այն
տեսակ գործողութեանց հմտութիւն չունի։

Ցներուն ու կոչունքներուն կարդադիրն է, եւ ասոնց
զարդարանքն ու բոլորովին իրեն յանձնուած է։

ՀԱՅՈՒԱԿԱԼ ԵՒ ՊԱՏԱԽԱՆԱՑՈՒ

ՊԱՅՏՈՒԱԿԱԼ 4

ՅՈՒՂԻԱԾ 55

Հաշուակալ եւ պատաօխանատու պաշտօնակալներն են
դանձապահը Աղքատախանամն եւ Դիւանապետ—կնքապահը։

Այս պաշտօնակալաց տումարները թուադրեալ ամեն
մէկ թերթերը նշանադժեալ եւ առաջին ու վերջին երես-
ները Մեծարոյին ու Քարտուղարէն ստորագրեալ պիտի

ըլլան. Երբոր լցուին, դիւանատունը կը դրուին.

Երբոր Հաշուակալ Պաշտօնակալի մը հաշուոյն գլուխ կապուած միջոցին հրաժարմամբ կամ այլ պատճառաւ ու-ըիշ մը յաջորդէ. Հաշուետումարները վարչական խորհրդին կը յանձնուին, որ ամեն մէկ տեսակէ հասութից կամ ծառ-խուց համար մասնական հաշիւ մը կը դիմակապէ. Յաջոր-դող պաշտօնակալին պատասխանատուութիւնը սոյն գլւ-խակապութեան թուականէն կ'սկսի:

Հաշիւները վերջնական կերպով Օթեակէն ընդունուե-լէ եւ հաշիւներուն մնացորդն ալ մնտուկին յանձնուելէ ետեւ՝ Հաշուակալը կազատի:

ՅՈՒՂԻԱԾ 56

Օժանդակ պաշտօնակալները բուն պաշտօնակալաց տե-զը կը բռնեն անոնց բացակայութեան միջոցին, եւ քանի որ իրենց պաշտօնավարութիւնը տեսէ, նոյն իրաւունքն ու ար-տօնութիւնները կը վայելեն,

Այսպէս է նաեւ ամեն Ե՞՞րց համար՝ որք առժամա-նակեայ կերպիւ որ եւ իցէ պաշտօն մը կատարեն:

ՅՈՒՂԻԱԾ 57

Հաշուակալ Սպայից կամ Պաշտօնակալաց մէջէն Դան-ձապահն ու Աղքատախնամը իւրաքանչիւրն իր մասին պա-տասխանատու են իրենց գործարանին առ Մեծն Արեւելք ունեցած այլեւ այլ տրոց յարմար ժամանակին հատուցմանը,

ՀԱՅՈՒԱՆ ԵՐԿՐՈՌ
ՍՊԱԾՔ ԺՈՂՈՎԱՐԱՆԱՑ

ՅՈՒՈՒԱՆ 58

Ուզ—Քռօայի Ասպետաց ժողովարանի մը Սպանելն
են՝ Գաղղիական ծիսին մէջ.

Մէկ : Գահերեց.

» Ա. եւ մէկ Բ. Դէտ.

» Ատենախօս.

» Քարտուղար.

» Աւագ Մարզիչ.

» Գանձապահ.

» Աղքատախնամ:

Երկու Արարողապետք.

Մէկ Կնքապահ—Դիւանապետ.

» Ճարտարապետ—Համարակալ

Երկու մարզիչք.

Մէկ Ճաշապետ.

ՀԱՅՈՒԱՆ ԵՐԲՈՐԴ

ՊԱԵՏՈՒԱՏԱՐ ԽՈՐԴՐՈՒԱՐԱՆԱՑ

ՅՈՒՈՒԱՆ 59

Երեսներորդ աստիճանի Քատ Ասպետաց խորհրդարանի մը Սպանելն են.

Մէկ : Գահերեց.

Երկու Դէտք.

Մէկ : Ատենախօս.

» Քարտուղար,

“ Գանձապահ։
“ Աղքատախնամ։
Երկու Մարդիչք։
Մէկ կնքապահ—Դիւանապետ։
Երկու Արարողապետք։
Մէկ կոչնապետ։

ՅՈՒՂԻԱԾ 60

Միջին Աստիճանաց մէջ Սպայից ախտղոսները կը զանազանին, բայց Մեծ Ալեւելից հրահանգի տետրակներուն մէջ ողուուած են։

ՅՈՒՂԻԱԾ 61

Օթեակաց ներքին վարչութեան եւ Սպայից ստորոգելիներուն վերաբերեալ տրամադրութիւնները ժողովարանաց եւ խորհրդարանաց ալ կը պատկանին։

ՀԱՏՈՒԱԾ ԶՈՐՌՈՐԴ

ՍՊԱՍԱԽՈՐ ԵՂԲԱԵՐ

ՅՈՒՂԻԱԾ 62

Սպասաւորը Ե.՝ մ' է, որ գործարանին սպասահարկութեանց մասին գահերէցին եւ Սպայից հրամանները կատարելու համար գործարանէն կընտրուի։ Խորհրդակցութեանց ներկայ Ակնար գտն։

ՀԱՑՈՒԱԾ ՀԻՆԴԵՐՈՐԴ

ԱՅՍԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՊԱՇՏԱՄԱՆՑ

ՅՈԴՈՒԱԾ 63

Անմիասնականութիւն կայ.

1° Մի եւ նոյն դործարանի գահերեցին եւ ուրիշ ըստայից պաշտօններուն մէջ.

2° Հաշուակալին եւ անոր հաշիւները քննող ու վաւերացնող Սպայից պաշտօններուն մէջ.

3° Հինգ առաջին պաշտամանց մէջ.

ՅՈԴՈՒԱԾ 64

Որմագիր մը չկրնար մէկէն աւելի դործարանի գահերեց ըլլալ.

ԳԼՈՒԽ Դ.

ԸՆՑՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՀԱՍՏԱՑՈՒԹԻՒՆՔ

ՍՊԱՑԻՑ

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ԳՈՐԾԱՐԱԿԱՑ ՄԵՐ ԸՆՑՐՈՒԹԵԱԿԱՑ ՔԱՍԱՆԱԿ

ՈՒ ԵՂԱՆԱԿԸ.

ՅՈԴՈՒԱԾ 65

Օթեակները պարտաւոր են ամեն տարի իրենց Սպայից ընդհանուր ընտրութիւններն ընել՝ գեկտեմբեր ամսոյն մէջը՝ ձմրան արեւադարձին ժամանակ։

Ժողովարանները մետասաներորդ ամսոյն (յունվարի) ։
մէջ։

Խորհրդարանները որմնադրական տարւոյն երկոտասա-
ներորդ ամսոյն (փեարվարի) մէջ։

Ընտրութեանց վերաբերեալ աշխատութեանց օրը, ժա-
մը, աեղը եւ որոշ նպատակը պէտք է միշտ ծանուցուին
գործարանի մը բոլոր անդամոց, իւրաքանչիւրին բնակարա-
նը զրկուած հրաւիրանաց տախտակներուն մէջ։

ՅՈՒՌԻԱԾ 66

Ընտրութիւնները գաղտնի քուէարկութեամբ պէտք
է կատարուին քուէթուղթերու վրայ, զորս գահերեցը
բարձրաձայն կը կարդայ 'ի ներկայութեան Ատենախօսին
եւ Քարտուղարին։

Քուէից արդիւնքն հետզհետէ կ'ստուգուի ու կը գըր-
ւի երկու քննիչներէ զորս միշտ գահերեցը կընտրէ գոր-
ծունեայ (ներկայ) անդամոց մէջէն։

ՅՈՒՌԻԱԾ 67

Եօթն առաջին Սպայութեանց համար եղած բնտրու-
թիւնները վաւերական չեն՝ մինչեւ որ իւրաքանչիւր ընտ-
րելի բացարձակ առաւելութեամբ քուէ ստացած չըլլայ։

Եթէ քուէհամարի քննիչները քուէից արդիւնքին վրայ
չկրնան համաձայնիլ, վերստին քուէարկութիւն կըլլայ։

Միւս Սպայութեանց համար քուէից համեմատական
առաւելութիւնը բաւական է, եւ գաղտնի քուէարկու-
թիւնն անհրաժեշտ չէ։

ՅՈՒՌԻԱԾ 68

Եօթն առաջին Սպայութեանց ընտրութիւններուն ժա-

մանակ եթէ առաջին քուէարկութեամբ բացարձակ առաւ-
ւելութիւն չգտնուի. քուէարկութիւնը նորէն կ'սկըսի.

Եթէ երկրորդ քուէարկութեամբ ալ բացարձակ առաւ-
ւելութիւն չգտնուի, երկու առաւելագոյն քուէ ստացո-
ղաց վրայ երրորդ անդամ քուէարկութիւն կը լլայ:

Եթէ այս երրորդ քուէարկութեան արդիւնքը հաւա-
սար ենէ, երկու ընտրելեաց ո՞րն որ հնագոյն որմնադիր
է՝ ան կ'ընտրուի. իսկ եթէ որմնադրական հնութեամբ ալ
հաւասար ըլլան, տարիքով երիցագոյնը կը նույնականացնի:

ՅՈՒՂԻԱՆ 69

Այն քուէարկութիւնը՝ որոյ մէջ քուէից թիւը քը-
ւէարկուաց թիւէն աւելի ըլլայ՝ անվաւեր եւ ոչինչ է:

ՅՈՒՂԻԱՆ 70

Ընտրութեանց աշխատութիւնները՝ գործարանին աը-
ւած աստիճաններուն ամենէն ստորինովը կը բացուին:

ՀԱՑՈՒԱՆ ԵՐԿՐՈՐԴ

ՍՊԱՅՈՒԹԵԱՆՑ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՃԱՄԱՐ
ԸՆՏՐՈՂ ԵՒ ԸՆԹՐԵԼԻ ՇԱԼԱՎՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ

ՅՈՒՂԻԱՆ 71

Ընտրութեան իրաւունք ունին գործարանին այն ամեն
գործունեայ անդամք՝ որք դոնէ երեք ամսէ ՚ի վեր կը
հանդանակեն:

Գործարանի մը մէջ՝ բաց ՚ի գահերիցութենէ՝ ուրիշ
որ եւ է պաշտօնի կրնան ընտրուիլ այն անդամները միայն՝

որք վեց ամսէ 'ի վեր կը հանդանակեն, եւ Գործարանին
տուած ամենէն բարձր աստիճանն ունին:

Այն որմնադիրները՝ որ Գործարանին սնտուկին պարտք
ունին, եւ անոնց՝ որ դադարման կամ արդիլման պատ-
ժոյ ներքեւ ինկած են, ընտրող եւ ընտրելի ըլլալու իրա-
ւունքէ զուրկ են:

ՅՈՒՌԻԱԾ 72

Գործարանի մը գահերէց ընարուելու համար պէտք ե-
ղած պայմաններն են.

1. Երսուն տարին լրացուցած ըլլալ.
2. Գործարանին կայանն եղող Արեւելքին 20 քիլոմէ-
թը տարածութեամբ շրջանակին մէջ իսկապէս կամ քա-
ղաքապէս բնակութիւն հաստատած ըլլալ.
3. Գործարանին տուած ամենէն բարձր աստիճանը գո-
նէ տարիէ մ'ի վեր ստացած ըլլալ:

ՅՈՒՌԻԱԾ 73

' Ընարողութեան եւ ընտրելիութեան վերոյնշանակ-
եալ իրաւունքներն եւ ընարութեան օրինական ձեւերը
նոյն են Ժողովարանաց եւ Խորհրդարանաց համար:

ՅՈՒՌԻԱԾ 74

Որմնադիրմը՝ որ Որմնադրական պատիժ կրած է՝ չկըր-
նար Մեծ Արեւելքից անդամ կամ Գործարանի գահերէց ըլ-
լալ մինչեւ որ Մեծ Վարպետին յատուկ որոշմամբ այն պա-
տիժը վրայէն վերցած չըլլայ:

ՀԱՑՈՒԱԾ ԵՐԵՊՐԻ

ՀԱՍՏԱՑՈՒԹԻՒՆ ՄՊԱՅԻՑ

ՅՈՒՌՈՒԱԾ 75

Ամեն Սպայ՝ պաշտօնական կերպիւ ճանչուելէ առաջ՝ զինքը հաստատող Գահերէցին երդում կուտայ Ուխտիս Սահմանադրութիւնը, որէնքներն ու ընդհանուր կանոնները հաւատարմութեամբ պահպանելու։ (Յօդ. 29.)

ՅՈՒՌՈՒԱԾ 76

Նոր ընտրուած Գահերէցն իր նախորդին ձեռօք կը հաստատուի, եւ եթէ նախորդը բացակայ ըլլայ, նուիրապետական կարգաւ ամենէն բարձր աստիճանն ունեցող Սպային ձեռօք կը հաստատուի։

ՅՈՒՌՈՒԱԾ 77

Գահերէցը՝ հաստատուելէն անմիջապէս ետքը՝ Ա. Եւ Բ. Դէտերուն մէկէն հաստատութեանը կը ձեռնարկէ եւ զանոնք կը ճանչցընէ գործարանին։

Մնացեալ Սպայից հաստատութիւնը խմբովին կը կատարուի։

Ատենախօսոր՝ իւր եւ անոնց կողմէն կերդնու։

Հաստատութեանց իւրաքանչիւրը բախմամբ եւ սովորական ձայնարկութեամբ կը նուիրագործի։ Այս գործողութիւնը՝ ընտրութեանց նիստերուն անմիջապէս յաջորդող նստին մէջ պէտք է կատարուի։

—————

ՀԱՏՈՒԱԾ ԶՈՐՌՈՐԴ

ՊԱՅԵԱՄԱՆՑ ՊԱՐԱՊՈՒԹԻՒՆ

ՅՈՒՈՒԱԾ 78

Եթէ պաշտօն մը պարապ մնայ Սպայի մ'ընտրութեան
առաջին վեց ամսոյ միջոցին, 66 եւ յաջորդ յօդուածոց
մէջ սահմանեալ ձեւերուն համեմատ ուրիշ մը կընտրուի.

Եթէ պարապութիւնն երկրորդ վեց ամսին մէջ պա-
տահի, եւ պարապ մնացած պաշտօնն ալ Դէտերուն եւ
Աւագ Մարզիչինը չըլլայ, Գահերէցն այն պարապ պաշտօն-
ներուն վրայ պաշտօնաւորներ կանուանէ որմնադրական
տարւոյն մնացեալ ժամանակին համար.

Եթէ երկրորդ վեցամսին մէջ Գահերէցին, Դէտերուն
եւ Աւագ Մարզիչին պաշտօնը պարապ մնայ, նուիրապե-
տական կարգաւ կրնան փոխանակուիլ.

Սակայն Օթեակը միշտ իրաւունք ունի այս սպաներուն
փոխանակութիւնն ընտրութեամբ կատարելու.

ԳԼՈՒԽ Ե

ՄԻԱԿ ՀԱՏՈՒԱԾ

ԳՈՐԾԱՐԱՆԱՑ ԳԱՀԵՐԵՑՆԵՐՈՒՆ ՄԵՇ ԱՐԵՒԵԼՔԵՆ

ՀԱՆՁՈՒԻՆԸ

ՅՈՒՈՒԱԾ 79

Գործարանները պարտական են ընտրութեանց կատար-
ւելին առ առաւելն մինչեւ մէկ ամիս Մեծ Արեւելից յու-
ղարկել.

1. Իրենց ընտրութեանց ատենադրին մէջէն Գահերէցի ընտրութեան վերաբերեալ մասին քաղուածը՝ Այս քաղածը հինգ առաջին Սպաներէն ստորագրուած կնքուած ու դրոշմուած պէտքէ ըլլայ ներկոյ Սահմանադրութեան կցուած օրինակին համեմատ :

2. Գահերէցին յայտարարութիւնը՝ իրմէ գրուած ու ստորագրուած՝ ներկոյ Սահմանադրութեան կցուած օրինակին համեմատ :

ՅՈՒՂԻԱԾ 80

Եթէ ընտրութիւնը հաստատող թուղթերը կանոնաւոր են, եւ գործարանն ալ կանոնաւորութեան վիճակի մէջէ, ՄԵԾ. Արեւելքը կը հրամայէ Գահերէցներուն անունը ու կի մատեանին մէջ արձանագրել եւ թուղթերն ալ գիւանատունը գնել

ՅՈՒՂԻԱԾ 81

Գործարանաց գահերէցներուն տալիք երդումն այս է. և կերգնում հնազանդիլ Որմնադրական Սահմանադրութեան, եւ Ռւխտիս օրինոցն եւ ընդհանուր կանոնաց:



ԳԼՈՒԽ Զ.

ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՔ ԳՈՐԾԱՐԱՆԱՑ ՄԵՇ ԱՐԵՒԵԼԻՑ
ԵՒ ԽՐԱՐՈՒ ՀԵՏ

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՔ ԳՐՐԱՐԱՆԱՑ ՄԵՇ ԱՐԵՒԵԼԻՑ ՀԵՏ

ՅՈԴՈՒԱԾ 82

Նորակազմ գործարան մը իր հաստատութենէն առաջ
շկրնար ոչ ներածում ընել, ոչ որդեգրել եւ ոչ կանոնաւորել:

Նմանապէս շկրնար գրոշմու կնիք գործածել, որոյ ծը-
րադիրը նախապէս Մեծ Արեւելից ներկայացուցած ՀԱԱՅ,

ՅՈԴՈՒԱԾ 83

Եէսի մը վրայ հաստատուած գործարան մը յկրնար
ուրիշ ծէսի հետեւիլ առանց Մեծ Արեւելքէն հրաման ըս-
տանալու, եւ տուանց ծիսից լծորդման համար սահման-
ւած կանոնաց համաձայնելու . ապա թէ, ո՞՝ կը խնջուի
թղթակցութենէ:

ՅՈԴՈՒԱԾ 84

Սէն եւ Սէն—է—Օազ գաւառաց գործարաններուն
գահերէցները պարտաւոր են Մեծ Արեւելից կուունքնե-
ներուն ներկայ գտնուիլ, ինչպէս նաեւ. Օրէնսդրական ժո-
ղովին անգամները, Ռւխտիս Խորհրդին անդամները, Պատ-
րոյ Սպանները եւ Ռւխտիս աւագ աստիճանաւորները,

ՅՈՒՌՈՒԱԾ 85

Այս գործարանները, որ պայմանեալ ժամանակին մէջ դահերէցին ընտրութիւնն ու յայտարարութիւնը Մեծ Արեւելից չզրկեն, վեցամսեայ կամ տարեկան խօսքերը չեն ստանար,

ՅՈՒՌՈՒԱԾ 86

Գործարանաց առ Մեծ Արեւելք ուղղած գրութիւններն ինչ որ ալ ըլլան, կանոնաւորութեան համար հինգ առաջին Լոյսերէն ստորագրեալ եւ գրոշմեալ ու կնքեալ պէտք է ըլլան:

Այս պայմանները վրան չմիացնող որ եւ է գրութիւն պաշտօնական չճանշուելով կը մերժուի եւ անգոյ կը համարուի:

ՅՈՒՌՈՒԱԾ 87

Մեծ Արեւելից կողմէն Օթեակներուն զրկուած այլ եւ այլ թղթոց, գլխաւորապէս Պէլբէնաւրուն եւ ընդհանուր կանոնադրութեանց պահպանութեան հոգ պիտի տանին Գահերէցք եւ Դիւանապետք:

Անոնքործարանաց յատուկ սեփականութիւնն են, եւ ոչ ոք կրնայ ուրիշի տալը

Տեսուչները պէտք է միշտ իրենց ներկայացնել տան զանոնք:

ՅՈՒՌՈՒԱԾ 88

Երբոր Օթեակ մ'իր անդամներէն մէկուն ՚ի նպաստ օդութիւն խնդրելու համար Մեծ Արեւելքէն կախում

ունեցող գործարանաց ուղղապէս դիմել ուղէ, պէտք է կանխաւ հրաման ստանայ Մեծ Արեւելքէն»

Ասոր համար գրաւոր խնդիր մը պիտի զրկէ գրոշմեալ կնքեալ եւ գործարանին հինգ առաջին Լոյսերէն ստորագըրեալ, որոյ մէջ պիտի յայտնէ նոյն հրամանը խնդրելու զինքը պարտաւորող իրողութիւնները, ինչպէս նաև թըզթակից գործարանաց ուղղելիք շրջաբերականին պատճէնը:

Եթէ հրամանը չնորհուի, հրամանին եւ անոր թուականին ճիշդ յիշատակութիւնը հրամայեալ տախտակին գըւուիը պիտի գրուի, եւ այն ժամանակ՝ կրնայ գործարանաց դիմելու:

Այս հրամանն երբէք իրաւունք չտար օտար որմնագրական իշխանութեանց դիմելու:

ՀԱՏՈՒԱԾ ԽՐԿՈՐՈՒԹ

ԳՈՐԾԱՐԱՆԱՅ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԻՔ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՑԿԵՐՆԵՐՆ
ԵՒ ԵՂԵՇԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

ՅՈՒՈՒԱԾ 89

Մէն մի գործարան պարտաւոր է՝ ամեն տարի՝ որմնադրական տարւոյն երկու առաջին ամսոց մէջ Մեծ Արեւելից զրկել իր քոլոր գործունեայ անդամոց ճիշդ պատկերը (ցուցակը):

Այն պատկերը՝ գործարանին եօթն առաջին Լոյսերէն ստորագըրեալ եւ կնքեալ ըլլուլէ զատ, Ուխտիս ընդհանուր Քարտուղարութենէն գործարանաց խնդրանոք զրկուած տետրակին կամներկայ Սահմանադրութեան կցորդ որինակին համեմատ տետրակի մը վրայ շինուած պէտք է ըլլայ:

Եօթն առաջին Լոյսերը պատասխանատու են այս ար-
րամադրութեանց կատարմանը, եւ եթէ մինչեւ որմնադ-
րական տարւոյն երրորդ ամսին առաջին օրը (մայիս 1) կա-
տարուած շրլան, կրնան որմնադրաբար դատաստանի են-
թարկուիլ:

ՅՈՒՌԻԱԾ 90

Այեն գործարան պարտի ամեն տարի Մեծ Արեւելից
դրկել, իր պատկերին հետ նաեւ անցեալ տարւոյն մէջ եղ-
ծուած եղբ., ց ցուցակը, եղծման պատճառներուն եւ ա-
նոնց ծանուցման թուականին հետա:

Այն ցուցակներն ամեն տարի թղթակցութեան բոլոր
գործարաններուն սկիտի դրկուին՝ եղծման պատճառներն
ալ նշանակուելով:

ՀԱՑՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

ՎԿԱՅԱԿԱՆԻՐ, ԿՈՆԴԱԿ, ԱՐՅՈՒՆԱԳԻՐ, ԵՒ ԱՅԼՆ

ՅՈՒՌԻԱԾ 91

Մեծ Արեւելից՝ կանոնաւոր Որմնադրաց ամեն մէկուն՝
իրենց գործարանին խնդրանք՝՝ որմնադրական աստիճա-
նաց վկայականներ կուտայ մագաղաթի վրայ, Մեծ Արե-
ւելից դրոշմոնիս ու կնքովը վաւերացեալ եւ Մեծ Վարպե-
տէն, Օժանդակ Մեծ վարպետներուն մէկէն եւ Ուխտիս
խորհրդոյն գոնէ երկու անդամներէն ստորագրեալ

Այս վկայականները՝ միայն վարպետներուն կը սրուին,
Տիրքօմ անունով, Ռուզ—Քրօայի աստիճանուորաց կը սրբ-
ւին Պրէֆ (կոնդակ) անունով, Քամակ, Ասպետաց եւ բարձ-

լաստիճան՝ որմնադրաց կը տրուին բաթանթ (արտօնագիր) անունով։

ՅՈՒՌԻԱԾ 92

Ամեն գործարան՝ պարտաւոր է՝ որմնագիր եղբօր մը տուած ամենէն բարձր աստիճանին պատասխանող վկայականը Մեծ Արևելքէն խնդրելու։

Գործարան մը, որ այն աստիճանին վկայականող չունեցող որմնագիր մը որդեգրութեան ընդունի, պարտաւոր է նոյնպէս անոր վկայականը Մեծ Արևելքէն խընդրելու։

Այս խնդիրն՝ առ առաւելն մինչեւ մէկ ամիս պէտք է զրկուի առ Մեծն Արևելք։

Գահերէցն ու քարտուղարը պատասխանատու են այս տնօրէնութեան կատարմանը։

ՅՈՒՌԻԱԾ 93

Գործարան մը, գործարանի գահերէց մը, որմնագիր մը, չկրնար որ և է աստիճանի համար՝ վկայական, հաստատագիր կամ ուրիշ թուղթ տալ, բաց ՚ի գործարանին կնքով վաւերացեալ անդորրագիրէ մը։

Այս տրամադրութեան գէմ վարուսդ գործարան մը կընայ դադրիլ և մինչեւ իսկ թղթակցութենէ ջնջուիլ։

Գործարանի գահերէց մ՚իր պաշտօնէն դադրիլ և մինչեւ իսկ իր որմնադրական իրաւունքներէն զրկուիլ։

Որմնագիր մ՚իր որմնադրական իրաւունքներէն զրկուիլ։

Յայնկայս ծովու գործարաններուն արտօնութիւն արքածած է՝ ստիպողական պարագաներու մէջ վարպետի աստիճանին համար վկայագիր տալ. բայց այս վկայագիրերն ալ, որոց ձեւն ու իմաստը Մեծ Արևելքէն որոշուած

Է . մինչև մէկ տարի զօրութիւն ունին , և չեն կրնար նորոգիլ .

ՀԱՏՈՒԱԾ ԶՈՐՈՐԴ

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԱՐԱԿԱՑ

ՅՈՒՈՒԱԾ 94

ՄԵծ Արևելքէն կախում ունեցող գործարանաց վիճակը քննելու համար ՄԵծ Վարպետէն անուանեալ տեսուչները պարտաւոր են .

1. Իրենց ցոյց տրուած գործարանաց աշխատութիւններուն , և եթէ հնար է՝ ներածման մարարողութեան ներկայ գտնուիլ .

2. Ստուգել թէ ճարտարապետութեան գերքը կանոնաւո՞ր . է .

3. Ստուգել թէ Սահմանադրութիւնն և ընդհանուր կանոնադրութիւններն իրենց ամեն արամադրութիւններով կը պահպանուին .

4. Ստուգել թէ համարակալաց տումարները ճիշդ ու կանոնաւո՞ր են .

5. Նոյն գործարանաց խնդրուածքն իմանալ և ՄԵծ Արևելից հաղորդել իրենց խոկ դիտողութիւններովը կամ առաջարկութիւններովը =

Այս տեսուչները չեն կրնար իրենց անդամ գտնուած գործարաններուն վրայ տեսչութիւն ընել :

ՀԱՏՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՔ ԳՈՐԾԱՐԱԿԱՑ ԸՆԴ ՄԻՄԵԱՀԸ

ՅՈՒՈՒԱԾ 95

Գործարաններն որդեգրութեան կամ անդամակցութեան յարաբերութիւններէ զատ ուրիշ յարաբերութիւննեն կրնար ունենալ միմեանց հետ Հաւաքաբար խորհուրդ կամ որոշում ընելն արգիլեալ է իրենց :

ՀԱՏՈՒԱԾ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱԻԱԹԱԿԱՆ ՈՐԴԵԳՐՈՒԹԻՒՆՔ

ՅՈՒՈՒԱԾ 96

Տարբեր ծէսերով՝ բայց մի և նոյն կարգի աստիճաններով՝ գործարանները կրնան փոխադարձաբար իրարու որդեգրիլ .

Քանի մը գործարանաց իրարու որդեգրիլը չկրնար ՚ի միասին խորհուրդ և որոշում ընելու իրաւունք տալ .

Այլ և այլ կարգէ գործարանաց մէջ եղբայրական թըղթակցութենէ զատ ուրիշ յարաբերութիւն չկրնար ըլլալ :

Հաւաքական որդեգրութիւնը՝ դրամական որ և է պարտականութիւն չկրնար գնել որդեգրելոց վրայ , և գանձային կամ վարչական խնդրոց մէջ քուէ տալու իրաւունք չտար :

ԳԼՈՒԽԻ Է.

ՄԻԱԿ ՀԱՏՈՒԱԾ

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ ԳՈՐԾԱՐԱՆԱՑ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԻՑԵ ԱՐՑԱՔԻՆ
ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ ՃԵՏ.

ՅՈՒԹՈՒԱԾ 97

Գործարան մը ; որ և իցէ պարագայի մէջ , և ինչ և իցէ պատրուակաւ չկրնար ուղղապէս քաղաքային իշխանութեան դիմել՝ առանց Մեծ վարպետէն հրաման ըստանալու .

ՅՈՒԹՈՒԱԾ 98

Գործարանք չեն կրնար հասարակային հանգանակութեանց կամ ստորագրութեանց միջամտել՝ առանց Մեծ Աքեւելից հրամանին կամ անոր միջնորդութեան .

Առանց այս պայմանին արգիլեալ է իրենց ըրած հանգանակութեան արդիւնքն ուղղապէս քաղաքային իշխանութեան , մասնաժողովոց կամ լրագրաց զրկել . այլ պէտք է Մեծ Աքեւելից զրկեն , նա ալ իրենց անունով հատուցանէ առ որ անկ է .

Բարեգործական նպատակներու սպհմաննեալ տեղական հանգանակութիւնները Մեծ Աքեւելից հրամանն ստանալու պայմանէն ազատ են :

ՅՈՒԹՈՒԱԾ 99

Ուղերձով կամ օտարաց մէջ սովորական եղած ուրիշ և միջոցներով հրապարակային ցոյցեր ընելն արդիւթալ է գործարանաց :

ՅՈՒՌԻԱԾ 100

Իւրաքանչիւր գործարանաց մէջ Գահերէցն անձնապէս պատասխանառու է այս արամադրութեանց հակառակ գործոց, և գործարանն ալ անպատիժ չմնար.

ԳԼՈՒԽ Ը.

ԳՈՐԾԱՐԱՆԱՑ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆՆԵՆՔ. ՏԱԺԱՐԻՆ ՄԷԶ ԲԸՆ-
ՆՈՒԵԼԻՔ ԸՆԹԱՑՔՆ ԵՒ ԱՇԽԱՑՈՒԹԵԱՆՑ ՄԷԶ ՊԱՀՈՒԵԼԻՔ
ԿԱՐԳԸ.

ՀԱՏՈՒԱԾ Ա.

ՊԱՐՏԱԿԱՐՄԵԱ, ՆԻՍՏԵՐ, ԵՒ ԿԱՐԳ ԱՇԽԱՑՈՒԹԵԱՆՑ.

ՅՈՒՌԻԱԾ 101

Ամեն խորհրդաւոր գործարան պարտի գոնէ ամիսը միանգամ պարտաւորական նիստ ընել, առանց հաշուելու ներքին վարչական պիտոյից համեմատ Մամնաժողովոց գումարմունքը.

ՅՈՒՌԻԱԾ 102

Սակայն ներեալ է գործարանաց պարապուրդ ընել երբոր պատշաճ դատին. բայց չեն կրնար երբէք ազատ ըլլալ առ Մեծ Արևելս ունեցած տուրքերնին վճարելէ. Փարիզի մէջ ալ տաճարաց վարձման տուրքը վճարելէ.

ՅՈՒՌԻԱԾ 103

Ամեն ժողովարան պարտի տարին գո՞նէ չորս պարաւորական նիստ ընել:

ՅՈՒՌԻԱԾ 104

Ամեն խոքհրդարան պարտի տարին գո՞նէ երեք պարտաւորական նիստ ընել :

ՅՈՒՌԻԱԾ 105

Գործարանի մը նստին ներկայ գանուռող անդամոց թիւրյատուկ տումարի մը մէջ անոնց իւրաքանչիւրին անհատական ստորագրութեամբը պէտք է ստուգուի, և երբոր ստորագրութիւն դնել ուզող չմնար, գահերէցը կը գոցէ տումարը :

Առանց եօթն գործունեայ որմնադիր անդամոց ներկայութեան՝ աշխատութիւնք չեն կրնար բացուիլ :

Որոշում տալու համար՝ օրինաց նշանակած պարագաներուն մէջ քուէն անհրաժեշտ է. իսկ այն պարագաներէն դուրս՝ որոշումը ձայնարկութեամբ կրնայ ըլլալ. սովորական պարագաներու մէջ ալ ոտքի ելնելով ունստելով. բայց երբոր քուէ տալու իրաւունք ունեցող եօթն անդամոց կողմէ քուէ խնդրուի, քուէարկութիւնը պարտաւորական է :

ՅՈՒՌԻԱԾ 106

Դահերէցը, Ատենախօսն և գործի մը տեղեկաբերը միշտ իրաւունք ունին խօսելու. ուրիշ որ և է անդամ մը չկրնար խնդրոյ մը վրայ երեք անգամէն աւելի խօսք ուղել :

Արևելք նստող Եղբ. ք՝ խօսքն ուղղապէս գահերէցէն կ'ստանան. իսկ սիւնակաց առջև նստող Եղբ. ց՝ Դէտերուն խնդրանօքը միայն խօսք կուտայ գահերէցը :

Գահերէցը միայն իրաւունք ունի խօսողի մը խօսքն

ընդմիջելու , երբոր կարգէն կամ խնդրէն խոտորի .

Ատենախօսին տուած եղրակացութենէն ետև վիճաբանութիւնը կը գոյուի , և այնուհետև քուէ միայն կը ընայ ուղուիլ :

Ճերմակ գնտակները եղրակացութեանց նոլաստաւոր են միշտ :

ՅՕԴՈՒԱԾ 107

Հանրական շահեկանութիւն ունեցող խնդրոյ վերաբերեալ նոր առաջարկութեան մը վրայ նոյն նստին մէջ որոշում չկրնար տրուիլ , Առաջարկութիւնն յաջորդ նստի մը պէտք է թողուի , կամ յանձնաժողովոյ մը , որ տեղեկագիր բերէ : Այս տեսուկ խնդիրները պէտք է որ անպատճառ ծանուցուին հրաւիրանաց տախտակներուն մէջ :

Որոշում մը կրնայ ետ առնուիլ կամ չնշուիլ մի և նոյն նստին մէջ , եթէ վիճաբանութեան ներկայ գտնուող եւ որոշման մասնակցելու իրաւունք ունեցող Եղբ . ըէն մին ջանարը փակած (մեկնած) չըլլայ :

Որոշում մը չկրնար յաջորդ նստի մը մէջ ետ առնուիլ եթէ ետ առնելու առաջարկութիւնն որոշապէս նշանակուած չըլլայ հրաւիրանաց տախտակներուն մէջ :

ՅՕԴՈՒԱԾ 108

Ամեն նստի մէջ , նոյն օրուան աշխատութեանց ուրուագիծը կը շինուի :

Մէկ նստէն միւսն անցած ժամանակին մէջ Քարտուղարը ձարտարապետութեան գրքին մէջ կանցունէ այն ուրուագիծը՝ պէտք եղած մանրամասնութեամբ : Վերջին աշխատութեանց այս տախտակն՝ առանց Ատենախօսին եղրակացութեան չկրնար ընդունուիլ :

Ատենագրութիւն մ'ընդունուելէ ետև, մէջը փոխութիւն չ'կրնար ըլլալ.

Ատենագրութիւնը միշտ գահերէցէն ու Քարտուղարէն կ'ստորագրուի :

Ատենագրութեան մէջ ետքէն երեւան ելած և ճանչուած սիօնաները գործարանին յտառուկ որոշմամբը միայն կրնան ուղղուիլ :

Ամեն որմնագրական տախտակներն, ինչ նիւթոյ վրայ և ըլլան, հետեւեալ նշանաբանով կ'օկսին միշտ .

'Ի ժամանակ անձն ձուբուրութիւնն ոչեւնէրոց, յանուան և ընդ հաւանական Աւելին Աբեւեւեց Գուգիւոյ :

ՅՈՒԹԻԱԾ 109

ՄԵԿԸ ՀԿՐՆԱՐ ՑԱՆՈՐԸ ՎԻԱԿԵԼ ԱՌԱՆց ԳԱՀԵՐԷՋԷՆ ԿԱՄԻ
իր սիւնակի Դէտէն հրաման ստանալու, և բարեգործական հարկը վճարելու :

ԵՊՐԵ. մը չկրնար առանց իր սիւնակի Դէտէն հրաման ստանալու իր տեղէն ելնել, եթէ իր պաշտօնը չպահանջէ:

Նմանապէս ներելի չեն մասնաւոր խօսակցութիւնք .
միով բանիւ՝ աշխատութեանց կարգն ու պարկեշտութիւնը շփոթել . այնպիսիներն ՚ի կարգ կը հրաւիրուին, և եթէ կրկնազանցութիւն ընեն՝ աւելի ծանր պատժոյ կենթարկին :

ՅՈՒԹԻԱԾ 110

Աշխատութիւնք հետեւեալ կարգաւ կը կատարուին .

1. Բացումն նոտին .

2. Նախրնթաց աշխատութեանց տախտակին ընթերցումն ու վաւերացումը .

3. Ներածումն այցելուաց, օրինական ստուգութիւններն ընելէ ետև .

4. Աշխատութիւնք ըստ խնդրոց կարգին .
5. Երջադայութիւն առաջարկութեանց պարկին և բարեգործութեան գանձանակին . հազորդումն գործարանին եղած առաջարկութեանց . ժանուցումն շրջաբերեալ գանձանակի արդեանց գումարին , որ ճարտարապետութեան դրքին վրայ արձանագրուելէ ետև Աղքատախնամեղք . կը յանձնուի :
6. Փակումն աշխատութեանց :

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՎԵՇԱՄՍԵԱՑ ԵՒ ՏԱՐԵԿԱՆ ԽՈՍՔ

ՅՈՒՊԻԱԾ 111

Որմնադրական տարւոյն ամեն արևադարձի տօներուն , և եթէ հարկաւոր դատի , աւելի յաճախ , Մեծ Վարպետը վեցամսեաց խօսքեր կուտայ , որ ամեն Օթեակաց կը հազորդուին :

Ապրիլ ամսոյ մէջ տարեկան խօսք մը կուտայ , որ միայն Ժողովարանաց կը դրկուի . Նոյեմբերի մէջ ալ ուրիշ տարեկան խօսք մը կուտայ Խորհրդարանաց համար :

Վեցամսեայ կամ տարեկան խօսքն այն Օթեակները , Ժողովարաններն ու Խորհրդարանները միայն կ'ստանան , որք իրենց առուրքը վճարած և պատկերները ներկայացուցած են :

ՅՈՒՊԻԱԾ 112

Վեցամսեայ և տարեկան խօսքերը կնքեալ տոմսակաւմը կը դրկուին . Այն տոմսակն իւրաքանչիւր գործարանի

մէջ աշխատութեանց սկսելէն ետև միայն կրնայ բացուիլ գահերէցին՝ կամ անոր բացակայ եղած ժամանակ՝ նախադահող սպային ձեռօք, և մէջը դրուած խօսքը ցած ձայնով կը հազորդուի՝ ներկայ դանուող դործօն և պատւակալ անդամոց =

Այցելուք չեն ստանար վեցամսեայ կամ տարեկան խօսքերը :

ՅՈՒՌԻԱՆ 113

Վեցամսեայ կամ տարեկան խօսքերուն շրջաբերած միջոցին բացակայ դանուող եղբարք՝ գահերէցէն կ'ստանան խօսքն ամեն որմնադրաց կը հարցուի Տաճարին դըսնէն ներս մտնելու ժամանակնին :

Որ և է այցելու, թէ և Մեծ Արևելքէն կամ կանոնաւոր դործարանէ մը վկայական կոնդակ կամ արտօնադիր ցոյց տայ, կանոնական ստուգութիւններն ըլլալէ ետև. թէ վերջին կամ դոնէ նախորդ վեցամսեայ կամ տարեկան խօսքը չտայ, Տաճարէն ներս շրնդունուիր :

Գաղղիոյ Մեծ Արևելքէն կախում չունեցող որմնադիրք իրենց վկայագրերը միայն պարտին ցոյց տալ :

ՀԱՏՈՒԱՆ ԵՐՐՈՐԴ

ԱՅԵԼՈՒՔ

ՅՈՒՌԻԱՆ 114

Ամեն կանոնաւոր որմնադիր կրնայ անդամ յեղած դործարան մ'ընդունուիլ իրին այցելու, բաւական է որ այն դործարանին աշխատութեան աստիճանն ունենայ, և ըս-

տուգուելէն ետև վերջին կամ գոնէ նախորդ վեցամսեայ
կամ տարեկան խօսքը տայ :

Եթէ յետոյ աշխատութիւնք այցելուին ունեցածէն
բարձր աստիճանաւ բացուին, կամ եթէ գործարանն ըն-
տանեկան խորհրդի կերպարանք առնու, այցելուն պէտք
է տաճարը փակէ : (Տաճարէն դուրս ելնէ) :

ՅՕԴՈՒԱԾ 415

Վաւերական վկայագիր ցոյց չառւող այցելու մը կըր-
նայ գործարան մ'ընդունուիլ, երբոր այն գործարանին
անդամներէն երեքը վկայեն անոր որմնագիր ըլլալուն =
Այն ժամանակ վկայող անդամոց անուններն այն աւուր աշ-
խատութեանց ատենազրութեան մէջ կը նշանակուին :

Այցելու մը ձայն չունենար գործարանի մ'աշխատու-
թեանց մէջ, 'ի բաց առեալ օտարի՝ մը ներածութիւնը :

ՅՕԴՈՒԱԾ 416

Կանոնաւոր վկայական ունեցող որմնագիր մը, երբոր
գործարանի մ'անդամակցութենէն դադրած ըլլայ, երեք
անդամէն աւելի չկրնար իբրև այցելու ընդունուիլ՝ մին-
չև որ խօսք չտայ Մեծ Արևելից թղթակից գործարանի
մ'որդեգրելու = Ամեն անդամներս ընդունուած ժամա-
նակ՝ ձեռքի վկայականը պէտք է նայուի ու նշանակուի :

Տաճարէն ներս չեն ընդունուիր այն այցելուք՝ որ ան-
կանոն գործարանէ մ'ելած վկայական ունենան ձեռուը-
նին . բայց այն վկայականը չկրնար վար դրուիլ :

Սակայն երբոր վկայականին վրայ ստութեամբ նշանա-
կուած ըլլայ թէ Մեծ Արևելքէն կամ կանոնաւոր գործա-
րանէ մ'ելած է, վար կը դրուի և Մեծ Արևելից կը դր-
կուի, որ պէտք եղածը կը տնօրինէ :



ԳԼՈՒԽ թ.

ՆԵՐԱՆՈՒՄ. — ԱՍՏԻՃԱՆԱՏՈՒՐԻԹԻՒՆ. — ՈՐԴԵԳՐՈՒԹԻՒՆՔ.
ԵՒ ԿԱՆՈՆԱՎՈՐՄՈՒԽՆՔ.

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ԿԱՆՈՆՔ ՆԵՐԱՆՄԱՆ

ՅՈՒՂՈԱԾ 117

Օտար մը, որ Սահմանադրութեան և սոյն ընդհանուր կանոնաց պահանջած պայմաններն իր վրայ ունենայ, և Օթեակի մ'անդամակցելու փափաքի, նոյն Օթեակին կամ քանի մ'անդամոց կողմէ ներածման պէտք է առաջարկուի :

Զայն ներկայացնողը կամ ներկայացնողներն իրենց մէ անհատաբար ստորագրուած և առաջարկութեանց պարկը ձգուած տոմսակաւ մը կը խնդրեն : Այն տոմսակին մէջ նշանակուած պիտի ըլլան առաջարկելոյն անունը, մականունը, բնակարանը, տարիքը, ծննդեան տեղը, օրը, ամիսն ու տարին, ինչպէս նաև անոր քազաքային հանգամանքը . ասկէց զատ պիտի պարունակէ օտարէն ըստորագրեալյայտարութիւն մը թէ ասկէ առաջ ուղիչ Օթեակէ մը մերժուած չէ :

Գահերէցն այն տոմսակը կը պարզայ գործարանին մէջ՝ տուանց յայտնելու առաջարկողաց անունը, և երեք յատուկ քննչաց կը յանձնէ, առանց անուններն յայտնելու, առաջարկելոյն բարոյականութեան և այլ հանգամանաց վրայ տեղեկութիւններ ստանալ : Քննիչներն հետեւալ նստին իրենց տեղեկագիրը պիտի ներկայացնեն գահերէցն :

ՅՈՒՌԻԱՆ 118

Ներածման խնդիրն և յանձնաժողովի մը գրկուիլը, ըստիպողական առիթներու մէջ, կրնան մէկ նստէն մինչև միւսն անցած միջոցին տեղի ունենալ Գահերէցին հրամանաւ. բայց այն ժամանակ հրաւիրանաց տախտակներուն մէջ պէտք է նշանակուին առաջարկեալ օտարները :

ՅՈՒՌԻԱՆ 119

Օտարի մը փորձերսւ ենթարկուիլը գաղտնի քուէարկութեամբ և Ե. Ատենախօսին եղրակացութեանց համեմատ միայն կրնայ ըլլալ :

Այս որոշումը վաւերական է երբոր քուէն անարատ սեղանին քով կուդայ, կամ քուէարկուաց թուոյն մէկ հինդերորդէն նուազ սև գնտակ կը պարունակէ :

Եթէ, ընդհակառակն, քուէարկուաց մէկ հինդերորդին հաւասար կամ աւելի սև գնտակ տրուած ըլլայ, ընդունելութիւնն ետ կը մնայ և նոր քննութեան կը ձեռնարկուի :

Այս երկու պարագայից մէջ, քուէարկուաց թուոյն հինդերորդ մասին կոտորակը՝ հինդ քուէարկու կը համարուի :

Եթէ մեծարոյին կողմէ նշանակեալ երեք նոր քննչաց քննութենէն ետև քուէարկութիւնը դարձեալ աննպաստ արդիւնք մ'ունենայ առաջարկելոյն համար, ընդունելութիւնը զլացեալ կը համարուի, և օտարն ետ կը ձգուի :

Այս քուէարկութեանց կը մասնակցին միայն Օթեակին այն անդամներն և այցելու Ե. որք տեղեկադրութեանց ընթերցման ներկայ գտնուին :

Հինգ օտարէն աւելի միանդամայն ներածել՝ արդիւ-
եալ է Օթեակաց :

ՅՈՒՌԱԾ 120

Փորձերէն ետև, դեռ երդմնատուութիւնը չկատար-
ուած, օտարին վերջնական կերպիւ ընդունելութեան հա-
մար Մեծարոյն Օթեակին կամքը կը հարցնէ, որ Ե.։ Ա-
տենախօսին նպաստաւոր եզրակացութեան վրայ, ձայնից
առաւելութեամբ կօրոշուի ելենիստով :

Փորձերուն ներկայ գանուող Ե.։ ք միայն կը մասնակ-
ցին այս քուէարկութեան :

Եթէ մեծամասնութիւնը վերջնական ընդունելութեան
դէմ քուէ տայ, օտարին կը ծանուցուի տաճարէն դուրս,
և ընդունելութիւնը կը յետաձգի :

ՅՈՒՌԱԾ 124

Օթեակ մը, սախզողական պարագայի մէջ, ուրիշ Օթ-
եակի մը խնդրանօք կրնայ յանուն այն Օթեակին ներա-
ծում տալ անոր առաջարկած օտարին :

Առաջարկութիւնը դրով կըլլայ կնքեալ և ստորագրեալ
առաջարկող Օթեակին հինգ առաջին լցուերէն, և այն
գիրը ներածող Օթեակին դիւանը կը պահուի :

Առաջարկող Օթեակին Մեծարոյն կամ եօթն առա-
ջին լցուերէն մին՝ առ նուազն երկու անդամոց հետ պէտք
է ներկայ գտնուի ներածման նստին. և այս ներկայութիւ-
նըն իրենց ստորագրութեամբ հաստատեալ պիտի ըլլայ
նոյն օրուան աշխատութեանց տետրակին մէջ :

ՅՈՒԹԻԱԾ 122

Օթեակները պէտք է ՄԵծ Արևելից ծանուցանեն ներածութեան չընդունած օտարաց անունը , արհեստը , և այլն , և չընդունելնուն պատճառներն հնար եղածին չափ :

Նմանապէս պէտք է ՄԵծ Արևելից հաղորդեն ներածման առաջարկուած ամեն օտարաց անունները , փորձակրութեան ընդունուելու քուէէն առաջ :

Չընդունուած օտարաց անունները ՄԵծ Արևելից գեւանին մէջ յատուկ տումարի մը վրայ պիտի արձանագրին Քարտուղարութեան գլխէն , որ մինչև հինգ օր պէտք է ծանուցանէ ներածման խնդիր հաղորդող Գործարանին , երբոր առաջարկեալ օտարն ուրիշ Օթեակէ մը մերժուած ըլլայ :

Եթէ մինչև հինգ օր Քարտուղարութեան կողմէ պատասխան չտրուի , Օթեակը կընայ օտարին ընդունելութեանը ձեռնարկել :

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ԱՍԻՒԱՆԱՑՈՒՈՒԹԻՒՆ

ՅՈՒԹԻԱԾ 123

ՄԵծ Արևելքէն ընդունուած Եկսերուն իւրաքանչիւրը կազմող աստիճանները դասակարգութեանց բաժնուած են , և իւրաքանչիւր դաս իր աստիճաններուն ամենէն մեծովը կ'որոշուի : Այդ աստիճաններն՝ իւրաքանչիւր Միսի յատուկ եղած հանդիսիւ և արարողութեամբք կը տրուին Միայն միջին աստիճանները կընան հաղորդմամբ արուիլ :

ՅՈՒՌԻԱԾ 124

Հաղորդմամբ չարուազներն են երեք խորհրդաւոր աստիճանները, Ուօզ Քուօայի և Քատոշի ասպետութիւններն և աւելի բարձր աստիճանները։

ՅՈՒՌԻԱԾ 125

Աստիճանատուութեան համար՝ ընծայման ժամանակէն սկսեալ պահուելիք ժամանակի միջոցն այնպէս պէտք է ըլլայ, որ ԵՂԲ. մը քսան և մէկ տարեկան և հինգ ամսու չեղած՝ Սատար շընդունուի, քսան և մէկ տարեկան և եօթն ամսու չեղած՝ Վարպետ շընդունուի. քսան և հինգ տարու չեղած՝ Քատոշ շընդունուի, քսան և եօթն տարու չեղած՝ Ուօզ Քուօա շընդունուի, երսուն տարու չեղած՝ 32 րդ աստիճանը չ'ստանայ, և երսուն երեք տարու չեղած՝ 33 րդը չ'ստանայ։

Քսան և մէկ տարուն անցած ընծայեալք՝ Աշակերա ընդունուելնէն հինգ ամիս ետքը կրնան Սատար ընդունուիլ, և երկու ամիս ետքն ալ Վարպետ։

Սակայն սահիպողական պարագայից մէջ, երբոր Գործարանին անդամ երեք Եղբարց պատույն վկայութեամբ հաստատուի և 0թեակին յատուկ խորհրդածութեամբն և քուէից երկու երրորդ մեծամասնութեամբն ընդունուի, Սատարութեան և Վարպետութեան պայմանաժամերը կրնան համառօտիլ. բայց Աշակերտութեան աստիճանին հետ մէկ օրը չեն կրնար տրուիլ երբեք. Սափողականութեան վկայող Եղբարց հաստատագիրն և Գործարանին որոշումը ճարտարապետութեան գրքին մէջ կ'արձանագրին։

Սափողականութիւնը մի միայն մօտաւոր ուղեղորու-

թեան և երկար բացակայութեան համար կրնայ պահան-
ջուիլ :

Միւս աստիճանաց տուչութեան համար իւրաքանչիւ-
րին մէջ տեղն երեք ամիս միջոց կը պահուի . բայց տա-
րիքի մասին նախընթաց պարբերութեան տրամադրու-
թիւնը ճշգիւ պիտի գործադրի :

ՅՈՒՂԻԱԾ 126

Գործարանները չեն կրնար իրենց անդամակցաց միոյն
զլանալ իրենց տուած աստիճաններուն ամենէն բարձրն ,
երբոր թոշակի յաւելման խնդիրը կանմանաւորապէս ներ-
կայանայ , և եթէ խնդրողը ոոյն օրինաց պահանջած տա-
րիքի ու ժամանակի ինչպէս նաև որմնադրական կրթու-
թեան պայմանները կատարած ըլլայ :

Եթէ պատահի որ Գործարան մ'ինչ և իցէ պատճա-
ռաւ մերժէ խնդրուած թոշակի յաւելումը , իւր պատ-
ճառները Մեծ Արևելից պիտի իմացնէ , որ գատէ և ար-
ժանը անօրինէ :

ՅՈՒՂԻԱԾ 127

Օթեակի մը մէջ ներածեալ որմնադիրք՝ նոյն Օթեա-
կէն միայն կրնան թոշակի յաւելում ընդունիլ , կամ 124
յօդուածին համեմատ՝ նոյն Օթեակին խնդրանօք ուրիշ
Օթեակէ մը . բայց մինչև Քատօշի աստիճան փակառաբար
բարձրագոյն աստիճանները նոյն Օթեակին վրայ պատուաս-
տեալ Գործարաններէ միայն կրնան ընդունիլ :

ՀԱՏՈՒԱԾ ՍՐՌՈՐԴ

ՈՐԴԵԳՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿՈՐՄՈՒՆՔ

ՅՈՒՈՒԱԾ 128

Որդեգրութեան կամ կանոնաւորման համար տրուած խնդիրներն՝ ընծայման համար սահմանուած կանոններուն ենթարկեալ են։

Վերջնական կերպով ընդունելութիւնը գաղտնի քուէ-արկութեամբ մը կորոշուի ՚ի բացակայութեան խնդրա-մատոյց եղբօր։ Ընդունելութիւնը վճռուելու համար քը-ւէից բացարձակ մեծամասնութիւն հարկ է։ Եթէ բա-ցարձակ մեծ ամասնութիւն չգոյանայ, որդեգրութիւնը կամ կանոնաւորումը կը յետաձգի։

ՅՈՒՈՒԱԾ 129

Որմնադիր մը չկրնար բարձրագոյն գործարանի մ'որ-դեգրիլ եթէ Մեծ Արևելքէն կախում ունեցող գործուն-եաց օթեակի մ'անդամ ըլլալը չարդարացնէ։

ՀԱՏՈՒԱԾ ԶՈՐՌՈՐԴ

ԹՈՒԱԿԻ ՑԱԽԱԼՄԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԿԱՆՈՆԱԿԱՆ
ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

ՅՈՒՈՒԱԾ 130

Աշակերտ մը, որ 125 յօդուածին պահանջած պայ-մանները կատարելով թոշակի՝ յաւելում ստանալ ուզէ, գը-

ըովլ խնդիր պիտի տայ Օթեակին , և նա ալ քուէից բացարձակ առաւելութեամբ կորոշէ :

Մի և նոյն պայմանները կը պահանջուին նաև թոշակի յաւելում ստանալ ուզող Սատարէն :

ՅՈՒՌԻԱՆ 131

Վերագոյն աստիճաններ ստանալու փափաքող Վարպետն՝ Օթեակին պէտք է խնդրէ , նա ալ քուէից առաւելութեամբ կորոշէ : Այս քուէին վարպետք միայն կը մասնակցին :

Եթէ խնդիրն ընդունուի , Օթեակը կանոնաւոր ձեռվ ժողովարանին (Շարիթո) կուղղէ խնդրը՝ կցելով անոր .

1. Ստանալ ուզող Վարպետին խնդրը՝ խնդիրը , որոյ մէջ նշանակեալ պիտի ըլլան այն Ե՞՛ . օր անունը , մականունը , տարիքը , ծնած տեղը , բնակութիւնը , քաղաքային և որմնադրական հանդամանքը :

2. Այն խնդիրը ժողովարանին ուզդելու և ընդունուիլ խնդրելու համար Օթեակին ունեցած պատճառները . այն է ուխտին մատուցած ծառայութիւնք , մարդկութեան օդտաւէտ դործք , որմնադրական կամ ուրիշ գըրաւոր աշխատութիւնք և այլն . միով բանիւ՝ այն ամեն հանդամանք որ թոշակի յաւելման համար խնդրամատոյցին արժանիքն ու իրաւունքը կրնան ցուցնել :

ՅՈՒՌԻԱՆ 132

Ժողովարանն՝ Օթեակին խնդիրը նկատողութեան առնըլով քուէից առաւելութեամբ կորոշէ :

Եթէ խնդիրն ընդունուի , ժողովարանը Մեծ Արևելքէն հրաման կըխնդրէ այն Ե՞՛ . ը վերագոյն աստիճաններ

բարձրացնելու . Այս խնդրագրին կը կցէ Օթեակին խընդ-
րագրոյն կցեալ բոլոր գրութիւնները .

ՅՈՒՌԻԱԾ 133

Նոյն կանոնական պայմանները կը կատարեն նաև ժողո-
վարանք Քատ . Ասպետաց Խորհրդարաններուն (Քօնսէյլ)
առջեւ . Խորհրդարանք ալ Մեծ Արևելից առջև Ռօղ-
Քուօսյի Ասպետաց համար՝ որք թոշակի յաւելում ստա-
նալու փափաքին .

ՅՈՒՌԻԱԾ 134

Օթեակիներն ու Ժողովարանները կրնան միշտ իրենց-
մէ թոշակի յաւելում խնդրել այն Եղ . Տ համար՝ զորս ար-
ժանի դատին այդ չնորհաց , և այն Ե . Ք այս պարագա-
յիս մէջ դրով խնդիր տալու պարտական չեն .

ՅՈՒՌԻԱԾ 135

Խորհրդաւոր գործարան մը չկրնար թոշակի յաւել-
ման խնդիր ընդունիլ և առնչակից ժողովարանին ուղղել ,
եթէ խնդրողին վկայականն ալ 'ի միասին ներկայացած
չըլլայ .

Նոյն պարտականութիւնն ունին նաև ժողովարանք
Խորհրդարանաց , Խորհրդարանք ալ ուրիշ բարձրագոյն
Գործարանաց առջև .

ԳԼՈՒԽ Ժ.

ՄԻԱԿ ՀԱՏՈՒԱՆ

ՀՐԱԺԱՐՄՈՒՆՔ ԵՒ ԱՐՁԱԿՈՒՄԴՐ

ՅՈՒՈՒԱՆ 136

Գործարանի մը գործօն անդամոց միոյն հրաժարականը գրաւոր և ստորագրեալ պիտի ըլլայ, և առաջարկութեանց պարկին մէջ պիտի ձգուի կամ գահերէցին միջոցաւ գործարանին պիտի աղջուի:

Եթէ գործարանը պատշաճ դատի, երեք անդամներէ պատգամաւորութեան մը կըյանձնէ երթալ հրաժարատու Ե.՝օր, և հրաւիրելոր ետ առնու. Եթէ չհաճի, հրաժարականը կընդունուի, իսկ եթէ հաճի, հրաժարականն իրրե չեղեալ կը նկատուի:

Հրաժարական մ'ետ առնելու համար մէկ ամիս պայմանաժամ կըտրուի հրաժարատու Ե.՝օր. բայց պէտք է գրով ետ առնու. Յետս կըչումն ու խնդիրը կարձանագրուին ձարտարապետութեան գրքին մէջ :

Հրաժարատու Ե.՝ մը պարտական է գործարանին ունեցած պարտքը վճարել Եթէ չուզէ վճարել, հրաժարականը չընդունուիր, և 1856ի ընդհանուր կանոնաց 269 յօդուածին տրամադրութիւնն 'ի գործ կը դրուի անոր գէմ:

ՅՈՒՈՒԱՆ 137

Արձակուրդի խնդիրը դրով կը մատուցուի գործարա-

նին և նա ալ կորոշէ , և նոյն աւուր աշխատութեանց տախտակին վրայ կը նշանակուի :

Մէկ տարիէն աւելի ժամանակի համար արձակուրդ չկրնար չնորհուիլ բայց սոյն պայմանաժամէն ետև կը բնայ նորոգիլ միևնոյն կանոնական պայմաններով :

Գործարանին հետ կանոնաւորութեան մէջ չեղող Ե. օր մ'արձակուրդ չնորհուիր :

Արձակուրդ ստացողն հանդանակութեանց վճարքէ ազատ չկրնար ըլլար , սակայն հանդանակութիւնք կրնան չափաւորիլ գործարանին յատուկ որոշմամբ :

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՄԻԱԿ ՀԱՏՈՒԱԾ

ԱՅԻԱՑՈՒԹԵԱՆՑ ԴԱԴԱՐՈՒՄ ԵԻ ՎԵՐՍԿՍՈՒՄ

ՅՈՒՌՈՒԱԾ 138

Աշխատութիւնը վերջնապէս կամ առժամանակապէս դադրեցնող գործարանը պարաւոր է յայտարարել Մեծ Արևելից , իր յատուկ որոշման մէկ քաղուտծովս , որոյ մէջ ճշգիւ պիտի յիշուին դադարման պատճառներն :

Դործարանն այս յայտարարութեան կը կցէ իւր կազմութեան արտօնագիրը , դրոշմն ու կնիքը , Աստիճանաց տեարակները , ճարտարապետութեան դրքերը , իւր անդամոց ցուցակը , գործարանին առաջին լոյսերէն ստորագրեալ և կնքով ու դրոշմով վաւերացեալ :

Նմանապէս մնտուկին մէջ մնացած մետաղները Մեծ Արևելից կաւանդէ :

ՅՈՒՊԻԱԾ 139

Որմնադիր մը, ի՞նչ աստիճանէ և ըլլու շե և
աւարիէն աւելի իր քով պահէ, թէ՛ իբրեւ աւանդ, և թէ՛
իբրեւ նուէր կամ գրաւ, Օթեակին հաւանութեամբ կամ
ոչ, վերջապէս ինչ եղանակաւ և ըլլայ, որմնադրական
գործարանի մը վերաբերեալ մետաղներ, ճարտարապե-
տութեան գրքեր, արտօնագրեր, գրոշմ կամ կնիք, և
այլն, առանց Մեծ Արևելից իմացնելու և զանոնք ձըրի-
ապէս անոր յանձնել առաջարկելու, այս միակ գործով
անհաւատարկմ կը ճանչուի, և կրնայ յատեան կոչուիլ
ու գատուիլ ներկայ ընդհանուր կանոնաց համաձայն.

ՅՈՒՊԻԱԾ 140

Գործարան մը, որ նախընթաց յօդուածոց տրամադր-
րած պարտականութիւնները չկատարելով իւր աշխատու-
թիւնը գաղդրեցնէ, Մեծ Արևելից թշպմակցութենէն կը
յնջուի, արտօնութիւնը կաւրուի, և անդամներն անկա-
նոն կը հրատարակուին :

Եթէ այս պայմանները կատարէ, տարեկան տուրքէն
աղատ կը մնայ՝ որչափ ժամանակ որ տեէ գաղարումը:

ՅՈՒՊԻԱԾ 141

Աշխատութեանց վերսկսումը գործարանին շնորհած
ամենէն բարձր աստիճանն ունեցող և 138 յօդուածին
պահանջած ցուցակին մէջ արձանագրեալ Ե. Տ. Գ գոնէ
եօթնէն ստորագրեալ խնդրագրով մը միայն կրնայ ըս-
տացուիլ :

Աշխատութեանց վերսկսումը շնորհող որոշումը գոր-

ծարանին կաղմութեան արտօնագրին վրայ կը նշանակուի
և ձարտարապետութեան գրքին մէջ կը լիշտատակուի:

Արտօնագիրը, դրոշմն ու կնիքը և այլն վերստին գործարանին կը յանձնուին, ինչպէս նաև ձարտարապետութեան գրքերն ու մետաղները :

ՅՈՒՌԻԱՆ 442

Երբոր Օթեակ մ'իր աշխատութիւնները դադրեցնէ
կամ առկախէ, անոր վրայ պատուաստեալ բարձրագոյն
Գործարաններն ալ իրաւամբ իրենց աշխատութիւնները
կը դադրեցնեն. բայց այդ բարձրագոյն Գործարանները
կրնան իրենց աշխատութիւնները դադրեցնել կամ առ
կախել առանց Օթեակին աշխատութիւններն արգիլելու։
Նմանապէս երբոր ժողովարան մը ննջէ, խորհրդարանն
ալ կը ննջէ։

Սակայն ժողովարանն ու խորհրդարանն՝ իրենց արմատ
եղող Օթեակին աշխատութեանց դադարումէն մէկ տարի
ետքը կրնան ուրիշ Օթեակի մը վրայ պատուաստիլ, անոր
հաւանութիւնն ստանալով։

ԳԼՈՒԽԻ ԺԲ.

ՏՕՆՔ ՈՒԽԵՏԻՆ. —ԿՈՉՈՒՆՔ. —ԴԱՄԲԱՆԱՀԱՆԴԵՍՔ. —
ՈՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏԻՒՔ ԵՒ ԳԱՀԵՐԻՑՈՒԹԻՒՆՔ

ՀԱՑՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏՕՆՔ ՈՒԽԵՏԻՆ ԵՒ ԿՈՉՈՒՆՔ

ՅՈՒՊԻԱԾ 143

Օթեակները տարին երկու տօն ունին, մին տմրտն աւ բևադարձին, միւսը ձմրան. Այս տօներուն մէկին ետև կոչունք մը կուտան միշտ. Օթեակին բոլոր անդամները պարտաւոր են այս կոչունքին ներկայ գտնուիլ.

Ճողովարանք մէկ տօն մ'ունին, գարնան գիշերահաւասարին ժամանակ. նմանապէս բարձրագոյն Գործարանները մէկ տօն մ'ունին աշնան գիշերահաւասարին ժամանակ. կոչունքներն Ագար կը կոչուին բարձրագոյն Գործարանացիհամար.

Սեղանի աշխատութիւնք միշտ որմնադրական սովորութեանց համեմատ պիտի ուղղուին ու կատարուին. իսկ բարձրագոյն Գործարաններն իրենց կոչունքներուն ինչ աստիճանաւ կատարուին որոշելու իշխանութիւն ունին.

Սեղանի աշխատութիւններն ինչ ծէսով և աստիճանաւ ալ կատարուին, որմնադրական յարկի մը մէջ միայն կը նան բացուիլ ու շարունակիլ, հեռի օտարաց աչքէ. ապա թէ ոչ՝ դադարման կը դատապարտուին.

ՅՈՒՂԱԾ 144

Հինգ բաժակ կայ պարտաւորեալ .

1. Վեհապետին և անոր ընտանեաց կենացը , որուն
կը կցորդին նաև հայրենեաց համար բարեմաղթութիւնք .

2. Ուխտին գերագոյն գլուխն՝ այն է Մեծ վարպետին ,
Գաղղիոյ Մեծ Արևելից , Օժանդակ Մեծ վարպետներուն ,
թղթակցութեան Օթեակներուն և Օտար Մեծ Արևելից
կենացը .

3. Գործարանին Նախագահին կենացը .

4. Դէտերուն , որդեգրեալ Գործարանաց Սպաներուն
և այցելու Ե.՝ ըց կենացը .

5. Երկու կիսազնոոց մէջ գտնուած ամեն որմնադրաց
կենացը : Այս վերջին բաժակին ժամանակ , Գործարանը
միութեան շղթայ կը կազմէ , որուն կը մասնակցի միշտ
սպասարկու Եղ.՝ ըն :

ՅՈՒՂԱԾ 145

Ամեն բաժակներն ալ Նախագահը կառաջարկէ բաց
յերրորդէն , զոր երկու Դէտերն և Ատենախօս Եղ.՝ ըը
կառաջարկեն :

Զորրորդը կը կրկնուի Գործարանին երկու անդամներէն , որք գոնէ վարպետի աստիճան պէտք է ունենան
և Նախագահը պէտք է ցուցնէ զանոնք :

Այս բաժակներն ոտքի վրայ կառաջարկուին և կարգաւ . և իւրաքանչիւրն երրեակ ծափահարութեամբք կաւարտին :

ՀԱՏՈՒԱԾ ԽՐԿՐՈՐԴԻ

ԴԱՄԲԱՆԱՀԱՆԴԵՍԻ

ՅՈՒՈՒԱԾ 146

Գործարանները՝ գոնէ երեք տարին մի անդամ օր մը կը նուիրեն նախընթաց տարիններուն մէջ վախճանեալ ե.։ Ֆյշատակին ։ Ատենախօսը կամ Նախագահէն նշանակեալ ուրիշ օր և է ե.։ մը՝ գամբանական կը խօսի ՚ի պատիւ վախճանեալ ե.։ ց ։

Երբ Գործարանի մը Նախագահն անդամնց միոյն վախճանիլ լսէ, անմիջապէս պատգամաւորութիւն մը կանւանէ, որ վախճանելոյն յուղարկաւորութեանը ներկայ գտնուի մինչև ՚ի գերեզման։ Պատգամաւորութիւնը հինգ ե.։ ներէ կը բաղկանայ եթէ վախճանեալը պարզ անդամ մ'է ։ ինն ե.։ ներէ կը բաղկանայ եթէ վախճանեալն Սպայ մ'է ։ իսկ ամբողջ Գործարանէն կը բաղկանայ եթէ Նախագահն է վախճանեալը ։

Բացարձակապէս արգիլեալ է որմնադրական նշաններ կրել յուղարկաւորութեան միջոցին՝ վախճանելոյն տունէն մինչև գերեզման։ գերեզմանատունը ներելի է կրել բայց կրօնական արարողութեանց ամբողջապէս աւարտումէն ետեւ։

Որմնադրական Ցանարաց մէջ գամբանահանդէսները սգոյ բախիւններ և ընդհանրապէս տրտմութեան նշաններ կը պահանջեն։

ՀԱՏՈՒԱՆ ԵՐՐՈՐԴ

ՊԱՑԻՒՐԻ ԵՒ ԳԱՀԵՐԻ ԹՈՒԹԻՒՆՆ ՈՐՄԱՆԴՐԱԿԱՆԻ

ՅՈՒՂՈՒԱՆ 147

Որմագիր մը , սրչափ և բարձր աստիճան ունենայ , մինար ներքոյ նշանակեալներէն աւելի կամ տարբեր պատիւներ , գահերիցութիւններ կամ առանձնաշնորհութիւններ պահանջել :

Արդիւեալ է իրեն քաղաքային կարգին մէջ հրամայւածէն կամ Մեծ Արևելից ճանշած այլ և այլ ծխից ընդունած որմագրական շքանշաններէն տարբեր ժապաէններ կամ շքանշաններ կրել . (Ցես Յօդ. 240 և հետեւալները) .

ՅՈՒՂՈՒԱՆ 148

Մեծ վարպետն Արարողապետէն առաջնորդեալ տասընեհինդ անդամներէ ընդունուելով կը մտնէ Ցանարը , և կը տարուի Պողպատեայ կամորին ներքեւէն կոփիչներու բախմամբ մինչև Նախագահին տեղը , որ կափիչն Անոր կը յանձնէ :

Օժանդակ Մեծ վարպետք ինն անդամոց ընդունելութեամբ կը մտնեն Ցանարը :

Երբոր Մեծ վարպետը կամ Օժանդակները կոփիչչպահեն , միշտ Նախագահին աթոռութ կը բազմին , և Նախագահն անոնց աջ կողմէ կը կենայ :

Երբոր Մեծ վարպետն իր Օժանդակներէն ընկերացեալ է , վերջիններն Անոր աջ կողմո կը կենան , գոռծարանին հակառա ուշ :

Մեծ աստիճանաւորներն և պատուակալ սպաներն եօթն անդամոց ընդունելութեամբ ներս կը մտնեն :

Ուստին Խորհրդոյն անդամներն և Մեծ վարպետէն յատուկ պաշտօն ստացած տեսուչներն ալ նոյնպէս եօթն անդամներէ կընդունուին :

Գործարանաց պատգամաւորութիւններն և գործարանին Նախադահը, թէ և աշխատութեանց բացուելէն ետև ներկայանան, երեք անդամներէ կընդունուին :

Վերոյիշեալ ամեն Ե. օք Արևելքը կը նստին, ամենէն բարձր աստիճան ունեցողը Նախադահին քով :

Գործարան մը՝ ո՛ր ծէսէ և ըլլայ, Որմնադիր մը՝ ի՞նչ աստիճան և ունենայ, չկընար իւր դաւանած ծէսովն ընդունուելու պահանջում ընել ուրիշ ծէս դաւանող Գործարանէ մը :

Գործարանք չեն կընար Որմնադրական պատիւներ մատուցաներէ ազատ ճանչել զիրենք, բայց միայն երբոր պատուոյ. առարկայ եղող Որմնադիրք բացորոշապէս խնդրեն :

ՅՈՒՂԻԱԾ 149

Յանձնաժողովք, պատգամաւորութիւնք կամ այցելուք ներս մտած ժամանակ Նախադահը կընդունի և կողջունէ զանոնք և ծափահարել կուտայ :

Նոյնպէս օտար Մեծ Արևելից սպաներուն ալ ըստ աստիճանի արժան եղած պատիւներն ընել կուտայ :



ԳԼՈՒԽ ՃԳ.

ՊԱՏՀԱՐԴՔ ԱՆԿԱՆՈՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԱՑ
ԵՒ ՄԻԶՈՑՔ ԿԱՆՈՆԱԻՈՐՄԱՆ

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏՀԱՐԴՔ ԱՆԿԱՆՈՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԱՑ

ՅՈՒՌՈՒԱԾ 150

Անկանոն են.

1. Այն Գործարանք, որք Գաղղիոյ մէջ մէկ տարի, և յայնկոյս ծովու Արևելից մէջ երկու տարի իրենց թըղթակցութիւնը դադրեցուցած և տուրքերնին վճարած շրլան.

2. Այն Գործարաններն, որք կանոնաւոր ըլլալով, կանոնաւոր Արևելքէ մը չճանչուած Որմագրական ընկերութեան մ'որդեգրին.

3. Այն Գործարաններն, որք գիտութեամբ անկանոն որմագրիններ պահեն իրենց ծոցը.

4. Այն Գործարաններն, որք առանց Մեծ Արևելից հրամանին՝ իրենց կազմութեան կարգէն բարձրագոյն կարգի աշխատութեանց ձեռնարկեն, կամ իրենց աշխատութեանց վրայ Մեծ Արևելքէն չճանչուած ծիսի մ'աշխատութիւններ աւելցնեն.

5. Այն Գործարաններն, որք իրենց նիստերը կամ տօները Մեծ Արևելքէն չճանչուած տեղերու մէջ կատարեն :

—————

ՅՈՒՌԻԱԾ 151

Այն տեղերն են միայն Որմագրական կանոնաւոր տեղեր, զորս Մեծ Արևելքը ճանչած ու այնպէս յայտաբարած է։

ՀԱՑՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻԶՈՑՔ ԿԱՆՈՆԱԿՐՈՄԱՆ ԳՈՐԾԱՐԱԿԱՑԱՑ

ՅՈՒՌԻԱԾ 152

Ուրիշ Որմագրական իշխանութիւններէ կազմուած գործարանք կրնան Մեծ Արևելից թղթակցութեան ընդունուիլ եթէ իրենց խնդրագրին յարեն։

1. Իրենց կազմութեան արտօնագրերը։
2. Իրենց անդամոց ցանկն իւրաքանչիւրէն ստորագրեալ, որոյ մէջ խոստացած ըլլան համաձայնիլ ուխտին Սահմանադրութեան և Ընդհանուր կանոնաց, և միանդամայն պահանջելի տուրքերը վճարել։

ՅՈՒՌԻԱԾ 153

Մեծ Արևելից հետ թղթակցութիւնը դադրեցնելու կամ 150 յօդուածով որոշեալ ժամանակի մէջ իրենց հանդանակութիւնները վճարած չըլլալու պատճառաւ անկանոն յայտարարեալ գործարանք ալ կրնան նոյն շնորհը վայելել՝ 141 յօդուածին համեմատ իրենց աշխատութեան վերսկսումը խնդրելով և գոնէ մէկ տարուան տուրքերնին վճարելով։

Հիշան
Արքակ Ալպոյաննեանի
Պահեր՝ — Մարտին

ՅՈՒՊԻԱՆ 154

Իւր վերահաստատութիւնը խնդրող Գործարանի մանկանոնութեան պատճառն ինչ որ ալ ըլլայ, խնդիրը Գործարանին անդամոց յատուկ գումարմամբ խորհրդակցութեան և քուէից մեծամասնութեան արդիւնք պէտք ըլլայ. միանդամայն խնդրագիրը գըոշմեալ կնքեալ և հինգառաջին Լոյսերէն ստորագրեալ պիտի ըլլայ.

Եթէ խնդիրը չընդունուի, խնդրագիրը Մեծ Արևելից դիւանատունը կը պահուի. բայց խնդրագրին յարակից թղթերը Գործարանին կը անձնուին, ինչպէս և մետաղները.

**ՊՐԵԿ ԵՐԿՐՈՐԴ
ՈՐՄՆԱԴԻՐԻ ԱՆՀԱՏԱԲԱՐ**

ԳԼՈՒԽ Ա.

ՎԱՀԱՆՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՔ ԿԱՆՈՆԱԿՈՐ ՈՐՄՆԱԴԻՐՈՒԹԵԱՆ —
ՊԱՏՃԱՌՔ ԱՆԿԱՆՈՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԻԶՈՑՔ ԿԱՆՈՆԱԿՈՐՄԱՆ.

ՀԱՏՈՒԱՆ ԱՌԱՋԻՆ

ԿԱՆՈՆԱԿՈՐ ԵՒ ԳՈՐԾՕՆ ՈՐՄՆԱԴԻՐ ԸԼԼԱԼՈՒ ՀԱՄԱՐ
ՊԵՏՔ ԵՂԱՌ ՊԱՅՄԱՆՔ.

ՅՈՒՊԻԱՆ 155

Որմնադիր մը, կանոնաւոր ըլլալու համար, պէտք է որ կանոնաւոր Օթեակի մը գործօն կամ պատուակալ ան-

դամբըլոյ Աշակերտի , Սատարի կամ Վարպետի աստիճաննաւ . Եթէ Վարպետ է , նոյն աստիճանին վերաբերեալ կանոնաւոր վկայական մը պէտք է ունենայ .

ՅՕԴՈՒԱԾ 156

Որմնագիր մը հոգօն ըլլալու համար հետևեալ պայմանները պէտք է ունենայ .

1. Կանոնաւոր Օթեակի մը հանդանակիչ անդամ ըլլալ .

2. Օթեակին գանուած Արևելքին մէջ կամ անկէ գունէ 100 քիլոմէթրուն աւելի հեռու չեղող շրջանակի մը մէջ բնակիլ .

ՅՕԴՈՒԱԾ 157

Գործարանի մը գործօն անդամը տաժնեհինդ տարի շարունակելէ ետեւ . կրնայ պատուակալ անդամ ըլլալ , Գործարանին հաւանողական որոշմամբ .

ՅՕԴՈՒԱԾ 158

Որմնագրական ամեն պաշտամնաց և պարտուց հիմք գործօնէութիւնն է .

ՅՕԴՈՒԱԾ 159

Որմնագիր մը , ինչ աստիճան և ունենայ , Օթեակի մը մէջ պաշտօնի չկրնար ընդունուիլ , եթէ անոր գործօն անդամ չէ .

ՅՈՒՌՈՒԱԾ 160

Պատուակալ անդամք բնաւ չեն կրնար պաշտօնի ընտ-
րուիլ Գործարանին մէջ :

ՅՈՒՌՈՒԱԾ 161

Որմնադիր մը, ի՞նչ աստիճան և ունենայ, ժողովարանի
մը կամ Խորհրդարանի մը Սպայ չկրնար ըլլաւ եթէ միան-
գամայն Օթեակի մը գործօն անդամ չէ :

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՈՐՄՆԱԴՐԱՑ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆՑ ՊԱՇԱՏԻՐ.

ՅՈՒՌՈՒԱԾ 162

Անկանոն որմնադիրք են .

1. Այն Օտարք՝ որք Մեծ Արևելքէն չճանչուած կամ
կանոնաւոր չեղող Օթեակի մէջ ներածուած ըլլան :

2. Այն որմնադիրք՝ որք անկանոնութեամք որ և է աս-
տիճան ընդունած ըլլան :

3. Այն որմնադիրք՝ որք տարիէ մ'աւելի ննջող կամ
Մեծ Արևելքէն ջնջուած Գործարանի մ'անդամ ըլլալէ ե-
տև՝ նոյն միջոցին ուրիշ Գործօն Օթեակի մը որդեգրեալ
չըլլան :

4. Անոնք որ առանց պաշտօն ունենալու՝ Օտար մը նե-
րածած կամ որմնադրական աստիճաններ տուած ըլլան :

5. Անոնք որ առանց օրինաւոր պատճառի իրենց գը-
րամական պարտականութիւններն հատուցած չըլլան իրենց
անդամ գտնուած Գործարանին :

6. Անոնք որ բարձրագոյն գործարանի մ'անդամ ըլ-

լալով, միանդամայն գործօն և հանդանակիչ անդամ չըւ-
լան Օթեակի մ'եւ ամեն միջին գործարանաց :

7. Անոնք որ կանոնաւոր դատաստանաւ մերժուած
են թղթակցութեան գործարաններէն :

Որ և է անկանոն որմնագիր չկրնար՝ պատուոյ աստի-
տիճան ընդունիլ կամ որ և է պաշտօն վարել Մեծ Արևե-
լից մէջ :

Որմնագրական ուխտին մէջ աստիճան ունեցող կամ
որ և է պաշտօն վարող որմնագրի մ'անկանոնութիւնն ան-
կում կը բերէ անոր :

Մեծ Արևելից Քարտուղարութեան դիւանին մէջ յա-
տուկ տումար մը կայ, որոյ մէջ կարձանագրին իբրև ան-
կանոն ամբաստանեալ և ուխտին մեծ խորհրդին որոշմամ-
բըն անկանոն ճանչուած ամեն որմնագրաց անունը, մա-
կանունը, տարիքը, ծննդեան տեղը, աստիճանները, բը-
նակարանը, և քաղաքային հանդամանքը :

Անկանոնութեան պատճառներն արձանագրեալ ան-
ւանց առջև կը նշանակուին՝ որոշման թուականին հետ :

ՀԱՏՈՒԱԾ ԵՐՈՐԴԻ

ՈՐՄՆԱԴՐԱՅ ԿԱՆՈՆԱԿՐՈՒԱՆ ՄԻՋՈՑ

ՅՈՒՈՒԱԾ 163

Անկանոնապէս որմնագրական աստիճանաց ընծայեալ
օտար մը կամ անկանոնութեամբ որ և է աստիճանի հա-
սած որմնագիր մը կրնայ կանոնաւորման ընդունուիլ .

4. Եթէ Գործարանի մ'երեք գործօն անդամներէ ըս-
տորագրեալ նպաստաւոր վկայագրով մը խնդիր մասու-
ցանէ նոյն գործարանին :

2. Եթէ կարենայ վաւերական թուղթերով արդարացընել իր ընդունելութեան տեղը, ժամանակն ու պարագաները, և եթէ իր վրայ եղած որմնագրական քննութիւնը գոհացնէ.

Եթէ իր խնդրագրին հետ նաև ստորագրնալ խոստմընադիր մը առաջ ուխտին Սահմանադրութեան և Ընդհանուր կանոնաց համակերպելու.

ՅՈՒՂԻԱՇ 164

Անկանոն գործարանի մը մէջ ընդունուած որմնադիր մը կրնայ կանոնաւորիլ եթէ իր խնդրագրին հետ ներկայացնէ.

1. Նախընթաց յօդուածին մէջ յիշուած խոստումը.

2. Իր որմնադրական վկայագիրը, կոնդակ, վկայական, կամ եթէ չունի, գրաւոր և ստորագրեալ յայտարարութիւն մը թէ վկայագիր չէ տրուած իրեն.

3. Կանոնաւոր գործարանի մ'երեք անդամոց նպաստաւոր վկայագիրը, ինչպէս որ նախընթաց յօդուածին մէջ պատուիրեալ է.

Եթէ վերոյիշեալ վկայագրերէն մին ունենայ, անոր պարունակութեան ներքեւ պէտք է որ ուխտին Սահմանադրութեան և Ընդհանուր կանոնաց համակերպելու խոստումը գրէ.

Այն վկայագրերուն փոխարէն կանոնաւոր վկայագիր մը կը տրուի Մեծ Արևելքէն, ջնջեալ վկայագրերուն թւշւականն ալ յիշուելը անոր մէջ :

ՅՈՒՂԻԱՇ 165

Ի սկզբանէ կանոնաւոր որմնադիր մ'երբոր անկանոն

դործարանի մը յարեալ մնալով կամ անկանոն գործարանի
մ'որդեգրելով կանոնաւորութենէ դադրի , նախընթաց
յօդուածին մէջ նշանակեալ չնորհը կը վայելէ նոյն պայ-
մաններով . բայց նոր վկայագիր չկրնար ստանալ մինչև
որ տարի մը դործօնութիւն չընէ :

ՊՐԵԿ ԵՐՐՈՐԴ

ՄԵԾՔ ԱՐԵՒԵԼՔ ԳԱՂՂԻՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

ՄԵԾՔ ԱՐԵՒԵԼՔ ԳԱՂՂԻՈՑ .— ԻՒՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՍՊԱՑԻՑ
ԺՈՂՈՎԱՎ ՆԻՍՏԵՐԸ .— ԵՐԵՍՓՈԽԱՆՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՑ
ՄԷԶ . — ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՔ . — ԿԱՒՔ ԵՒ ԴՐՈՇՄ .

ՀԱՏՈՒԱՆ ԱՌԱՋԻՆ

ՄԵԾ ԱՐԵՒԵԼՔ

ՅՈՒՈՒԱՆ 166

Գաղղիոյ Մեծ Արևելից իշխանութիւնը Գաղղիոյ և
ստար երկիրներու մէջ կանոնաւորագէս կազմուած և
անկէ ճանչուած ամեն դործարանաց վրայ կը տարածի :
(Սահմ . Յօդ . 8 և 20) :

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ԳԱՂՂԻՈՑ ՄԵՇ ԱՐԵՒԵԼԻՑ ԲՆԴՀԱՆՈՒՄ ԺՈՂՈՎՈՑ ՆԻՍՏԵՐԸ

ՅՈՒՈՒԱԾ 167

ՄԵծ Վարպետն, Ընդհանուր ժողովոյ ամեն մէկ գումարման առթիւ, անոր մէջ պաշտօն վարելու համալէտք եղած Սպաները կանուանէ :

Սպաներն են .

1. Մէկ առաջին դէտ.
2. Մէկ երկրորդ դէտ.
3. Մէկ Ատենախոս.
4. Մէկ Քարտուզար.
5. Մէկ առաջին Մարզիչ.
6. Մէկ Երկրորդ Մարզիչ.
7. Մէկ Աղքատախնամ.
8. Երկու Արարտապետք.

ՅՈՒՈՒԱԾ 168

ՄԵծ Վարպետը կամ անոր տեղ նախագահող բարձր պաշտօնաւորը միայն իրաւունք ունի.

1. Աշխատութիւնները բանալու կամ փակելու.

2. Առաջարկութիւնները կոփիչի ներքեւ դնելու.

3. Վիճաբանութիւնները համառօտելու.

4. Որոշումները յայտներու.

Կընայ խօսքը ետ առնուլ ժողովին այն անդամներէն՝ որք կարգէ խոտաղին և մինչև իսկ՝ 'ի հառեհն՝ Տաճարը վիտկել տալ .

Վերջապէս անկարգութիւն մը պատահած ժամանակ կրնայ նիստը գաղրեցնել կամ փակել.

Ատենախօս Ե. օր եզրակացութենէն ետև՝ Նախագահը քուէի կը ներկայացնէ խնդիրը և քուէին արդիւնքը կը յայտնէ :

ՅՈՒՂԻԱԾ 169

Քուէարկութիւնը կրլայ ելենիստով . եթէ արդիւնքը երկրայելի է , քուէարկութիւնը յանուանէ կոչմամբ կրլայ . բայց երբոր առ նուազն 20 անդամք գաղտնի քուէ առաջարկեն , քուէարկութիւնը գաղտնի կրլայ .

Որոշումները ներկայ անդամոց մեծամասնութեամբ կը տրուին :

Որ և է որոշում չկրնար արուիլ Ընդհանուր ժողովը մէջ եթէ թղթակից Գործարանաց երեսփոխաններուն երբորդ մասը ներկայ չգտնուի:

Զայնից հաւասարութիւն պատահած ժամանակ՝ նախագահին ձայնը ծանր կը կշռէ .

ՅՈՒՂԻԱԾ 170

Ժողովին բացուելին առաջ՝ իշխանութիւնները կը տուգուին ուխտին խորհրդէն . բայց երբոր բողոք կամ անհամաձայնութիւն ծագի , ժողովը վեհապետաբար կը վճռէ Սահմ. 37 և 38 յօդուածոց համաձայն :

Յանուանէ կոչումէ և երդմնատուաթենէ ետև՝ երեսփոխանք կը քաշուին , և ժողովին որոշած բաժանմանց համեմատ իրենց գիւանները կը կազմեն :

Ժողովին որոշմանց ներկայացեալ ինդրոց կարգերն առաջին նստէն կառաջարկուին տնօնց :

ՅՈՒՌԻԱԾ 171

Խւրաքանչիւր նստի ատենադրութիւնն հետևեալ նըս-
տին սկիզբը կը կարդացուի .

Երբոր խնդրոց կարգի աշխատութիւններն սպառին ,
վերջին կամ հրաժեշտի նիստ մը կըլլայ , որոյ մէջ նախըն-
թաց նստին ատենադրութիւնը միայն կը կարդացուի , և
Գործարանաց երեսփոխաններուն խնդրուածքն ու առա-
ջարկութիւնները կարձանադրին .

Այն խնդրուածքն ու առաջարկութիւններն ուստին
խորհրդոյն քննութեանը կը յղուին . և եթէ չընդունուին ,
յաջորդ ժողովին տեղեկութիւն կը արուի անոնց վրայ .

ՅՈՒՌԻԱԾ 172

Օրէնսդրական ժողովը նիստերը կանոնաւոր կերպիւ
կը կատարուին . Ամեն գործօն որմնադիրք իրաւունք ու-
նին հանընդունուելու իրրե Այցելու , և որոշ ու զատ տեղ
մը կը նստին ժողովարանին մէջ .

Հաւանութեան կամ չհաւանութեան նշանք բացար-
ձակապէս արդիշեալ են Այցելու Ե.՝ ըց .

Եթէ Այցելու Ե.՝ ըց կողմէ անկարգութիւն կամ աղ-
մուկ ծագի , Նախադահը կրնայ Տաճարը փակել տալ .

Ժողովը կրնայ միշտ յատուկ քուէով մ'ինքզինք գաղա-
նի մասնաժողովի վերածել .

ՀԱՏՈՒԱՆ ԵՐԵՌՈՒ

ԵՐԵՍՓՈԽԱՆՔ ԸՆԴԱԿԱՆՈՒՄ ԺՈՂՈՎՐԾ ՄԷԶ.

ՅՈՒԹՈՒԱԾ 173

Թղթակցութեան ամեն Գործարանք Գաղղիոյ Մեծ Առ
բևելից ընդհանուր ժողովին մէջ երեսփոխան մօւնենալու
պարտաւոր են :

Երեսփոխան չունեցող Գործարանն առաջին անգամ
100 ֆրանք տուգանքի կը դատապարտի. եթէ կը կին ան-
գամ այս պակասութեան մէջ դտնուի, ոյն տուգանքէն
զատ դադարման կամ շնջման կը դատապարտի .

Գաւառաց երեսփոխաններն ամեն մէկ հաղարամեթրի
համար 1.25 ֆրանք երթևեկութեան ծախք կ'ատանան
Մեծ Աքեւելքէն :

Այս ծախքը գոցուելու համար Գաղղիոյ Մեծ Աքեւել-
քէն կախում ունեցող ամեն Գործարանք, Օթեակք, Ժո-
ղովարանք և խորհրդարանք, 'ի բաց առեալ Ալթէրիի և
Գաղղիական դադարմականութեանց ինչպէս նաև օտար երկ-
րաց Գործարաններն, իրենց անգամոց թուոյն համեմա-
տութեամբ տարեկան հանգանակութիւն մը կը վճարեն
Ուստին կեդրոնական մնալուին :

Այս հանգանակութեան դումարն ամեն տարի նախըն-
թաց տարւոյն ցուցակներուն համեմատ հաշտելով, Գոր-
ծարանաց կողմէ առ Մեծն Աքեւելք վճարուած ուրիշ հան-
գանակութեանց ձևովս ու եղանակաւ կը հաւաքուին:

Երեսփոխան չունեցող Գործարանաց վճարած առւ-
գանքն ալ սոյն հաշուոյն մէջ կանցնին :

Երեսվոլսանաց ընդհանուր ժողովոյ մէջ ներկայութիւնը պարտաւորական է :

Այս ներկայութիւնն ամեն նստի մէջ կ'ստուգուի :

Ճանապարհորդութեան ծախք ստանալու իրաւունք ունեցող երեսվոխան մ'եթէ առանց հրամանի կամ ստիպողական պատճառի բացակայ գտնուի, ստանալիք ճանրու ծախուց գումարին մէկ տասներորդը վար կը դրուի ամեն մէկ բացակայութեան փոխարէն :

ՅՈՒՌԻԱՆ 174

Մեծ Արևելից ժողովին մէջ Սպայից իրաւունքներն հետեւալ յօդուածոց մէջ որոշուած են :

Սպայք՝ առանց Նախագահէն խօսք ուղելու և ստանալու չեն կրնար խօսիլ :

ՀԱՏՈՒԱՆ ԶՈՐՈՐԴԻ

ՍՊԱՅՔ ԵՒ ԽՐԵՆՑ ՊԱՇՅՈՒԾ

ԴԷՅՔ

ՅՈՒՌԻԱՆ 175

Դէտերն իրենց սիւնակաց տեսչութիւնը կրնեն : Իւրաքանչիւր եղբայր խօսք ստանալու համար անոնց պիտի դիմէ : Դէտերն ալ կոփիչի հարուածով Նախագահէն կը խնդրեն : Նախագահին ծանուցմունքն իրենց սիւնակաց կը հաղորդեն, բարեկարգութիւն ու լուսութիւն պահել կուտան անոնց, և խօսք չ'ստանալով խօսող ե. լոց խօսքը կրնան արգելուլ :

Նստի մէջ միայն Նախագահը կրնայ հարցում ուղղել
Դէտերուն :

ԱՏԵՆԱԿՈՍ

ՅՈՒՈՒԱԾ 176

Ատենախօսը, որ պահապան է Սահմանադրութեան-
և ընդհանուր կանոնաց, նոցա գործադրութիւնը պահան-
ջելու պաշտօնն ունի :

Արևելք կը նստի վիճաբանեալ նիւթոց վրայ և ամեն
անդամ որ օրինաց շահուն համար խօսք խնդրէ, կը տըր-
ւի անոր, և ուղղապէս Նախագահէն կ'ստանայ :

Վիճաբանութեան գոցուելէն ետև Ատենախօսն իր ։
Եղրակացութիւնը կուտայ առանց պատճառաբանութեան-
Քուէհամարոց ներկայ կը գտնուի .

ՔԱՐՏՈՒՂԱՐ ՄԵՇ ԱՐԵՒԵԼԻՑ

ՅՈՒՈՒԱԾ 177

Քարտուղարն Արևելք կը նստի Ատենախօսին գիմացը .
Սա ալ խօսքը Նախագահէն կը խնդրէ .

Աշխատութեանց ուրուագիծը կը խմբագրէ և այն
ուրուագիծն վրայ ճարուարապետական տախտակը կը կանգ-
նէ, որ հետեւեալ նստին բացման ժամանակ Մեծ Արևե-
լից հաւանութեանը պէտք է ներկայանայ :

Քուէհամարաց ներկայ կը գտնուի Ատենախօսին պէտ :

Մեծ Վարպետը կրնայ ժողովին աշխատութեանց ներ-
կայ գտնուելու և Արևելք նստելու կոչել, իրեւ օժանդակ
Քարտուղարին, Մեծ Արևելից Քարտուղարութեան գլու-

Խը. կամեթէ նա լդմնուի՝ Մեծ Արևելից վարչութեան
ուրիշ մէկ պաշտօնեայն . բաւական է միայն որ գործոն
Որմնադիր ըլլայ և վարպետի աստիճան ունենայ:

ՄԱՐԶԻԶՔ

ՅՈՒՌԻԱՆ 178

Մարդիշներուն պաշտօնն է բարեկարգութիւնը պահ-
պանել Տաճարին թէ՛ ներսը և թէ՛ գուրսը , նստին ներ-
կայ գտնուող անդամոց որմնադրական հանգամանքն ըս-
տուզել քուէներն ու գնտակներն հաւաքել և քուէհա-
մարաց ներկայ գտնուիլ . վերջապէս Նախագահին տուած
հրամաններն ու պատուէրները կատարել :

ԱՐԱՐՈՂԱՊԵՏՈՒԹ

ՅՈՒՌԻԱՆ 179

Արարողապետութ պաշտօնն է արարողութիւնները ար-
նօրինել :

Գուէարկութեան համար քուէ կամ գնտակ կ'բաշխեն
և բարեգործութեան դանձանակը շրջադայել կուտան :

ՀԱՑՈՒԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԿՆԻՔ ԵՒ ԴՐՈՒՄ, ԵՒ ԿԵՐԱՊԱՀ ՄԵՇ ԱՐԵՒԵԼԻՑ

ՅՈՒՌԻԱՆ 180

Ամեն տարի Մեծ Վարպետը խորհրդին անդամներէն
միոյն կը յանձնէ կնքապահի պաշտօնը :

ՄԵԺ ԱՐԱԿԵԼՔԵՆ ԵՐԱԾ ԲՈՂՈՐ ԹՌՈՒՂԹԵՐԸ ԿԻՉԵԿԱԼ և գը-
րողմեալ պէտք է ըստն .

ՀԱՏՈՒԱՆ ՎԵՅՑԵՐՈՐԴ

ՏԾՆՔ ՈՒԽ-ՑԻՆ ԵՒ ԴԱՄՊԱՆԱՀԱՆԴԵՍՔ ՄԵՇ ԱՐԵՒԵԼԻՆՑ

ՅՈՒՈՒԱՆ 181

Ամեն տարի ՄԵԺ ԱՐԱԿԵԼՔ ԵՐԿՈւ տօն կը կատարէ Եր-
կու արևադարձներուն ժամանակ հանդերձ կոչնօք *

Ամեն երեք տարին միանդամ ձմրան արևադարձի տօ-
նին տեղ գամբանահանդէս մը կը կատարուի 'ի յիշտառակ
վախճանեալ որմնադրաց *

Ամրան արևադարձի տօնը կրնայ աւելի առաջ կատար-
ւիլ Օրէնսդիր ժողովոյ գումարման ժամանակին յարմար-
ցընելու համար *

ՅՈՒՈՒԱՆ 182

Ցօներն ուխտին խորհրդոյն անդամոց մէջէն ընտրեալ
յանձնաժողովոյ մը ձեռոք կը կազմաւորին *

Կոչնոց մէջ կոչնականք իրենց պաշտօններուն նուիրա-
պետական կարգաւը կը նստին . իսկ օրմնադրական հա-
սակներու մասին հաւասարութիւն կը պահուի *

Չորս պարտաւորեալ բաժակ կան , որք ոտքի վրայ և
կարգաւ կառաջարկուին .

4. ՎԵԿԱՎԵԿԵՄԻՆ և նորա ընտանեաց համար, որոյ հետ
և գաղղնոյ բարօրութեան համար մաղթանք կըլլայ .

2. Մեծ վարպետին համար :


3. Օժանդակ Մեծ վարպետաց, Ուխտին խորհրդոյն Մեծ աստիճաննաւորաց, Պատույ Սպայից և Օտար Մեծ Աքեելից համար :

4. Թղթակից Դործարանաց, Այցելու Ե.՝ ըց և երկու կիսագնաոց մէջ գտնուած ամեն Որմնադրաց համար :

Այս վերջին բաժակին համար բոլոր ներկայ Որմնադրք միութեան շղթայ կը կազմեն, սպասաւորող Ե.՝ ըք ալ ՚ի միասին :

ՅՈՒՌԻԱՆ 183

Ուխտին տօներուն, արարողութեանց և կոչնոց մէջ, ճարտարապետական հատուած կամ որմնադրական երդ չկրնար երբեք կարդացուիլ՝ առանց կանխաւ Նախագահին հաւանութեան ներկայանալու :



ԳԼՈՒԽ Բ.

ՄԵՆ ՃՈՂՈՎԸ ՆԻՄԻՑ · ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՄԻ ԳԱՂՎԻՈՅ ԵՒ
ԳԱՂՎԻՑԿՈՆ ԵՐԿԻՄՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ·

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ԵԽՄԻՑ ՄԵՆ ՃՈՂՈՎՀԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

ՅՈՒՈՒԱԾ 184

Միսից մեծ ժաղովը , որ Գաղղիոյ և Գաղղիական երկ-
կիրներու համար գերագոյն խորհուրդն է , Գաղղիոյ ՄԵծ
Արևելից կեղրոնական իշխանութեան ծոցը կազմուած է :

Միսից ՄԵծ ժաղովը Փարիզ կը նստի , և 33 բդ աստի-
ճան ունեցող կանոնաւոր Որմանդիրներէ կը բաղկանայ :

Անդամոց թիւն երեսունուերեք է , ուխտին ՄԵծ
Վարպետն և անոր երկու օժանդակներն ալ ՚ի միասին
համբելով :

Ուխտին ընդհանուր Քարտուղարութեան գլուխն Օ-
ժանդակ Քարտուղարի պաշտօն կը վարէ , եթէ ՄԵծ Վար-
պետն այնպէս որոշէ :

ՅՈՒՈՒԱԾ 185

Միսից ՄԵծ ժաղովը չկրնար բնաւ ուխտին կառավա-
րութեանն ու վարչութեանը վերաբերեալ գործոց խառ-
նուիլ :

ՅՈՒՌԻԱԾ 186

Միսից Մեծ ժողովին անդամոց տիտղոսն ու հանգամանքն ընտրութեամբ կ'ստացուի գաղտնի քուէով և համեմատական մեծամասնութեամբ։

Երեսունեւերեքերորդ աստիճան ունեցող որ և է Որմնադիր՝ առանց ընտրութեան իրաւունք չունի Միսից Մեծ ժողովին անդամ՝ ըլլալու։

ՅՈՒՌԻԱԾ 187

Ամեն կանոնաւոր Որմնադիրք՝ որ 33 աստիճան ունին և Միսից Մեծ ժողովին անդամ չեն, նախընթաց յօդուածին արամադրութեան համեմատ միայն կընան ընդունուիլ այն ժողովին մէջ։

ՅՈՒՌԻԱԾ 188

Միսից Մեծ ժողովը միայն իրաւունք ունի որմնադրութեան երեք վերջին աստիճանները տալու, այն է հին Սկզբանական ծիսին 31, 32, 33 և վերջին աստիճաններն, ինչպէս նաև Մեծ Արևելքէն ճանչուած ուրիշ ամեն ծէս-սերու համապատասխան աստիճանները։

Նմանապէս պաշտօն ունի շնանչուած ծիսից ընդունելութեան խնդիրները քննել և անոնց վրայ տեղեկագրել առ խորհուրդն Ուժամբ, ըստ արամադրութեան 194, 195 և 196 յօդուածոց։

ՅՈՒՌԻԱԾ 189

Եիսից Մեծ ժողովը Գաղղիոյ Մեծ Ազնելքէն ճանչը-
ւած ծիսից թուոյն համեմատ հատուածներու կը բաժ-
նուի :

ՀԱՏՈՒԱԾ ՆՐԿՐՈՐԴ

ԵԽՍԽՑ ՄԵԾ ԺՈՂՈՎՈՑ ՍՊԱՅՔ

ՅՈՒՌԻԱԾ 190

Եիսից Մեծ ժողովին Սպայներն են.

1. Ռւխտին Մեծ վարպետը Ամենակու վեհու Մ. Հրամատար.
2. Ա. Տեղակալ հրամատար.
3. Բ. Տեղակալ հրամատար. (ի ժողովի).
4. Գետական պաշտօնեայ (ի ժողովի).
5. Մեծ առենադպիր քարտուղար Սուրբ Տէրութեան.
6. Մեծ Աղքատախնամ կամ կլէօմօս.
7. Մեծ կնքապահ.
8. Մեծ Ազարողապետ և Ներածիչ.
9. Մեծ հրամատար պահապանաց.
10. Մեծ գրօշակիր.

ՅՈՒՌԻԱԾ 191

Այս Սպաներն, ի բաց առեալ Մեծ վարպետն և Օ-
ժանդակները, այսուհետեւ մէկ տարւոյ համար կընարուին

այեմբեր 30ին Ս. Անդրէասի տօնին օրը, Նիսից Մեծ ժողովէն, քուէից բացարձակ առաւելութեամբ։

ՅՈՒՈՒԱԾ 192

Նիսից Մեծ ժողովն յատուկ կանոնադրութիւն մ'ունի Մեծ Վարպետին հաւանութեամբ հաստատեալ։

ՅՈՒՈՒԱԾ 193

Նիսից Մեծ ժողովին անդամները Մեծ Արևելից ընդհանուր ժողովներուն մէջ առանձնաշնորհութիւն կամ գերագահութիւն բնաւ չունին։

ՀԱՑՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

ՆՈՐ ՇԻՍԻՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱՆՔ

ՅՈՒՈՒԱԾ 194

Մեծ Արևելքէն չընդունուած ծէս մը գաւանող Որմնադրական ընկերութիւնք՝ որ զիրենք ճանչցնելու փափաքին, պարտին յատուկ խնդրագիր մ'ուղղել Անոր՝ իրենց կազմական արտօնագրին կանոններուն և Աստիճանաց տեսրակներուն հետո։

Այս թուղթերը Նիսից Մեծ ժողովին կը զրկուին, որ գաղտնի քուէով և բացարձակ առաւելութեամբ հինգ անդամէ յանձնաժողով մը կընտրէ և անոր կը յանձնէ քննել այն թուղթերն, և ստուգել խնդրատուաց կազմական արտօնագիրը Յանձնաժողովը տեղեկագիր կուտայ թէ՛ կազ-

մական արտօնադրին բնութեանն և թէ՛ ծիսին ամբողջութեան վրայ։

Եթէ այն ծէսը բարոյականի՝ ինչպէս նաև Ուխտիս ընդհանուր սկզբանց հակառակ բան մը չպարունակեր, Միսից Մեծ ժողովն առժամանակեայ որոշում մը կընէ։

Եթէ որոշումը նպաստաւոր է, Խնդրատու ընկերութեան կը ծանուցուի, որ իւր անդամոց ցուցակը Մեծ Արևելից կը դրկէ, և Ուխտին Սահմանադրութեան և ընդհանուր կանոնաց ամեն մասամբ համաձայնելու խոստում կուտայ։

ՅՈՒՌԻԱԾ 195

Միսից Մեծ ժողովին Պետական պաշտօնեայն տեղեկագիր մը կը դրկէ Ուխտին խորհրդոյն, սա ալ վերջնական որոշումը կուտայ։

Միսին ընդունուելէն ետե, անոր հիմնագրերը, կանոններն ու աետրակները Մեծ Արևելից դիւանառունը կը գրուին, և այս պահեստը Խնդրատու ընկերութեան դրկուած որոշման գրին մէջ կը լիշուի։

Այն Միսին մէջ կազմուած ամեն գործարանք, իրենց սկզբնական հիմնագիրը Մեծ Արևելիքէն ելած նոր արտօնագրի մը հետ փոխանակելէ ետե, թղթակցութեան անդամ կըլլան։

ՅՈՒՌԻԱԾ 196

Երբոր Գործարան մը նոր ընդունուած ծիսով կազմը ւիլ խնդրէ, Գործարանաց կազմութեան վերաբերեալ 9 և հետեւեալ յօդուածոց համեմատ պիտի վարուի։

Եթէ Մեծ Արևելք շընդունի այն ծէսը, անոր հիմնական թուղթերը, կանոններն ու աստիճանաց տումարները նորէն խնդրամատոյց ընկերակցութեան կը յանձնուին:

ՀԱՏՈՒԱԾ ԶՈՐՌՈՐԴ

ՆԻՍԻՑ ՑԱԽԵԼՄԱՆ ԽՆԴՐԱՆՔ

ՅՈՒԴՈՒԱԾ 197

Գաղղիոյ Մեծ Արևելից հովանոյն ներքև հիմնեալ Օթեակները գաղղիական ծիսիւ կը սահմանադրին . բայց կրնան, եթէ խնդրեն, ուրիշ ծէսերով ալ միանդամայն վարուելու արտօնութիւն ստանալ:

Բարձրագոյն Գործարան մը չկրնար Նիսից յաւելման արտօնութիւն ստանալ՝ եթէ նոյն արտօնութիւնը շնորհուած չէ իր անդամ եղած Օթեակին .

ՅՈՒԴՈՒԱԾ 198

Նիսից յաւելում խնդրող Գործարանը պարտաւորէ ուղղել առ Մեծ Արևելք .

1. Այս խնդրոյն համար բոլոր անդամոց յատուկ հըրաւիրմամբն և քուէարկուաց երկու երրորդին մեծամասնութեամբ տրուած որոշման քաղուածը .

2. Անդամոց ցուցակն՝ իւրաքանչիւրոց ստորագրութեամբ .

3. Խնդրուած Նէսն ունեցող եօթն անդամոց վկայականները .

4. Խնդրուած Ծիսին կազմութեան հիմնագիրը .

5. Վահանակելի հանդանակութիւնք :

Երբոր Գործարան մը չկրնայ Յրդ պարբերութեան մէջ ,
նշանակեալ թուղթերը ներկայացնել , նոյն Ծէոը դաւա-
նող ուրիշ Գործարանի մը կողմէ վկայագիր մը պէտք է
ներկայացնէ հաստատող թէ իր անդամոց եօթն յիշեալ
Ծիսիւ ընդունուած են :

ՅՈՒՂԻԱԾ 199

Եթէ Փարիզի Ար. ից Գործարաններէն միոյն Ծիսից
յաւելում չնորհուի , նոր յաւելեալ ծիսիւ բացումն
Ուխտին խորհրդոյն անդամներէն երեք տեսուչներու ձեւ-
ռամք կը կատարուի , զորս Մեծ Վարպետը կընտրէ :

Ուրիշ Ար. ից Գործարաններուն համար՝ բացման
ձեք Մեծ Վարպետը կորոշէ :

ՅՈՒՂԻԱԾ 200

Ծիսից յաւելում խնդրող Գործարան մը կրնայ այ-
ցելուներ ընդունիլ , բայց չկրնար պաշտօնագէս բացու-
մէն առաջ ներածութիւն ընել կամ որդեգրութիւն ըն-
դունիլ :



ՊՐԵԿ ՀՈՐԻՌՈՐԴ

ՈՐՄՆԱԴՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ · —ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆՔ ·
—ՕՃԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԳՆՈՒԹԵԱԱՆ ՏՈՒՆ · —ՊԱՇՏՈՆԱԳԻՐ ·

ԳԼՈՒԽ Ա.

ՄԻԱԿ ՀԱՏՈՒԱԾ

ՈՐՄՆԱԴՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՅՈՒՆՈՒԱԾ 201

Որ և է որմնադրական դրուածք, հրատարակուելէն
մինչև ուժ օր, գաղղիոյ Մեծ Արևելից դիւանին պիտի
յանձնուի երկու օրինակ: Այս Օրինակները Մեծ Արե-
ւելից մատենադարանին մէջ պիտի մնան:

— ՅՈՒՆՈՒԱԾ 202

Գաղղիոյ Մեծ Արևելքէն կախում ունեցող գործարա-
նաց մէջ ցըռուած որ և է գրուածոց երկու օրինակը նա-
խընթաց յօդուածին որոշած պայմանաժամուն մէջ Մեծ
Արևելից մատենադարանին՝ պիտի յանձնուի:

ՅՈՒՌԻԱԾ 203

Մամիոյ միջոցաւ գործուած որմնագրական յանցանք-ներն հասարակային իրաւանց սահմանին մէջ կըմտնեն, և հին կանոնաց 270 և հետևեալ յօդուածոց արամագրութեանց կենթարկին :

ԳԼՈՒԽ Բ.

ՈՐՄՆԱԴՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆՔ

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՈՐՄՆԱԴՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԵԱՆՑ ԲՆՈՒԹԻՒՆԸ

ՅՈՒՌԻԱԾ 204

ՄԵծ Արևելք վարձատրութիւն կընէ այն գործարանաց և որմնագրաց, որք Ուխտին կարեոր ծառայութիւններ մատուցանելով, առաքինական, մարդասիրական կամ անձնուիրական գործերով օգտակար հաստատութիւններով կամ որմնագրութեան վերաբերեալ գրական և ուսումնական աշխատութիւններով նշանաւոր ըլլան :

ՅՈՒՌԻԱԾ 205

Վարձատրութիւններն են .

1. Արծաթեայ չքաղցամ մը .

2. Մագաղաթի վրայ վկայագիր մը , վարձատրութեան պատճառները յիշատակող .

3. Եքադրամ ստացող Գործարանաց կամ Որմնադրաց անուններուն և պատուանուններուն յատուկ պատկերի մը մէջ արձանագրութիւն :

ՅՈՒՌՈՒԱԾ 206

Եքադրամը Գաղղիոյ Մեծ Արևելից տիպովն և վարձատրեալ Գործարանին կամ Ե. օր անուամբը կը կոխուի և 52 հազարորդամեթր երկայնութիւն կունենայ . Խաչաձեւ կը կախուի Մեծ Արևելից գոյներով և 42 հազարորդամեթր երկայնութեամբ մետաքսեայ պճագնուն (մօառէ) ժապաւէնէ մը :

Երբոր Գործարանի մը տրուի , Նախադահին կուրծքի մեծ ժապաւէնէն կը կախուի վերսիշեալ փոքր ժապաւէնով .

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԾ ԶԵՒԱԿԱՆ
ԿԱՆՈՆՔ

ՅՈՒՌՈՒԱԾ 207

Վարձատրութեանց վերաբերեալ խնդրուածք՝ Գաղղիոյ Մեծ Արևելից պէտք է ուղղուին ամեն տարի դեկտ, էն առաջ .

Այս խնդիրները , քանի որ հասնին , թուական կար-

գաւ կարձանագրին յատուկ տումարի մը վրայ , և Ուխ-
տին խորհրդոյն անդամներէն կաղմուած յանձնաժողովոյ
մը քննութեան կը յանձնուին . իւրաքանչիւր խնդրագրի
համար եղած որոշումը լուսանցքին վրայ կը նշանակուի .

Յանձնաժողովն իւր աշխատութիւնը Մեծ Վարպետին
կը ներկայացնէ ամեն տարի մարտ 15-ին մինչև 15 .

ՅՈՒՌԱԾ 208

Երբոր Գործարան մը որմնագրական վարձատրութեան
խնդիր ուղղէ Մեծ Արևելից , թէ իւր անուամբ և թէ
իւր մէկ անդամին համար , պէտք է հետևեալ գրելն ալ
'ի միասին զրկէ 'ի հաստատութիւն .

1. Եթէ խնդիրը Գործարանին համար է , խնդրոյն հիմ
եղող պատճառներն ու պարագաները ցոյց տուող առե-
նագրութեանց տումարին թուականաւոր քաղուածը .

2. Եթէ Որմնագրի մը համար է , խնդրամատոյց Գոր-
ծարանն այն Ե.՝օր խնդրագրէն զատ , որոյ մէջ անոր ա-
նունը , մականունը , ծննդեան տեղը , տարին , ամիսը , օ-
րը , քաղաքային հանդամանքը , բնակատեղին և որմնագ-
րական սատիճաննը նշանակեալ պէտք է ըլլայ , անոր պատ-
ւաւոր գործերն ու արարքները , որմնագրական ճառե-
րը , եթէ ունի , և որմնագրութեան մատուցած կարեոր
ծառայութիւնները ցոյց տուող վաւերական գրութիւն-
ներն ալ պէտք է զրկէ .

Գործարանէն ելած այս ամեն գրութիւնք ստորագ-
րեալ պէտք է ըլլան հինգ առաջին լոյսերէն , գրոշմեալ ,
կնքեալ և կնքապահին ստորագրութեամբ վաւերացեալ :

Իսկ որմնագրութեանէ գուրս կատարուած բարի և օգ-
տակար գործոց համար արուելիք վկայագրերը քաղաքա-

յին և տեղական իշխանութիւններէն ալ պիտի վկայուին
ու վաւերացուին :

ՅՈՒՂԻԱԾ 209

Մեծ վարդեմոք տեղեկաբեր մը կը նշանակէ, որ Մեծ
Արևելից ճառ մ'ուզդիլով, վարձատրութիւն խնդրողաց
արժանաւորութեան փաստերն ու իրաւունքներն և Մեծ
Արևելից ընարութեան պատճառները կը ծանուցանէ :

ՀԱՏՈՒԱԾ ՆՐՐՈՐԴ

ՎԱՐՁԱՑՐՈՒԹԵԱՆԱ ԲԱՇԽՄԱՆ ԵՂԱՆԱԿ .

ՅՈՒՂԻԱԾ 210

Վարձատրութեանց բաշխումը Մեծ վարդեմոք կընէ
Մեծ Արևելից հանդիսաւոր ժողովին մէջ, օրէնսդրական
աշխատութեանց համար գումարուած միջոցին :

ՅՈՒՂԻԱԾ 211

Մեծ Արևելից տուած շքադրամներն իրմէ կը տրուին
հանդիսաւոր կերպիւ .

1. Փարիզի Արևելից և արուարձանաց Գործարաններուն
համար՝ յատուկ պատգամաւորութեան մը, որ Գործարանին
հինգ առաջին աստիճանաւորներէն կը բաղկանայ .

2. Նոյն Արևելից որմնագիրներուն անձամբ, կամ ե-

թէ ներկայանալու արդելք մ'ունենան, անոնց կողմէ փու-
խանորդաբար ներկայացեալ ե՞ս օր մը .

3. Վերջապէս ուրիշ Արևելից Գործարաններուն ու
որմնադրաց համար՝ նոյն գործարանաց կամ վարձատիեալ
Որմնադրին անդամ գտնուած Գործարանին պատգամա-
ւորներուն : Այս պատգամաւորներն յատուկ իշխանու-
թիւն պէտք է ունենան այս գործին համար .

ՅՈՒՈՒԱՇ 212

Մեծ Արևելք՝ նոյնպէս իր կողմէ մրցման դրուած
խնդրոց վրայ յօրինեալ մոռաւորական երկոց համար մը-
ցանակներ կուտայ :

ԳԼՈՒԽ Բ.

ՈՐՄՆՈԴՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՏՈՒՆ

ՀԱՑՈՒԱՇ ԱՌԱՋԻՆ

ՈՐՄՆԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՍՏ

ՅՈՒՈՒԱՇ 213

Փարիզի մէջ սահմանուած ՕԳՆՈՒԹԵԱՆ ՏԱՆ վարչա-
կան յանձնաժողովն՝ Ուժութեալու ժողովուն յունիւնութիւն կը
կոչուի :

ՅՈՒՂՈՒԱԾ 214

Որմնադրական օգնութեան յանձնաժողովը Փարիզ կը նստի Մեծ Արքելից Օթեանը :

Ուխտին խորհրդոյն հսկողութեան ներքեւ և Օրէնըս-դըրական ժողովոյ տարեկան համարատութեամբ կը վա-րէ իւր պաշտօնը :

Հինգ անդամէ կը բաղկանայ , զորո ամեն տարի Մեծ Վարպետը կանուանէ :

ՅՈՒՂՈՒԱԾ 215

Այս յանձնաժողովին կ'օժանդակեն կարդաւ Սէնի գա-ւառին Օթեակներուն Աղքատախնամ Ե.՝ րք , կամ անոնց տեղ իւրաքանչիւր Օթեակի նշանակած մէկ անդամը :

Այս Ե.՝ րք որք թուով վեց պիտի ըլլան , յանձնաժո-ղովին աշխատութեանց կը մասնակցին , վեցամսեայ ժա-մանակ , որոշողական ձայնիւ . վեց ամսէն ետև ուրիշ վեց Ե.՝ րք կանցնին ասոնց տեղ , որմնադրական տարեցոյցին մէջ Օթեակներուն արձանագրութեան կարդաւ :

Ելնող վեց Ե.՝ րք՝ վեց ամսէն ետև գարձեալ յանձ-նաժողովին աշխատութեանց կը մասնակցին , բայց առանց որոշողական ձայնի :

ՅՈՒՂՈՒԱԾ 216

Որմնադրական օգնութեան գործն իր մէջ կը բռվան-դակէ ամեն ինչ որ բարեգործութեան կը վերաբերի Փի-զիքական բարոյական և մոաւորական նկառմամբ .

1. Օգնութիւն աղքատաց, նպար, հանդերձ և դրամը բաշխելով.

2. Հանդանակութիւն յայտնի գժբաղդութեանց համար.

3. Եղբայրական օգնութիւն գժբաղդ ութեան մէջ ինկած Որմնադրաց, նպաստ և պաշտպանութիւն անոնց այրիներուն և անշափահաս զաւակաց.

4. Որմնադրական հիմնարկութիւնք, ինչպէս են օգնութեանց տունք, մանր տղայոց վարժատունք, գպրոցք, որբանոցք, պաշտպանութիւնք, ձրի ուսուցմունք, հասարակային մատենադարանք և այլն :

ՅՈՒՌԻԱՌ 217

Որմնադրական օգնութեան սնտուկին հասոյթներն են.

1. Օգնութիւնն ՏԱՆ տումարին առնելեաց կողմը նըշանակեալ գումարք, որք կըբաղկանան քաղաքային ընկերութեան բաժիններէ, այլ և այլ պահանջներէ, եւ Մեծ Արևելից վրայ եղած օգնութեան գումարներէ.

2. Որմնադրական օգնութեան օգտին համար Օթեակիներու տուած կոչնոց, նուագահանդիսից և այլ տեսակ արարողութեան և հանդիսից արդիւնք, ինչպէս նաև Մեծ Արևելից հրամանաւ Որմնադրաց հովանաւորութեան ներքև կատարուած հանդանակութեանց և այլ մարդասիրական գործոց արդիւնք.

3. Գործարանաց և Որմնադրաց կանոնաւոր նուիրատուութիւնք, ինչպէս նաև Փարիզի և անտր արուարձանաց գործարաններուն բարեգործական գանձանակին հասութից կէսը.

4. 218 և 273 յօդուածոց մէջ նշանակեալ հասութից
աղբիւրք .

5. Փարիզի և արուարձանաց Օթեակներուն տրուած
հրիտակք և նուէրք :

ՅՈՒՌԻԱԾ 218

Փարիզի և արուարձանաց Գործարաններն իրենց բարեգործութեան գանձանակին կէսն Որմնադրական օդ-
նութեան կը թողուն, և ասով ազատ կը մնան իրենց ան-
դամներէն զատ ուրիշներու օգնութիւն տալու խնդիրնե-
րէ։ Հետեւարար կընան այս խնդիրներն Որմնադրական
օգնութեան կեդրոնական յանձնաժողովին յղել .

ՅՈՒՌԻԱԾ 219

Գործարանաց բարեգործութեան գանձանակին ար-
դիւնքը Մեծ Արևելից մնաւկին կըյանձնուի ամեն վեց
ամիս՝ Աղքատախնամ Ե.՝ Ր խնամօք, Արևելադաճի տօնե-
րուն ժամանակ, առ առաւելն մինչև յունիսի և դեկտեմ-
բերի վերջը .

ՅՈՒՌԻԱԾ 220

Ամեն նիստերու ատենադրութիւն՝ իրաքանչիւր Գոր-
ծարանի մէջ պէտք է ճշգիւ յիշատակէ բարեգործու-
թեան գանձանակին արդիւնքը .

Ատենախօսը պէտք չէ եղրակացութիւն տայ որ եւ է
ատենադրութեան՝ որ այս յիշատակութիւնն ըրած չըլլայ,
և միանդամայն դէմ պէտք է կենայ անոր ընդունուելուն .

ՅՈՒՂԻԱՆ 221

Փարիզի Արևելից Օգնութեան անտուկին նման սըն-
տուկներ կրնան կազմուիլ բազմաթիւ Օթեակներ ունեցող
Արևելից մէջ.

ՀԱՏՈՒԱՆ ԵՐԿՐՈՐԴ

ՕԳՆՈՒԹԵԱՆ ՑՈՒՆ

ՅՈՒՂԻԱՆ 222

Որմագրական Օգնութեան տունը, զոր Մեծ Արևելք
1840 փետրվար 15ին հիմնած և 1854 յունվար 24ին վե-
րակազմած է, պատսպարան (բնակարան) չունեցող Որմա-
գիրներն և անոնց բնտանիքը կը պատսպարէ օրոշեալ ժա-
մանակի մը համար, և կամ սոսկ բնակարան, կամ բնա-
կարան և կերակուր ի միասին կը մատակարարէ անոնց.

ՅՈՒՂԻԱՆ 223

Որմագրական օգնութեան յանձնաժողովին պաշտօնն
է այդ հաստատութեան վարչութիւնը • Ամեն շաբթու
Մեծ Արևելից Օթեանը կը գումարի և այն նստին մէջ
Օգնութեան ջան հաշիւները քննելով, Մեծ Արևելքէն
խնդրուած օգնութեանց վրայ արժան եղած որոշումը
կընէ .

ՅՈՒՌԻԱԾ 224

Փարիզէն անցնող կամ հռն բնակեալ ո' և է դժբաղդ եղբայր ուղցապէս առ Մեծ Արևելք պէտք է դիմէ, իւր Որմնադրական հանգամանքն ու խկութիւնը հաստատող գրութիւններն ալ իւր խնդրագրին կցելով:

ՅՈՒՌԻԱԾ 225

Փարիզի Օգնութեան տան համար եղած կտակները, դրամոց, կտաւեղինաց, զգեստուց, կոշկաց, և այլ որ և է նիւժոց նուիրատուութիւնները Մեծ Արևելք կընդունի:

Որմնադրական օգնութեան կեդրոնական յանձնաժողովին պաշտօնն է այն նուէրներն ստանալ և անոնց բարուոք բաշխման հսկել:

ՅՈՒՌԻԱԾ 226

Որմնադրական օգնութեան յանձնաժողովց տեղեկադրբին վրայ՝ Մեծ Վարպետը վճռագրով կը կանոնաւորէ Օգնութեան տան ելմտական վիճակին և վարչական պաշտօնէից վերաբերեալ ամեն գործերը:

Իւր յատուկ կանոնադրութիւնն Ուխտին խորհրդոյն քննութեամբն ու հաւանութեամբը կը հաստատուի, և առանց անոր հաւանութեան չկրնար փոփոխիլ:

ԳԼՈՒԽ Դ.

ՄԻԱԿ ՀԱՏՈՒԱԾ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ ՄԵՇ ԱՐԵՒԵԼԻՑ

ՅՈՒՂՈՒԱԾ 227

Օրագիրը Մեծ Արևելից բոլոր գործողութիւններն իւր իրաւասութեան ներքեւ գտնուող Գործարանաց ծանուցանելու սահմանեալ պաշտօնական հրատարակութիւն մ'է , որ կը բովանդակէ Մեծ Արևելից Օրէնսդրական ժողովով սահմանած օրէնքները , Մեծ վարպետին հրամանագրերն ու վճիռները , Ուխտին խորհրդոյն որոշումներն ու վճիռները , Մեծ Արևելից ժողովին ատենական գործողութիւնները , Ուխտին տօններն ու կոչունքները , ինչպէս նաև վարչական ազդերն և ընդհանրապէս այն ամեն իրողութիւնք՝ որք Գործարանաց և Որմնադրաց ծանօթութեան օդտակար կրնան ըլլալ :

ՅՈՒՂՈՒԱԾ 228

Զրիապէս ամեն ստորակարգեալ Գործարանաց կը զըրկուի : Հրատարակութեան վերաբերեալ ամեն ծախքերն Ուխտին սնտուկէն կը հոգացուին :

ՅՈՒՌԻԱԾ 229

Որմնադրական կառավարութեան պաշտօնական բերանն ըլլուլով, խմբագրութիւնն Ուխտին խորհրդոյն Նախագահէն, Քարտուղարէն և Երեք անդամներէ բաղկացեալ մասնաժողովոյ մը, յանձնուած է, զոր տարուէ տարի Ուխտին խորհրդութեալ կանուանէ՝ իւր անդամոց մէջէն առնըլով։

Պաշտօնական Օրագրին ոչ մի թիւն՝ առանց Մեծ Վարպետին հաւանառութեանը կանխաւ ներկայանալու՝ չկը նար հրատարակուիլ։

ՅՈՒՌԻԱԾ 230

Օրագրին պաշտօնական մասը պէտք է իւրաքանչիւր Օթեակի մէջ Ատենախօսէն կարդացուի կանոնաւոր նստի մէջ, և այս ընթերցումն ատենագրութեան մէջ պէտք է յիշուի։

ՅՈՒՌԻԱԾ 231

Մեծ Արևելից Օրագիրն Ուխտին միակ պաշտօնական բերանն ըլլուլով, անոր պաշտօնական մասին մէջ որմնադրական իշխանութեան կնքոյն ներքեւ եղած հրատարակութիւններէն դուրս ուրիշ հրատարակութեանց պատասխանատու չկընար ըլլալ Գաղղիական Որմնադրութիւնը։

ՅՈՂՈՒԱԾ 232

ՄԵծ Արևելք ամսօրեայ տետրակներով կը զրկէ Օ-
բադիրը թղթակցութեան գործարանաց և բաժանորդ-
որմնադրաց :

Տարեկան բաժանորդադրութիւնն ամեն մէկ Որմ-
նադրական տարւոյ համար ընդհանուր ժողովէն կորոշուի
առանց կոտորակի :

Գործարանք պարտական են ՄԵծ Արևելից Օրագրին
հաւաքածոյն պահել և Տեսուչներուն ներկայացնել :



ՊՐԵԿ ՀԵՆԳԵՐՈՐԴ

ՏԱՐԵՑՈՅՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՔ ԱՍՏԻՃԱՆԱՑ ՏԵՏՐԱԿՔ
ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՄԻԱԿ ԳԼՈՒԽ

ՀԱՏՈՒԱՇ ԱՌԱՋԻՆ

ՈՐՄԱՆԴՐԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ

ՅՈՒՂՈՒԱՆ 233

ՄԵծ Արեելքն ամեն տարի Որմադրական տարեցոյց
մը կը հրատարակէ, և ձրիապէս թղթակցութեան ամեն
գործարանաց կը դրկէ։

Իւրաքանչիւր Տարեցուցի գինն հետեւեալ կերպիւ
որոշուած է։

1 Ֆը. 25 Սանթ. ՄԵծ Արեելից մէջ ունեցած գին։

1 Ֆը. 50 Սանթ. գաւառաց համար ձրի զրկուած։

Իւրաքանչիւր Գործարան պարտական է Որմադրա-
կան Տարեցոյցն ունենալ և Տեսուչներուն ներկայացնել։

ՀԱՏՈՒԱՇ ԵՐԿՐՈՐԴ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԱՑ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

ՅՈՒՂՈՒԱՆ 234

Թղթակցութեան ամեն գործարանաց զրկուած ընդ-

Հանուր կանոնաց երեք օրինակները՝ թղթատարութեան ժախքէ աղատուելով գործարանաց հաշուոյն պարտքի կողմը կարձանագրին:

Երեք օրինակաց մին Նախագահին քուչ պիտի կենաց երկրորդն Ատենախօսին և երրորդը բարտուղարին:

Մէն մի գործարան պարտական է միշտ ընդհանուր կանոնաց երեք՝ օրինակներն ունենալ և Տեսուչներուն ներկայացնել:

Օթեակները պարտական են Սահմանադրութեան և ընդհանուր կանոնաց մէկ օրինակը նորընծայից տալ:

ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

ԱՍԹԻԱԿԱՅ ՏԵՏՐԱԿԻ ՀԱԽԱՔԱՆՈՅՔ

ՅՈՒՊԻԱԾ 235

Մէն մի գործարան պարտական է Աստիճանանաց տետրակի ամբողջ հաւաքածոյ մ'ունենալ և Տեսուչներուն ներկայացնել:

ՅՈՒՊԻԱԾ 236

Մեծ Արևելք՝ Աստիճանաց տետրակի հաւաքածոյ կուտայ ուղղապէս ամեն գործարանաց՝ երբոր կանոնաւորապէս խնդրեն, և արդէն չունենալին արդարացնեն: Գիներն հետևեալ կերպիւ որոշուած են.

Հաւաքածոյ խորհրդաւոր աստիճանաց 45 Ֆր.

- > Ժողովական (Քարիթիւլէր) աստիճանաց 60 Ֆր.
- > Փիլիսոփայական աստիճանաց (30 աստիճ.) 75 "

ՀԱՏՈՒԱԾ ԶՈՐՈՈՐԴ
ՑՈՒՑՈՒԹԻՒՆ ՎԿԱՅԱԳՐՈՑ

ՅՈՒՂՈՒԱԾ 237

Որմնադրական վկայագրոց համար եղած որ և է խընդ-
րանք՝ արդիւնք ունենալու համար կանոնաւոր, թըղթա-
տարի ծախքէ ազատ, և վկայագրոց վճարման համար հարկ
եղած մետաղներով ընկերացեալ պէտք է ըլլայ:

Առանց այս օրինական պայմաններուն՝ ոչինչ և չեղ-
եալ կը նկատուի :

ՅՈՒՂՈՒԱԾ 238

ՄԵԺ ԱՐԿԵԼՔ անհատաբար Որմնադրական վկայագիր
չտար երբէք, այլ գործարանաց կը դրկէ՝ նոցա կանոնաւոր
խնդրանօք :

ՀԱՏՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՕՐԻՆԱԿԻ ՑՈՒՑԱԿԱՑ ԵՒ ՎԿԱՅԱԳԻՐ ԽՆԴՐԱՆԱՑ

ՅՈՒՂՈՒԱԾ 239

ՄԵԺ ԱՐԿԵԼՔ՝ Թղթակցութեան գործարանաց կը դր-
կէ ջարձարանաց ցուցակներու տպեալ օրինակներ հարիւ-
ըը 18 մրանքի, և վկայագրի խնդրանաց օրինակներ՝ հա-
րիւըը 10 մրանքի :

ՊՐԵՎ Ա. ԵՑՑԵՐՈՐԴ

ՈՐՄՆԱԴՐԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՐՔ ԵՒ ՇՔԱՆՀԱՆՔ · · · ՔԱՐՑՈՒ-
ՂԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՇՏՈՆԵԱՑՔ · · ·

ԳԼՈՒԽ Ա.

ՈՐՄՆԱԴՐԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՐՔ ԵՒ ՇՔԱՆՀԱՆՔ

ՀԱՑՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՄԵՇ ԱՐԵՒԵԼԻՑ ԱՇԴԱՄՈՑ ԵՔԱՆՀԱՆԵՐԸ

ՅՕԴՈՒԱԾ 240

ՄԵծ Վարպետին կուրծքի ուրարը, պճպճուն ժապա-
լէն մ'է նարնջագոյն, կանաչեղը, միութեան շղթայով մը
զարդարուած, և ակասիայի երեք ոսկեթել ոստերով
բանուած :

Մէջ տեղը ճաճանչաւոր եռանկիւն մը կայ նուիրա-
դործեալ խորհրդական նշանով :

ՅՕԴՈՒԱԾ 241

Օժանդակ ՄԵծ Վարպետներուն կուրծքի ուրարն ալ
մի և նոյն է, բայց ակասիայի երկու ոստ միայն ունի, եր-
րորդը կազնիի ոստ մ'է :

ՅՕԴՈՒԱԾ 242

ՄԵծ պաշտօնատարաց ուրարն ալ վերոյիշեալին նման

է, բայց ակասիայի և կաղնիի մէկ մէկ ոստ միայն ունի, և ճաճանչաւոր եռանկիւնին տեղ՝ Մեծ Արևելից փունջն ունի ոսկի ճաճանչով մը շրջապատեալ:

ՅՈՒՌԻԱԾ 243

Պատուակալ սպայից ուրարը նախընթացէն այս տարբերութիւնն ունի, որ կաղնւոյ ոստն արծաթ է:

ՅՈՒՌԻԱԾ 244

Ուխտի խորհրդոյն անդամոց ուրարը նարնջագոյն պըճապըճուն ժապաւէն մ'է կանաչեզր, ակասիայի երկու արծաթաթել շաղապատուն ոստերով և Մեծ Արևելից կանաչ ու արծաթ փունջով զարդարուած:

Այս զանազան շքանշանները պարանոցէ վար կուրծքի վրայ կը կախուին:

Խորհրդին անդամները միանդամայն ոսկի ծոպով վարդմը կը կրեն ուրարով կամ առանց ուրարի, որոյ վրայ Խորհրդութ Ուխտէն բառերը բանուած են:

ՀԱՑՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ԳՈՐԾԱՐԱԿԱՑ ՄԵԶ ԳՈՐԾԱՇՈՒԱԾ ՈՒՐԱՐՔ

ՅՈՒՌԻԱԾ 245

Որմնադրական այլ և այլ աստիճաններն և զանազան պաշտօններն որոշող ուրարներն՝ Օթեակաց համար կապոյտ, Ժողովարանաց համար կարմիր և 30 աստիճանի Քատ.։ Խորհրդարանաց համար սև են:

Գործարանաց սպաներն իրենց պաշտօնին ուրարները
պարանոցէ վար կուրծքերնուն վրայ կը կախեն, իրենց
պաշտօնավարութեան միջոցին։

ՀԱՑՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՄԵՇ ԱՐԵՒԵԼԻՑ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԵՆ, ԵՔԱՆՅԱՆՆԵՐԵՆ ԵՒ
ՈՒՐԱՐՆԵՐԵՆ ՈՒՐԻՇ ՎԿԱՅԱԿԱՆ, ԵՔԱՆՅԱՆ ԵՒ ՈՒՐԱՐ
ԿՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՅՈՒՈՒԱՆՔ

ՅՕԴՈՒԱԾ 246

ՄԵՇ Արևելից ամեն հին տիտղոսներն իրեն. սպայ,
պատուակալ սպայ, և այլն, վերջապէս ներկայ կանոնադ-
րութեանց մէջ պարունակեալներէն գուրս ուրիշ ամեն
տիտղոսք ջնջուած են և մէկը չկրնար գործածել։

ՅՕԴՈՒԱԾ 247

Ներկայ կանոնադրութեանց մէջ համբուածներէն ու-
րիշ որ և է տիտղոս, չքանչան և ուրար արդիլեալ է։

ՅՕԴՈՒԱԾ 248

Օտար Գործարանի մը կամ Որմնադրական կառավա-
րութեան մը կողմէ պատուոյ տիտղոս կամ շքանշան ստա-
ցող որմնադիրք չեն կրնար ընդունիլ կամ կրել՝ առանց
զայն շնորհող վկայագիրը կանխաւ ՄԵՇ Վարպետին վա-
ւերացմանը ներկայացնելու։

ՅՈՒՌԻԱԾ 249

Ասոր համար պէտք է նախ խնդրագիր մը տան Մեծ
Արևելից Քարտուղարութեան , վաւերացումը խնդրուած
վկայագրին հետ , և երկու ֆրանք վճարել Գանձապահին՝
առժամանակեայ ընկալագիր մ'ստանալով :

ՅՈՒՌԻԱԾ 250

Առանց այս վճարքը հաստատող ընկալագրի ներկա-
յացեալ վաւերացման խնդրագիրն իրբե չեղեալ կը նկատ-
ուի :

ՅՈՒՌԻԱԾ 251


Վաւերացումը պիտի ըլլայ պաշտօնապէս հաստատել .
1. Ցիտզոս կամ շքանշան ստացողին նոյնութիւնը .
2. Ցուող Գործարանին կանոնաւորութիւնը .
3. Ցուող Գործարանին կամ Որմնադրական կառավա-
գարութեան աշխատած Ծիսին պաշտօնապէս ճանչուած
ըլլալը :

ՅՈՒՌԻԱԾ 252

Վաւերացման համար վճարուած գումարներն Օգնու-
թեան իշան սնտուիլին պիտի տրուին :

ՅՈՒՌԻԱԾ 253

Նախընթաց տրամադրութեանց որ և է զանցառու-
թիւն՝ առժամանակեայ դադարմամբ կը պատժուի , և ե-
թէ կրկնամեղութիւն պատահի , որմնադրութենէ ջնջում
կրնայ վճռուիլ :



ԳԼՈՒԽ Բ.

ՄԻԱԿ ՀԱՏՈՒԱԾ

ՔԱՐՑՈՒՂԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՇ ԱՐԵՒԵԼԻՑ

ՅՕԴՈՒԱԾ 254

Մեծ վարպետը, Խորհրդին հետ համաձայնութեամբ՝ Քարտուղարութեան, Մատենագարանին և գրութեանց պահեստի դիւանին կազմութիւնն ու ստորոգելիքը կը կանոնաւորէ հրամանագրով, և ամեն պաշտօնեայները կանւանէ :

ՅՕԴՈՒԱԾ 255

Մեծ Արևելից ամեն պաշտօնեայ, քսան տարի ծառայելէ ետև հանգստեան թոշակ ։ ստանալու իրաւունք ունի, որ վերջին հինգ տարիներուն պաշտօնավարութեան միջոցին ստացած թոշակին միջին հաշուով կէսին հաւասար պիտի ըլլայ :

Մեծ Արևելք իրաւունք կը վերապահէ իրեն՝ հանգըստեան թոշակ չնորհելու այն ամեն պաշտօնէի, որ հիւանդութեան կամ տկարութեան պատճառաւ հանգստանալու հարկին մէջ գտնուի :

Այս պարագայիս մէջ հանգստեան թոշակն հետեւեալ կերպիւ կորոշուի.

Տասն տարի աշխատութենէ վերջը՝ մէկ քառորդ .

Տասնեհինգ տարի աշխատութենէ ետև, վերջին հինգ տարիներուն մէջ ստացած թոշակին միջին հաշուով երրորդը :

ՅՈՒՌԱԾ 256

Գաղղիոյ ՄԵծ Արևելից հասցէն է . Առ ՄԵծ Արևելս
գաղղիոյ , յօթևան իւր , Քատէ փողոց թիւ 16 ՚ի Փարիզ :

Այս հասցէով զրկուած նամակներն ու մետաղները
ճանբու ծախքէ աղատած պիտի ըլլան միշտ :

Թղթատարութեան միջոցաւ զրկուած փոխանակադ-
րերն և ուրիշ արժեքները Գաղղիոյ ՄԵծ Արևելից կամ ա-
նոր հրամանին վճարելի պիտի ըլլան :

Դրամոց յուղարկմունք ուղղակի Գաղղիոյ ՄԵծ Արե-
ւելից ուղղեալ պիտի ըլլան :

ՅՈՒՌԱԾ 257

ՄԵծ Արևելից անդամներէն միոյն վախճանած ժամա-
նակ , Քարտուղարութեան գլուխը՝ ՄԵծ Վարպետէն հը-
րաման ստանալէ ետև՝ յատուկ պաշտօն ունի Ե. Ռն հը-
րաւիրելու , որք գամբանական վերջին սպասը պիտի մա-
տուցանեն վախճանելոյն :

ՊՐԵԿԻ ԵՕԹԱՆԵՐՈՐԴԻ

ԵԼՄՑԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ

ԳԼՈՒԽ Ա.

ՄԻԱԿ ՀԱՑՈՒԱԾ

ԱՅԻ ԵՒ ԱՅԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆՔ ԳՈՐԾԱՐԱՆԱՑ ՄԵԶ

ՅՈՒՂՈՒԱԾ 258

Աղատ—Որմնադրութիւնն իւր ամեն անդամոց վրայ դրամական պարտականութիւններ գրած և բարեգործութիւններ ընելու կոչուած ըլլալով, Օթեակները բացարձակապէս պէտք է զգուշանան այնպիսի Օտարներ ընդունելէ, որք Ուխտին դրամական պարտականութիւնները կատարելու կարող չեն»

Գործարանք իրենց վարչութեան ծախքերը վարձիւք կը հոգան, որք միշտ կանխիկ պէտք է վճարուին. այն է.

1. Իւրաքանչիւր Գործարանի գործօն անդամոց տարեկան հանդանակութեամբ։

2. Իրենց արտօնութեան համեմատ շնորհած աստիճաններուն գնովք, որոյ նուազագոյն գինը հետևեալ կերպիւ որոշուած է.

Խորհրդական Առաջնորդ

Աշակերտի Աստ. Ին համար 50 ֆրանք

Սատարի " " " 20 "

Վարպետի " " " 30 "

Ժողովականութեան (Քարբի՛ջիւլէր) Աստ.՝ աց համար մինչեւ Ռոզ—Քուօայի Աստ.՝ փակառաբար 40 ֆրանք փիլիսոփայականն Աստ.՝ աց համար մինչեւ Քատ.՝ Ասպ.՝ փակառաբար 75 ֆրանք.

Վերին Աստ.՝ աց իւրաքանչիւրին համար 100 ֆրանք.

3. Նախընթաց թիւերուն մէջ չեն հասկցուիր երբէք վկայագրոց, կոնդակաց կամ արտօնագրոց ծախքերն, ինչպէս նաև Սահմանագրութեան և ընդհանուր կանոնագրութեանց օրինակներուն գինը, զորս 0թեակը պարտական է տալ ամեն նորընծայից:

Մակայն 0թեակները կրնան երեք խորհրդաւոր Աստ.՝ աց նուազագոյն գնոյն կէսովը ընդունիլ Լովթօններն ու զինուորականները—Այս վերջինները կրնան որդեգրութեան գնէն ազատ ըլլալ:

ՅՈՒՈՒԱԾ 259

Ամեն գործարան իրաւունք ունի իւր գանձային հասոյթը կարգադրելու և անոր գործածութիւնը տնօրինելու։ Սակայն հանգանակութեանց գումարին որոշումն այն կերպիւ պէտք է ըլլայ, որ կարենայ Որմնագրութեան մարդասիրական նպատակին օգնել, և Ռւխտին ընդհանուր վարչութեան ծախուց նպաստել։

ՅՈՒՈՒԱԾ 260


Իւրաքանչիւր գործարանի մէջ վճարուելիք տարեկան հանգանակութիւնը չեն կրնար 0թեակաց համար 18, Ժողովարանաց համար 10, և Խորհրդարանաց համար 10 ֆրանքէն պակաս ըլլալ։

Այս թիւերուն մէջ չեն կընար երբէք հասկցուիլ ոչ
Ուխտին տօներուն ծախքն և ոչ ներկայութեան համար
տրուած դրամները :

Դործարանք միշտ իրաւունք ունին վերն որոշուած
դումարները բարձրացնելու:

ՅՈՒՌԻԱԾ 261

Հանգանակութիւնք՝ ինչպէս նաև ուրիշ ամեն տուրք՝
կանխիկ պիտի վճարուին:



ԳԼՈՒԽ Բ.

ՄԻԱԿ ՀԱՏՈՒԱԾ

ՄԵՇ ԱՐԵՒԵԼԻՑ ՎՃԱՐԵԼԻՔ ՏՈՒՐՔ

ՅՈՒՌԻԱԾ 262

ՄԵծ Արևելից իրաւասութեան ներքեւ գտնուող ամեն
Գործ արանք, ինչ աստիճանէ և ըլլան, մշտնջենաւոր տա-
րեկան տուրք մը կը վճարեն ՄԵծ Արևելից:

Օթեակները միանգամայն առ ժամանակեայ տուրք մը
կը վճարեն՝ իրենց անդամոց թուոյն համեմատութեամբ:

Մշտնջենաւոր տուրքը տարին 400 ֆրանք է:

Առ ժամանակեայ հանգանակութիւնն, որ Գաղղիական
Որմնադրութեան համար և յանուն անոր գնուած տեղ-
ւոյն պատճառաւ ՄԵծ Արևելից ըրած պարտքն, և ասոր
հետեւանքն եղած և ըլլալիք ուրիշ ծախքերը վճարելու
սահմանեալ է, այսպէս որոշուած է.

1. 44 անդամէց պակաս 0թեակաց համար	75	Ֆր.
2. 44էն 70 անդամ ունեցող	"	120 "
3. 71էն 100	"	150 "
4. 101էն աւելին	"	200 "

(Սահմանադրութիւն յօդ. 22):

ՅՈՒՌԻԱԾ 263

Փարիզի և Մրջակայից Գործարաններն առկէ զատ ընդհանուր կանոնաց 218 յօդուածոյն տրամադրութեանց ենթակայ են:

ՅՈՒՌԻԱԾ 264

Գործարանաց առ Մեծ Արքեպիսկոպոս վճարած տուրքն իւրաքանչիւր Որմագրական տարւոյ համար ամբողջապէս կը հատուցուին և ոչ մասն մասն :

Որ և է Գործարան որ աշխատութիւնը դադրեցնել ուղէ, չկրնար կանոնաւորապէս դադրեցնել մինչև որ նոյն տարեկան շրջանին մէջ առ Ուխտին սնտուկին պարտած բոլոր տուրքն ամբողջապէս չվճարէ:

Որ և է Գործարան որ իր աշխատութիւնները վերսկսիլ ուղէ, պարտական է կանխաւ Ուխտին սնտուկին ամբողջապէս հատուցանել նոյն տարւոյն համար վճարելի բոլոր տուրքն :

ՅՈՒՌԻԱԾ 265

ՄԵծ Արքեպիսկոպոս վճարելի հանդանակութիւնք կանխիկ պէտք է վճարուին, և Գործարանք ալ իւրաքանչիւր Որմագրական տարւոյ մինչև մարտի սկիզբն անպատճառ

վճարած պէտք է ըլլան, ապա թէ ոչ՝ դադարման և հետեւաբար ջնջման կը դատապարտին ։

Գործարան մը, որ վերոյիշեալ պայմանաժամուն մէջ իւր պարտքը վճարած չըլլայ, Ուստին ժաղովին մէջ ինքնինք ներկայացնելու իրաւունք չկրնար ունենալ։

ԳԼՈՒԽ Գ.

ՄԵԾ ԱՐԵՒՏԵԼԻՑ ՀԱՇՈՒԽԵՆ ՍՏԱՑՈՒԱԾ ԱՅԼ-ԵՒ ԱՅԼ ՑՈՒՐՔ

ՀԱՑՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ԿԱՑՄՈՒԹԻՒՆՔ ԳՈՐԾԱՐԱՆԱՑ

ՅՈՒՌՈՒԱԾ 266

ՄԵծ Արեւելքէն ճանչուած այլ և այլ ծիսից իւրաքանչիւրին խորհրդաւոր կազմութեան համար 150 Ֆր.

ՄԵծ Արեւելքէն ճանչուած իւրաքանչիւր ծիսից ժողովական (քարիթիւլէր) նամակաց համար 81 "

ՀԵՐՈԶՈՄԻ ՍԿՈՎՏԵԱՆ ՄԷՍ (25 ԱՍԻՃԱՆ)

ՅՈՒՌՈՒԱԾ 267

Լիբանանու 22ըդ աստիճանի խորհրդոյ մը համար սահմանադրական արտօնադիր 33 Ֆր.

Նոյն՝ Արեւդական 23 ըդ աստիճանի ՄԵծ Ասպ.՝ խորհրդոյ համար 33 "

Գոռմար 66 "

Նոյն Քատ.	24րդ աստիճանի Խորհրդոյ	33 Ֆլ.
Համար		

Համագումար	99 "
-------------------	------

**ՍԿՈՎՏԵԱՆ ՀԻՆ ԵՒ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ՄԵՍ
(33 ԱՍՏԻՃԱՆ)**

80ԴՈՒԱԾ 268

Ստհմանադրական արտօնագիր 22րդ աս-	33 Ֆլ.
տիճանի Խորհրդոյ մը Համար	33 "
Նոյն 27րդ աստիճանի Խորհրդոյ մը Համար	33 "
Նոյն 30րդ Աստ. Քատ.ի Համար	33 "

Համագումար	99 "
-------------------	------

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՏԱԽԵԼՈՒՄՆ ՄԻՄՏ

80ԴՈՒԱԾ 269

Խորհրդաւոր Օթեակի մը Համար առանց	75 Ֆլ.
մագաղաթի	40 "
Ժողովարանի մը Համար՝ առանց մագաղաթի	48 "
Մէն մի մագաղաթի Համար	

ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

ԳՈԽԱՆՈՐՈՒԹԵՒՆՔ

80ԴՈՒԱԾ 270

Եիսից Մեծ ժողովին շնորհեալ Փա.՝ 8ը	40 Ֆլ.
Արք.՝ Արք.՝ մէն մի փոխանորդութեան Համար	

Եիսից Մեծ ժողովէն շնորհեալ Քատ.	Ասպ.	
թեան մէն մի փոխանորդութեան համար		50 Ֆլ.
Ուօզ—Քռ. յի մէն մի փոխանորդութեան համար		40 "

ԳԼՈՒԽ Դ.

ՄԻԱԿ ՀԱՑՈՒԱԾ

ՈՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՏԻՑՈՍԱԳՐԱՅ ԳԻՒՆԵՐԸ

60ԴՈՒԱԾ 271

ՄԵծ Արևելից տուած տիտղոսագրաց գիներն այսպէս
որոշուած են.

Վկայագիր Վարպետի	7 Ֆլ.
Կոնդակ Ուօզ—Քռ. յի	7 "
Արտօնագիր Քատ.	15 "
Արտօնագիր բարձրագոյն Աստ.	20 "

Գործարանք՝ մէն մի տիտղոսընկալներէն 3 ֆրանք ալ
իրենց աղքատաց սնառուկին համար կ'ստանան ՄԵծ Արե-
ւելից ստացած գնոյն վրայ։



ԳԼՈՒԽՆ Ե:

ԱՅԻՍ ՀԱՅՈՒԹԵՆ ՀԱՄԱՐ ՄԵՇ ԱՐԵՒՆԵԼԻՑ ՀԱՏԱՔԱՆ
ՏՈՒՐՔԵՐԸ.

ՀԱՏՈՒԱՆ ԱՌԱՋԻՆ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՒԹԵՆ ՀԱՄԱՐ
ՄԵՇ ԱՐԵՒՆԵԼԻՑ ՀԱՏԱՔԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ

ՅՕԴՈՒԱՆ 272

ՄԵծ Արևելք՝ 252 յօդուածին համեմատ ստացած
առժամանակեայ հանդանակութեանց գումարին հարիւ-
րին 90ը ամսէ ամիս բաղաքային ընկերութեան սնտուկին
կուտայ :

ՀԱՏՈՒԱՆ ԵՐԿՐՈՐԴ

ՕԴՆՈՒԹԵԱՆ ՑԱՆ ՀԱՅՈՒԹԵՆ ՀԱՄԱՐ ՄԵՇ ԱՐԵՒՆԵԼԻՑ
ՀԱՏԱՔԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ

ՅՕԴՈՒԱՆ 273

ՄԵծ Արևելք՝ Օդնութեան ջան հաշուոյն առնելեաց
կողմը կանցընէ .

1. **ՄԵծ Արևելքց** տուած տիտղոսագրաց գնոյն կէսը .
2. **Առժամանակեայ հանդանակութեանց** հարիւրին 10.

Պատմակ Արքան
 Ալպոյանիան
 Զահիրէ — Մարտին

3. Արևելից և Եփսից մեծ ժողովին բարեգործութեան գանձանակներուն արդիւնքը .

4. Փարիզի և շրջակայից գործարաններուն բարեգործութեան գանձանակին կէսը (Յօդ. 218) .

5. Պատուց վկայագրաց իւրաքանչիւրին վաւերացման հպմար առնուած 2 ֆրանքը (Յօդ. 249) .

ՓՈՓՈԽԵԱԼ ՑՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՅԱԽԵԼՈՒԱԾՔ

ՕՐԻՆԱՑ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԱՑ

Յօդ. 16, 17, 42, 74, 167, 199, 209, 214, 226, 227, 254. «Մեծ Վարպետութին տեղ Արքային Խորհուրդութեած է .

Յօդ. 111, 148, 168, 177, 180, 182, 229, 240, 248, 257. «Մեծ Վարպետութին տեղ Արքային Խորհրդոյն նախադահութեած է .

Յօդ. 122. Հետևեալ տրամադրութիւններն աւելցած են.

«Յայնկոյս ծովու և օտար երկիրներու Օթեակները կրնան ներածութեան ձեռնարկելառանց Մեծ Արևելից հրամանին հրամանին սպասելու . բայց պարտաւոր են առաջարկեալ Օտարաց՝ ինչպէս նաև մերժելոց անունը Մեծ Արևելից ծանուցանել .

«Ուրիշ Օթեակէ մը մերժուած օտար մը ընդունելէ առաջ պէտք է Մեծ Արևելքէն տեղեկութիւն ինդընել անող մերժման պատճառներուն վրայ , և պատասխան ըստանալ :

« Այս տրամադրութեանց հակառակ կատարուած ներածութիւնն ոչինչ և չեղեալ կը համարուի »

Յօդ . 136 . Հետեւեալ կերպիւ փոփոխուած է .

« Ամեն հրաժարեալ Ե . պարտաւոր է առ գործարանըն ունեցած պարտքը վճարել . Եթէ չուղէ վճարել , հրաժարականը չընդունուիր , և դատաստանական կանոնաց հրդ յօդուածին տրամադրութիւնն 'ի գործ կը դրուի անոր դէմ » ,

Յօդ . 144 . Հետեւեալ կերպիւ փոփոխուած է .

« Զորս բաժակ կայ պարտաւորեալ .

1. Գաղղիոյ Մեծ Արևելից , Թղթակից Գործարանաց և օտար Մեծ Արևելից համար .

2. Գործարանի Նախադահին համար .

3. Գէտերուն , Սպայից , Որդեգրեալ Գործարանաց և Այցելու Ե . ըց համար .

4. Երկու կիսագնաոց մէջ գտնուած ամեն Որմնադրաց համար *

« Այս վերջին բաժակին ժամանակ Գործարանը միութեան շղթայ կը կազմէ , և սպասաւոր Ե . ըն ալ միշտ կը մասնակցի » *

Յօդ . 145 . Հետեւեալ կերպիւ փոփոխուած է .

« Ամեն բաժակները նախադահը կառաջարկէ , 'ի բաց առեալ երկրորդը , զոր երկու Դէտ Ե . ըք և Ատենախօս Ե . կառաջարկեն :

« Երրորդը Դործարանին անդամներէն գո՞նէ վարպետի աստիճան ունեցող ոչ—պաշտօնաաար երկու անդամք կը կրկնեն , զորո նախադահը կը նշանակէ »

« Այս բաժակներն ստքի վրայ և կարգաւ կառաջարկուին և իւրաքանչիւրն երրակի բաղիսմամբ կաւարտիւ »

Յօդ . 166 . Սոյն յօդուածին ներքեն թահմանադրութեան 8 և 20 յօդուածոց յիշատակութիւնը վերցած է :

Յօդ . 170. Առաջանագրութեան 37 և 38 յօդուածոց
յիշատակութեան տեղ՝ 34 , 35 և 36 յօդուածոց յիշա-
տակութիւնը դրուած է :

Յօդ . 184 , 190 և 192. Մեծ վարպետն և երկու օ-
ժանդակները վերցած են :

Յօդ . 203. Հին կանոնաց 270 և յաջորդ յօդուածոց
յիշատակութեան տեղ՝ գատաստանական տրամադրու-
թեանց 5 և հետևեալ յօդուածոց յիշատակութիւնը դըր-
ւած է :

Յօդ . 207. Վերջին պարբերութիւնն հետևեալ կեր-
պիւ փոխուած է .

« Յանձնաժողովն իւր աշխատութիւնն Ուխտին Խոր-
հըրդոյն պիտի ներկայացնէ ամեն տարի յուղիս 1 էն մին-
չև 15 : »

Յօդ . 240. Մեծ վարպետին տեղ Մեծ Արեւելից ընդ-
հանուր ժողովոյն նախագահը դրուած է :

Յօդ . 241. Մեծ վարպետի օժանդակներուն տեղ
Փոխ—Նախագահները դրուած են :

Յօդ . 242 և 243 խափանեալ են .

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ
ՀԱՍՏԱՑԵԱԾ ՅԵՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐԸ 1868 ԱՄՒ

ԳԼՈՒԽ Ա.

ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԱՐԱՆԱՑ

ՀԱՏՈՒԱՆ ԱՌԱՋԻՆ

ՆԵՐՔԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԴԵՄ ԿԱՆՈՆԱՁԱՆՑՈՒԹԻՒՆՔ
ԵԽ ԱՆՈՆՑ ՊԱՑԻՖԻՆԵՐԸ

ՅՈՒՈՒԱՆ 1

Գործարանք ներքին կարգապահութեան և Որմնադրական իրաւասութեան իրաւունք ունին :

ՅՈՒՈՒԱՆ 2

Գործարանք գերիշխանաբար և վերջնաբար կը դատենց ներքին բարեկարգութեան դէմ գործուած կանոնազանցութիւնները : Այս կարգէն են ընդմիջմունք, խօսակցութիւնք, անհրաման տեղափոխութիւնք, մեծաձայն ցոյցեր, սպայից պաշտօնավարութեան միջոցին անոնց անհնաղանդութիւն, անվայել բանք, վիրաւորիչ խօսք, և առհասարակ դործարանին մէջ պատշաճից կամ բարեկարգութեան դէմ որ և է գործք :

ՅՈՒՂԻԱՆ 3

գործարանի մը ներքին բարեկարգութեան գէմգոր-
ծուած կանոնազանցութեանց պատիժներն են .

1. Պարզ ’ի կարգ հրաւիրում՝ առանց առենագրու-
թեան մէջ արձանագրութեան .

2. Ի կարգ հրաւիրում հանդերձ արձանագրութեամբ .

3. Յանդիմանութիւն առանց տուգանաց , բայց միշտ
արձանագրութեամբ :

Առաջին երկու պատիժները Նախագահը կուտայ առանց
գործարանին հարցնելու :

Տուգանքով կամ առանց տուգանաց յանդիմանութեան
պատիժը գործարանին հարցունելով կը տնօրինէ Նախա-
գահն , և կանոնազանց Ե.՝ ը տաճարը կը փակէ :

Երբոր գործարանն որոշէ որ յանդիմանութիւն պէտք
է , կանոնազանց Ե.՝ ը պէտք է երկու սիւներուն մէջ
կանդնի և Նախագահին եղբայրական դիտողութիւններն
ընդունի :

Երբողութեանց յիշատակութիւնն անպատճառ պիտի
անցնի ատենագրութեան մէջ :

Առաջին կանոնազանցութեան մը համար տուգանքը
չկընար հինգ ֆրանքն անցնիլ . բայց իւրաքանչիւր կը կ-
նամեզութեան համար յառաջդիմաբար կընայ աւելնալ ,
առանց երբէք 20 ֆրանքն անցնելու :

Տուգանքը գործարանին աղքատաց գանձանակին պէտք
է յանձնուի :

Եթէ Ե.՝ մը Նախագահին տնօրինած պատիժը չուզէ
ընդունիլ , գործարանին մէջ չընդունուիր մինչեւ որ յանձն
առնու . ասկէց զատ նոյն Ե.՝ ը կընայ դատաստանի են-
թարկել երբև առաջին կարգի յանցաւոր ,

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴԻ

ԱԼԱՑՈՒՄՆ ՎՃԱՐՄԱՆ

ՅՈՒՈՒԱԾ 4

Վճարման զլացումը կամ պակասութիւնն հետևեալ կերպիւ կը հաստատուի .

Հանգանակութեանց կամ այլ պարտականութեանց երեք ամիս անվճար մեալէն ետև , Գործարանին Նախագահ հը Գանձապահ ե.։ ձեռօք և միամսեայ միջոցաւ երկու հրաւեր կուղղէ վճարումն յապաղող ե.։օր, որպէս զի սընտուկին ունեցած պարտքը վճարէ , և զլանալուն հետեւանքը կը յիշեցնէ :

Եթէ յիշեալ ե.։ն երկրորդ հրաւերէն ետքն ալ լըստիւն պահէ կամ վճարումը դարձեալ զլանայ , Կանձապահ ե.։ը մինչև մէկ ամիս կը աեղեկագրէ Գործարանին :

Այն տեղեկագրին ընթերցումէն ետև Նախագահը բարձր ձայնիւ կը հարցնէ թէ վճարումն յապաղող ե.։օր երաշխաւոր ըլլալ ուղող ե.։ մը կայ Գործարանին մէջ , որ անոր տեղը վճարելու խօսք տայ . Եթէ այս հրաւերն անուատասխանի մնայ , Ատենախօս ե.։ը կառաջարկէ՝ նոյն նստին մէջ՝ պարտազանց եղբօր անունը ջնջել գործօն անդամոց ցանկէն , հետեւաբար յիշեալ ե.։ը կը զրկուի Որմանադրական գործօնէութեան իրաւունքներէն :

Այս ջնջումը մինչև մէկ ամիս պէտք է ծանուցուի Մեծ Արևելյաց :

Վճարազանցութեան պատճառաւ ցանկէն ջնջուած ե.։

մը կրնայ միշտ Գործարանին հաճութեամբ վերահաստատիլ նոյն Գործարանի ցանկին մէջ՝ ամբողջապէս իւր պարտքը վճարելով։

Այս վերահաստատութիւնն ալ պէտք է ծանուցուի Արեգ Արևելից։

ՀԱՑՈՒԱԾ ԵՐՐՈՐԴԻ

ՈՐՄԱՆԴՐԱԿԱՆ ՅԱՆՅԱՆՔ ՆԻ ԱՆՈՒՅ ՊԱՏԻԺՆԵՐԸ

1. ԹԱՆՑԱՆՔ

ՅՈՒԽԱԾ 5

Յանցանքն երկու կարգ է։

Առաջին կարգ էն են անժուժկալութիւն, անպարկեշտ կամ կոչտ խօսքեր բարձրաձայն արտասաներալ, որմնադրական ըմբռոտութիւն ծանր պարագաներով։ 2. յօդուածին մէջ նշանակեալ կանոնազանցութեանց յաճախ կըրկնութիւն, հրապարակաւ Որմնադրական նշաններ կըրել։

Երկրորդ կարգ էն են այն յանցանքներն՝ որ Որմնադիրըն ու Որմնադրութիւնը նուաստացնելու կը ծառայեն, ինչպէս են Որմնադրական երդմնադրժութիւն, ծածուկ աստիճանատութութիւնք և աստիճանաց շահավաճառ, այլց համբաւին կամ ընչից կամնաւոր մնարաբերութիւն, վերջապէս այն ամեն բան որ ընկերական կարգին մէջ ամօթալի կը համարուին։

2. ՊԱՏԻԺՐ

ՅՈՒՌԻԱԾ 6

Առաջին կարգի յանցանքները կը պատժուին Որմնադրական իրաւանց և պաշտամանց առժամանակեայ դադարմամբ, որ մէկ ամսէն պակաս և հինգ տարիէն աւելի չը կրնար տեսել.

ՅՈՒՌԻԱԾ 7

Երկրորդ կարգի յանցանքները կը պատժուին Որմնադրական իրաւանց կողստեամբ և 'ի պատ արտաքսմամբ.

ՅՈՒՌԻԱԾ 8

Յանցանաց համար սահմանուած Որմնադրական պատիմները ներկայ կանոնաց տրամադրած ձևերուն համեմտատ տրուած վճռով մը միայն կրնան գործադրիլ.

ՀԱՑՈՒԱԾ ԶՈՐՈՈՐԴ

ՈՐՄՆԱԴՐԱԿԱՆ ՅԱՆՑԱՆԱՑ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ ԴՈՐՄԱՐԱՆԱՑ ՄԵԶ

ՅՈՒՌԻԱԾ 9

Յանցանքները քննութիւն և դատաստան կը պահանջեն.

ՅՈՒՌԻԱԾ 10

Գործարանի մ'որ և է անդամ կրնայ դատախազ կանգ.

նիշ նոյն գործարանին որ և է մի անդամին դէմ։ Գանդատը կամ ամբաստանութիւնն առաջարկութեանց պարկին մէջ պէտք է ձգուի։ Գանդատող կամ ամբաստանեալ ե., ըստ անունները չեն յայտնուիր Նախադահէն։

Այն գործօն օրմնադիր կրնայ դանդատիլ օրմնադրի մը գէմ՝ նորա մասնակցած Գործարանին առջեւ։

Որմնադիր մը, որոյ վկայագրերը կանոնաւոր են, բայց գործօն ըլլալէ գաղդրած է, օրմնադրական յանցանք մը գործած ժամանակ կրնայ դատաստանի ենթարկիլ յանցանքը գործուած Արևելից Օթեակին առջեւ, երբոր նոյն Գործարանին երեք կանոնաւոր անդամներն ամբաստան կանգնին։

Եթէ այն Արևելքը քանի մ'օթեակներ ունենայ, իրաւասութիւնն այն առաջին Գործարանին կլինայ, օրուն ներկայացած է գանդատը կամ բողոքը։

Եթէ յանցանքը գործուած Արևելից մէջ Օթեակ չը դտնուի, մօտաւոր Օթեակի մ'առջեւ կըտեսնուի դատաստանը։

Քննութիւնն ու դատաստանը սովորական ձեւրով կըլլան։

Որ և է անստորագիր կամ կեղծանուն գանդատ՝ անմիջապէս կայրի երկու սիւներուն մէջ տեղն առանց կարդացուելու։

ՅՈՒՌԱԾԱՎ 41

Երբոր ամբաստանեալը նոյն իսկ Գործարանին Նախադահն է, ամբաստանութիւնը Գործարանին հինգ անդամներէն ստորագրեալ պէտք է ըլլայ։ և կնքուելէ ետեւ, անոնցմէ միոյն ձեռօք առաջին Դէտին, կամ եթէ նա չը դտնուի՝ երկրորդ գէտին, և եթէ երկուքն ալ չդտնուին՝

առաջին Մարդիքին կը յանձնուի, որ սպարտական է ընդունիլ:

ՅՈՒՌԻԱԾ 12

Եթէ ամբաստանութիւնը կամ գանգատը կանոնաւոր է, Նախագահը կամ Գործարանին սպաներէն մինչ նուիրապետական կարգաւ՝ հինգ առաջին սպաներէն՝ կամ անոնց չգտնուած ժամանակ կարգաւ անոնցմէ ետև եկող սպաներէն արտաքոյ կարգի ժողով կը գումարէ գաղտնի և յատուկ քննիչ մասնախորհուրդ մը կազմելու համար։

Եթէ ամբաստանութիւնը Նախագահին վրայ է, զայն ընդունող Ե.՝ ն՝ հինգ առաջին սպայից հետ մասնախորհուրդ կազմելու համար Գործարանին երկու ամենէն հին և գործօն անդամներն ՚ի խորհուրդ պէտք է հրաւիրէ։

Մասնաժողովը չկընար որոշում ընել մինչև որ առաջին պարագային մէջ առնուազն երեք անդամ, երկրորդին մէջ ալ հինգ անդամներկայ չգտնուին։

Ամբաստանութիւնը մասնաժողովոյ նախագահող Սպային կը յանձնուի, որ ստացագիր մը կուտայ։

ՅՈՒՌԻԱԾ 13

Յատուկ մասնախորհուրդը՝ գանգատագիրն ստացող Ե.՝ նախագահութեամբ պէտք է գաղտնաբար գործը քըննէ, գանգատաող Ե.՝ ը հրաւիրէ, ամբաստանութեան ապացոյցները պահանջէ, ամբաստանելցյն պաշտպանողական փաստերն առտնձնաբար լոէ, և ամբաստանութեան գոյութեանն ու ծանրութեան վրայ բարոյական համոզում մը կազմէ։

ՅՈՒՌԻԱԾ 14

Եթէ գանդատն յատուկ մասնախորհրդոյ կողմէն հիմնաւոր դատուելէ առաջետ առնուի, քննութեան թուղթերը կը չնշուին .

Եթէ յատուկ մասնախորհուրդը ձայնից առաւելութեամբ գանդատն անհիմն գտնէ, կոչնչացնէ զայն . իսկ եթէ զրպարտական գտնէ, Գործարանն յետագայ նստի մը մէջ քննութեան թուղթերը կարդալով կրնայ ամբաստանող Ե. ը դատաստանի ենթարկելը և 5 յօդուածին նախատեսած յանցանաց վերաբերեալ պատիժներէն մին դործագրել ըստ պարագային .

ՅՈՒՌԻԱԾ 15

Եթէ յատուկ մասնախորհուրդը գանդատն հիմնաւոր դատի, տեղեկաբեր մը կանուանէ, ամբաստանագիր մը կը խմբագրէ, զոր իւր նախագահը Գործարանին Նախագահին կուղղէ՝ դործին վերաբերեալ ամեն թղթոց հետ .

Ամբաստանագիրը պէտք է յանցանքին ո՛ր կարգի վերաբերին ալյիշատակէ .

Այն վայրկենէն որ գանդատն հիմնաւոր դատուի, ամբաստանեալ Ե. ն առժամանակեայ կերպիւ կը դադրի Որմագրական իրաւունքներէ ու պաշտօններէ . բայց այս առժամանակեայ դադարումը չկրնարերկու ամսէն աւելի տևել՝ ամբաստանութեան հիմնաւոր դատուած օրէն ըսկըսեալ .

Այսպիսի դատաստան մ'սկսելէ ետև չկրնար ամբաստանեալ Ե. հրաժարմամբը դադրիլ . Հրաժարականն ընդունուելէ ետև իսկ դատաստանը կանոնաւորապէս պի-

տի. շարունակի և վճիռը տրուի, թէ՛ ամբաստանելցյն ներ, կայութեան և թէ՛ ՚ի բացակայութեան, որպէս թէ հը- րաժարած չըլլար .

ՀԱՏՈՒԱԾ ՀԻՆԴԵՐՈՐԴ.

ԴԱՏԱՍՏԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ՄԷՋ

ՅՕԴՈՒԱԾ 16

ԵՐԲՈՐ Գործարանին նախագահն իւր անդամոց մէկուն դէմյատուկ մասնախորհուրդն ընդունուած ամբաստա- նութիւն մ'և զայն հաստատող թուղթերն ստանայ, իս- կոյն կազդարարէ ամբաստանեալ Ե՞՛. թէ առ առաւելն մինչև երեսուն երեք օր Գործարանը պիտի գումարուի իւր պաշտպանողական փաստերը լսելու և եղած ամբաս- տանութեանց վրայ դատավճիռը տալու, հետեւաբար կը հրաւիրէ նոյն նստին անձամբ ներկայանալ, կամ իւր կող- մէ կանոնաւոր Որմնագիր մը փոխանորդ կարգել յատուկ իշխանութեամբ :

Կը յայտնէ անոր թէ, երբոր ինքը կամ փոխանորդը չներկայանան, Տաճարին գաւթին մէջ երեք անդամյան- ւանէ բարձրաձայն կոչուելէ ետե՛ ՚ի պաշտօնէ փոխա- նորդ մը կը կարգուի իրեն :

Երբոր ամբաստանութիւնը Գործարանին նախագահին դէմըլլայ, առաջին կամ երկրորդ Դէտը, կամ անօնց բա- ցակայութեան կամ բանաւոր պատճառաւաւ արդիլման ժա- մանակ՝ առաջին Մարզիչը կընդունի ամբաստանութեան թուղթերն յատուկ մասնախորհուրդն, և վերոյգըրեալ

արամագըութիւնները կը գործադրէ նախագահին նկատ-
մամբ .

ՅՈՒՂԻԱԾ 17

Գործարանին կանոնաւոր գումարման համար որոշեալ
օրն եթէ ամբաստանեալ Ե. Ռ կամ փոխանորդը չներկա-
յանան, և եթէ Ե. Ռ մ'ինքնակամ չներկայանայ արդարա-
ցուցման փաստեր յառաջ դնելու, բուէից առաւելու-
թեամբ՝ 'ի պաշտօնէ փոխանորդ մը կորոշուի, և բոլոր
թեր ու գէմ թղթերն անոր կը յանձնուին .

Եթէ պաշտօնապէս որոշուած փոխանորդն յայտնէ թէ
անմիջապէս պաշտպանութիւն ընելու վիճակի մէջ չէ, առ-
առաւելն տասնեհինդ օր պայմանաժամ կը չնորհուի իրեն .

Նոյն նօտին մէջ, եթէ ամբաստանեալ Ե. Ռ կամ փո-
խանորդը ներկայ գտնուի, կամ յաջորդ նստին մէջ՝ եր-
բոր խնդրէ, գործին քննութիւնը կ'սկսի . Անձնական կամ
'ի պաշտօնէ՝ պաշտպանութիւնը լսուելէ ետև, երբոր Գոր-
ծարանն ըստ բաւականի լուսաւորուած ըլլալը յայտնէ,
ամբաստանեալ Ե. Ռ, փոխանորդն և 'ի պաշտօնէ պաշտ-
պանը Ցանարը կը փակեն .

ՅՈՒՂԻԱԾ 18

Որոշումն յատենի գործարանին կը տրուի .

Նախագահը՝ որոշման ժամանակ Ցանարը փակել կու-
տայ պյցելու Ե. Ռ .

Ամբաստանագիրն ստորագրող Ե. Ռ ալ իմաց կը
տրուի թէ չեն կրնար վճռատուութեան ներկայ գտնուիլ,
և անոնք ալ Ցանարը կը փակեն .

Նախագահն հետզհետէ հետեւեալ հարցումները քը-
ւէի կը դնէ .

1. Ե. Ն ու ՈՒ ՖԻ-ՇՐԵԿԻ-Ն Յ-ՆԵՐ-ՆԵՐ-Հ Տ-ՄԻ-ՌԵ-ՌԵ-ՆԵ-Լ
Ե , Յ-ՆԵ-ՐԵ-ՆԵՐ-Հ :

2. Յ-ՆԵ-ՆԵՐ-Հ Դ-Շ Կ-ՇԵ-Ք-Ե-Ց-Ե-Ց :

Այս երկու պարագայից մէջ Ատենախօսն եղբակացութիւն չտար .

ՅՈՒՈՒԱԾ 19

Առաջին հարցումը ձայնից առաւելութեամբ կորոշուի .
երբոր ձայները հաւասար բաժնուին , ամբաստանեալն անպարտ կը յայտարարի , և Ցանարէն ներս կոչուելով իւր Որմնադրական իրաւանց մէջ կը վերահաստատի .

Եթէ յանցաւորութիւնը վճռուի , Գործարաններկրորդ հարցման վրայ որոշում կուտայ տոմսակեայ քուէով , որոյ վրայ ո--ջէն հ-ը կամ ն-է հ-ը է գրուած է .

Եթէ քուէից մեծագոյն մասն երկրորդ կարգին համար է , Ատենախօս Ե. 7 յօդուածը կը կարգայ , և Նախագահն յիշեալ յօդուածին տրամադրած պատիմը կը գործադրէ յանցաւորին վրայ .

Եթէ քուէարկութիւնն երկրորդ կարգին համար մեծամասնութիւն չտայ , յանցանքն առաջին կարգը կը դասի , և Ատենախօս Ե. 6 յօդուածը կը կարգայ , յորմէ յետայ Գործարանը գրաւոր քուէով և ձայնից առաւելութեամբ կը վճռէ յանցաւոր եղբօր Որմնադրական իրաւունքէ և պաշտօնէ արդիւելուն տեսողութիւնն ըստ տըրամադրութեան 6 յօդուածին :

ՅՈՒՈՒԱԾ 20

Ամեն դատավճիռ մինչև 10 օր պիտի հաղորդուի դատապարտեալ Ե. , նա ալ ամիս մը պայմանաժամ պիտի

ունենայ Գաղղիոյ համար , երեք ամիս Ալժէրիի և օտար երկիրներու համար , վեց ամիս յայնկոյս ծովու երկիրներու համար , դատավճռոյն հաղորդման թուականէն ըսկըսեալ , որպէս զի Արդարութեան և կոչման ատենին բոլոքէ :

Ամեն դատական բողոք ուղղակի Գաղղիոյ Մեծ Արևելից կուղղուի Փարիզ , Քատէ փողոց 16 :

Գործարանն ալ պէտք է անպատճառ մինչև մէկ ամիս իւր դատավճռին պատճէնը Մեծ Արևելից յուղարկէ :

ՀԱՏՈՒԱԾ ՎԵՑԵՐՈՐԴԻ

ԲՈՂՈՔՈՅ ԽՐԱՏՈՒՆՔ

ՅՈՒՌՈՒԱԾ 21

Գործարանաց տուած վճռոց գէմ' բողոքելու իրաւունք կայ միշտ , ՚ի բաց առեալ ներքին բարեկարգութեան վերաբերեալ պարզ կանոնազանցութեանց առթիւ տրուած վճիռներն :

ՅՈՒՌՈՒԱԾ 22

Բողոքոյ յայտարարութիւնն որ և է որոշմանց գործադրութիւնը կը դադրեցնէ իրաւամք . բայց դատապարաեալ եւ ։ ն Որմնադրական իրաւունքներէ և պաշտօններէ արգիւեալ կը մնայ մինչև որ իւր բողոքը քննուելով պէտեղած վճիռը տրուի :

ՅՈՒՌՈՒԱԾ 23

Ատենախօսն ալ իրաւունք ունի բողոքելու , բայց մի-

այն այն պարագային մէջ՝ ուր տրուած վճիռը կամ գործին քննութիւնն Ուխտին կանոնադրութեանց հակառակ բան մը պարունակէ ։

Բողոքոյ պայմանաժամերը նոյն են ինչ որ 20 յօդուածին առաջին պարբերութեան մէջ որոշուած են։ Այն պայմանաժամը լրանալէ ետև որոշումը վերջնական և գործադրելի է։

Բողոքները Մեծ Վարպետին կողմէ Ուխտին Խորհըրդադյն կը յանձնուին։

ՅՕԴՈՒԱԾ 24

Որոշման մը գէմբողոք եղած ժամանակ, գործարանը պարտաւոր է իւր որոշման հետ և գործին վերաբերեալբոր թուղթերը Մեծ Արևելից հաղորդել։



ԳԼՈՒԽ Բ.

ԲՈՂՈՔՈՅ ԴԱՑԱՍՏԱՆ

ՀԱՑՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՅՕԴՈՒԱԾ 25

Բողոքոյ իրաւասութիւնը Դաղղիոյ բոլոր Օթեակաց երեսփոխանները կը գործածեն։

Այս նպատակու մէն մի Օթեակ ամեն տարի երեսփոխան մը կանուանէ։

Այս անուանումը գործարանին եօթն առաջին Սպայից ընտրութեան ժամանակ և նոյն ձեռվ կը կատարուի։

Գործարանը միանդամայն տեղապահ մը կանուանէ,

որ երեսփոխանին արդելք ունեցած ժամանակ նորա պաշտօնը կատարէ :

Այսպէս ընտրեալ փոխանորդաց անունները ՄեծԱրևելից կը հաղորդուին :

ՅՕԴՈՒԱԾ 26

ԵՐԲՈՐ ՄԵծ Արևելք բողոք մ'ընդունի , բողոքոյ ենթակայ եղող ջործարանին ամենէն մօտ գտնուող Օթեակաց տասնեմէկ երեսփոխաններն 'ի ժողով կը գումարէ :

ՅՕԴՈՒԱԾ 27

Բողոքոյ ատենին գումարուելիք Արևելքը կորոշէ :

ՅՕԴՈՒԱԾ 28

Երբոր այն Արևելքն՝ որոյ մէջ տրուած է բողոքոյ ենթարկեալ վճիռը , քանի մ'Օթեակ գումարէ , բողոքոյ ատեանը պէտք է որ ամենէն մօտ գտնուող Արևելից Օթեակներուն մէջէն առաւելագոյն թուով երեսփոխաններէ բաղկանայ :

Ցիշեալ Արևելքին Օթեակներուն տուած միւս երեսփոխանները վիճակարկութեամբ պէտք է նշանակուին :

Երբոր բողոքը Սէնի գաւառին , Ալմէրիի , Գաղթականութեանց և օտար երկիրներու Օթեակներէն մէկուն տուած որոշման դէմքը ըլլայ , Բողոքոյ ատեանը Սէնի գաւառին Օթեակներուն տասնեմէկ երեսփոխաններէն կը բաղկանայ , որք վիճակաւ կը նշանակուին :

ՅՕԴՈՒԱԾ 29

Բողոքոյ ենթակայ եղող Օթեակին անդամները չեն կրնար Բողոքոյ ատենին անդամակցիլ .

ՀՍՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴԻ

ՅՕԴՈՒԽԾ 30

Ամենէն հին Օթեակին երեսփոխանը Բողոքոյ ատենին
առժամանակեայ նախագահ կըլլայ և գործին վերաբեր-
եալ թուղթերը Մեծ Արևելքէն կընդունի :

ՅՕԴՈՒԱԾ 31

Բողոքոյ ատենին նիստերն Որ Թագրական ձեւով կը
գումարին եւ հրապարակային են :

Ներկայ գտնուող անդամոց թիւն եօթնէն պակաս չը
կրնար ըլլաւ :

ՅՕԴՈՒԱԾ 32

Բողոքոյ ատենին անդամները կանուանեն իրենց սպա-
ները :

ՅՕԴՈՒԱԾ 33

Առժամանակեայ նախագահ եղող Ե. Ռ տեղեկաբեր
է . Մեծ Արեւելից յղման թուղթն եւ բողոքոյ ենթակայ
եղած վճիռը կը կարդայ եւ գործն համառօտիւ կը բա-
ցատրէ :

ՅՕԴՈՒԱԾ 34

Քննութիւնը նստին մէջ կըլլայ . Ատեանն հետզհետէ
ամբաստանելոյն վկայներն ու պաշտպանողական փաստերը
կը լսէ :

Ատենախօսն եղբակացութիւն չտար , այլ միայն Որմ-
նագրական օրինաց գործադրութեանը կը հսկէ :

ՅՈՒՌԻԱԾ 35

Վիճաբանութեանց փակուելէն ետև , Ատեանը կ'առանձնանայ տալիք վճռոյն վրայ խորհելու . վճիռը հրապարակաւ կարտասանէ հանդերձ պատճառաբանութեամբ և ձայնից առաւելութեամբ . Եթէ ձայներն հաւասարգան՝ անպարտութեան վճիռ կը տրուի .

ՅՈՒՌԻԱԾ 36

Բողոքոյ Ատենին վճիռն Ուխտին Մեծ Վարպետին կողմէ կը ծանուցուի .

ՀԱՏՈՒԱՆ ԵՐՐՈՐԴ

ՅՈՒՌԻԱԾ 37


Երեսփոխան մը՝ որ իւր պաշտօնը կատարելու անհընարութեան մէջ գտնուի , գումարման նամակն ստանալէն մինչեւ ութ օր պէտք է ծանուցանէ առժամանակեայնախագահին .

ՅՈՒՌԻԱԾ 38

Երեսփոխան չունեցող Օթեակն՝ ինչպէս նաև առանցքանաւոր պատճառի Բողոքոյ ատենին ներկայ չգտնուող երեսփոխանն 50 ֆրանք տուգանք կը վճարեն՝ ներկայացեալ Օթեակաց աղքատաց գանձանակներուն :

ՅՈՒՌԻԱԾ 39

Ամեն Օթեակ իւր երեսփոխանին ճանբու ծախքը վրճարելու պարտական է .



ՅԱՆԿ ՆԻՒԹՈՑ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՊՐԱԿ ԱԽՈՇԶԻՆ

Ազատ սրմադրութիւն և իւր սկզբունքը

ԵՐԵՒ

ՊՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Որմադիրք և Որմադրական ընկերութիւնք

3

ԳԼՈՒԽ Բ.

Զանագան Ծէսք

7

ՊՐԱԿ ԵՐՐՈՐԴ

Որմադրական իշխանութիւնք

8

ԳԼՈՒԽ Ա.

ՄԵծ Արևելք Գանղղիոյ

8

ԳԼՈՒԽ Բ.

ՄԵծ Վարպետ

9

Ուխտին Խորհուրդը

11

ԳԼՈՒԽ Գ.

Ընդհանուր Ժողով ՄԵծ Արևելից

13

ՊՐԱԿ ԶՈՐՐՈՐԴ

Արտաքին յարաքերութիւնք

16

ՊՐԱԿ ՀԻՆԴԵՐՈՐԴ

Լրացուցիչ յօդուած

16

* Այս գլուխը տպագրական սխալմամբ Ա. դրուած է վոռ
լսանակ Գ.ի:

ՕՐԵՆՔ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՔ

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

ԵՐԵ-

ԳԼՈՒԽ Ա.

Առմագրական ընկերութիւնք	21
-------------------------	----

ԳԼՈՒԽ Բ.

Խւրաքանչիւր Արևելից մէջ Գործարանաց թուոյն որոշումն	23
Կազմութիւն Օթեակաց	24
Հաստատութիւն Օթեակաց	26
Հաստատութիւն Ճողովարանաց	30
Հաստատութիւն Խորհրդարանաց	32
Քնդկանուր արամագրութիւնք այլև այլ աստիճանի գործարանաց համար	34

ԳԼՈՒԽ Գ.

Սպայք Օթեակաց	35
Մեծարոյ	36
Դէսք	38
Առենախօս	38
Քարտուղար	40
Մարդիչք	40
Արարողապետ	41
Ճարտարապետ	42
Հաշուակալք և Պատասխանատու պաշտօնակալք	42
Սպայք Ճողովարանաց	44
Սպայք Խորհրդարանաց	44
Սպասաւոր եղբայր	45
Անմիասնականութիւն պաշտամոնց	46

ԳԼՈՒԽ Դ.

Գործարանաց մէջ ընտրութեանց ժամանակն ու եղանակն	46
Սպայռութեանց ընտրող և ընտրելի ըլլալու իրաւունք	48

ԵՐԿ

Հաստատութիւն Սպայից	50
Պաշտամանց սլարապութիւն	54

ԳԼՈՒԽ Ե.

Գործարանաց դահերէցներուն Մեծ Արևելքէն ճանչուիլն	54
---	----

ԳԼՈՒԽ Զ.

Յարաբերութիւնք Գործարանաց Մեծ Արևելից հետ	53
Գործարանաց ներկայացնելիք տարեկան պատկերներն և ջնջման ցուցակներն	55
Վկայագիր, կոնդակ, Արաօնագիր, ևայլն	56
Տեսչութիւն Գործարանաց	58
Յարաբերութիւնք Գործարանաց ընդմիմեանս	59
Հաւաքական որդեգրութիւնք	59

ԳԼՈՒԽ Է.

Յարաբերութիւնք Գործարանաց ուրիշ որ և է իցէ արտաքին իշխանութեանց հետ	60
---	----

ԳԼՈՒԽ Ը.

Պարտաւորեալ նիստեր և կարգ աշխատութեանց	61
Վեցամսեայ և տարեկան խօսք	65
Այցելուք	66

ԳԼՈՒԽ Թ.

Կանոնք Ներածման	68
Աստիճանատութիւնն	71
Որդեգրութիւնք և անհամական կանոնաւորմունք	74
Թոշակի յաւելման վերաբերեալ կանոնական գործողութիւնք	74

ԳԼՈՒԽ Ժ.

Հրաժարմունք և արձակուրդք	77
--------------------------	----

ԳԼՈՒԽ ԺԱ.

Աշխատութեանց դադարում և վերսկում	78
----------------------------------	----

ԳԼՈՒԽ ԺԲ.

Տօնք ուխտին և կոչունք	81
Դամբանահանդէսք	83
Պատիւք և գահերիցութիւնք որմառդրականք	84

ԳԼՈՒԽ ԺԳ.

Պատճառք անկանոնութեան գործարանաց	86
Միջոցք կանոնաւորման գործարանաց	87

ԳՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ.

ԳԼՈՒԽ Ա.

Կանոնաւոր և գործօն Որմանդիր ըլլալու համար պէտք եղած պայմանք	88
Որմանդրաց վերաբերեալ անկանոնութեան պատճառք	90

ԳՐԱԿ ԵՐՐՈՐԴ.

ԳԼՈՒԽ Ա.

Մեծ Արևելք Գաղղիոյ	93
Գաղղիոյ Մեծ Արևելից Ընդհանուր ժողովոյ նիստերն Երեսփոխանք Ընդհանուր ժողովոյ մէջ	94
Սպայք և իրենց պաշտօնն	97
Կնք և զրոշմ և կնքապահ Մեծ Արևելից	98
Տօնք Ուխտին և դամբանահանդէսք Մեծ Արևելից	100
	101

ԳԼՈՒԽ Բ.

Միսից Մեծ ժողովոյ կազմութիւն	103
Միսից Մեծ ժողովոյ սպայք	105
Նոր ծիսից ընդունելութեան խնդրանք	106
Միսից յաւելման խնդրանք	108

ՊՐԱԿ ԶՈՐՌՈՐԴ

ԵՐԵ

ԳԼՈՒԽ Ա.

Որմնագրական հրատարակութիւնք

110

ԳԼՈՒԽ Բ.

Որմնագրական վարձատրութեանց բնութիւն

111

Վարձատրութիւն խնդրելու վերաբերեալ ձեւականն
կանոնք

112

Վարձատրութեանց բաշխման եղանակ

114

ԳԼՈՒԽ Գ.*

Որմնագրական նպաստ

116

Օգնութեան ջուն

119

ԳԼՈՒԽ Դ.

Պաշտօնական օրագիր Մեծ Արևելից

124

ՊՐԱԿ ՀԻՆԴԵՐՈՐԴ

ՄԻԱԿ ԳԼՈՒԽ

Որմնագրական տարեցոյց

124

Ընդհանուր կանոնաց օրինակներն

124

Աստիճանաց տետրակի հաւաքածոյք

125

Տուչութիւն վկայագրոց

126

Օրինակք ցուցակաց և վկայագիր խնդրանաց

126

ՊՐԱԿ ՎԵՅՑԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Մեծ Արևելից անդամոց ձքանշաններն

127

Գործարանաց մէջ գործ ածուած ուրարք

128

Մեծ Արևելից վկայականներէն ձքանշաններէն և ու-

րարներէն ուրիշ վկայական ձքանշան և ուրարք կրելու

վերաբերեալ յօդուածք

129

* Այս գլուխը տպագրական սխալմամբ թ. եղած է գու-
խանակ Գ.ի.

ԳԼՈՒԽ Բ.

Քարտուղարութիւն ՄԵԺ ԱՐԱԿՈՋ

131

ՊՐԱԿ ԵԶԾՆԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

ԱԽ և այլ հանգանակութիւնք Գործարանաց մէջ

133

ԳԼՈՒԽ Բ.

ՄԵԺ ԱՐԱԿՈՋ վճարելի տուրք

135

ԳԼՈՒԽ Գ.

Տուրք—Գործարանաց կազմութեան համար

137

Հերօսոմի Սկզբանան ծխի համար

137

Սկզբանան հին և ընդունուած ծխի համար

138

Ծիսից յաւելման համար

138

Փոխանորդութեանց համար

138

ԳԼՈՒԽ Դ.

Որմանդրական Տիտղոսագրոց գիներն

139

ԳԼՈՒԽ Ե.

Քաղաքային ընկերութեան հաշուոյն համար ՄԵԺ ԱՐԱ-

ԿՈՋ հաւաքած տուրքերն

440

Օդնութեան տան հաշուոյն համար

440

ԴԱՏԱՑԱՆԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Զացումն վճարման

142

Ախալմունք և յանցանք Որմանդրականք

143

Մասնախօրհուրդ քննութեան

145

Դատաստան

148

Պիտու

Առօսկ Ակպոյաննեան
Չափակ — Մարտիկ



977







